2114

84
4-74

513

БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в срок, чтобы и другие могли воспользоваться ею.

2011

1883

3584

2003

ՊՈԼԻԿՏՈՍ

ՎԿԱՅ ՀԱՅԿԱԶՆ

ՊԵՏ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Пуб. Библиотека
ՀՍՍՀ-СССР А.
Մասնաճյուղ
Ս. Ամ. Մասնաճյուղ

84
Կ-74
82
86
122
Ա γ

ՊՈԼԻԿՏՈՍ

ՎԿԱՅ ՀԱՅԿԱԶՆ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Պ. ԳՈՌՆԷՅԼԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

№2283.

Հ. Գ. Վ. Հ.

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
1873

1 ро

410
ՀԱՅ. ՀԱՆՐԱՊԵՏ ... ՊՏԲ. ԲԻՈ...
ՀԱՅԿ-ՍՍՌ
279
41

ԶԵԿՈՒՅՈՒՄՆ

Զ Պոլիկտոսի հայկազնոյ նահատակութեան զողբերգակ հանդէս, որ՝ ի հրաշագունիցն է Ճարտարահիւս ողբերգութեանց Պ. Գոռնէյլի, նա՝ համօրէն իսկ գալիացւոց Թատրերգութեանց, կամեցեալ հայրենի բարբառով ընծայել համազգեաց, զարմացցի ոք արդեօք զի ոչ հնարէ վարիցիմք՝ ի սմա նախնեաց մերոց տաղաչափութեան օրինօք, որ աղատութեամբ անզուգավանկ անգամոց եւ անձայնայանգ տողիցն աւարտմամբ յոյժ մերձաւորագոյն է եւ պատշաճող Թատերական ընտանի եւ բնական զրուցատրութեան։ Սակայն գիտասցէ՝ զի ոչնոր ինչ լեալ է Թարգմանութիւնս, այլ ամենայն՝ մինչ չեւ եւս՝ ի ձայն բարբառոյ եւ՝ ի գրիչ Ճարտար՝ քաջի Ֆերթողին վերկենցաղեալ էր հինն այն տաղաչափութիւն նախնեաց, զոր եւ մեք խոստովանիմք պատշաճագոյն Թատերական զրուցատրութեան։ Այլ զի դամ մի աշխատասիրեալ էր այս նմանագոյն իմն անփոփոխ եւ յանգաւոր չափոց բնագրին, ոչ յոյժ տարագէպ Թուեցաւ մեզ անփոփոխ՝ որպէս էրն՝ տալ զայն՝ ի լոյս, յուսացեալ զի եւ այս տգդ տաղաչափութեան ոչ՝ ի սպառ դժուարալուր եւ անհերելի Թուեսցի Թատերական վսեմախօսութեան, որ զի եւ եղանակաւորն իսկ զրուցատրութիւն՝ յաճախեալ՝ ի Թատերս ժամանակիս՝ ոչ հերելի միայն Թուի, այլ եւ ախորժալուր։

ՊԱՏՃԱՌՔ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆՆ

Պոլիկարպոս վկայ հայկազն եկաց 'ի Մելիտենէ քաղաք Փաքուն Հայոց զմիջոցաւ Եփրատայ գաւառն առ ինքնակալութեամբ Դեկիոսի կայսեր։ Եւ զի յաւագ զարմէ էր եւ իշխանութեամբ եւս պատուական, փեսայացաւ Փիլիպոսի կուսակալին հռոմայեցւոց, որ 'ի Դեկիոսէ յղեալ էր անդր բուռն հրամանաւ հալածելոյ զքրիստոնեայս։ Եւ էր Պոլիկարպոսի մտերիմ բարեկամ Նեարխոն ոմն 'ի քրիստոնէից, յորմէ ուսեալ Պոլիկարպոս ընկալաւ զքրիստոսական հաւատսն. եւ խրախուսեալ 'ի նմանէ՝ պատառեաց յատենի զհրովարտակ ինքնակալին վասն հալածելոյ զքրիստոնեայս. եւ 'ի հանդիպիսի յափշտակեալ զդրօշեալսն 'ի ձեռաց կրելեացն, որք բարձեալ բերէին զայնոսիկ զնաեղէ 'ի բազինս յերկրաստագուութիւն, զդեանեաց եւ մանրեաց զնոսա։ Եւ անդրադառնալն արիութեամբ զդէմ կալեալ թախանձանաց եւ արտասուաց կնոջ իւրոյ Պաւլինեայ, յոյր ձեռն հնարէր Փիլիպս շրջել զնա 'ի քրիստոսական հաւատոցն, հրամանաւ Նորին իսկ աներոյ իւրոյ Փիլիպսի կատարեցաւ վկայական մահուամբ։

Այս իսկապէս վէպք են նահատակութեան Պոլիկարպոսի, որպէս եւ Յայսմաւուրք մեր աւանդեն. իսկ այլն ամենայն յարակից դէպք եւ հանդամանք՝ յաւելեալք յողբերգութեան՝ գիւաք են հանճարոյ ճարտար քերթողին 'ի գեղազարդել զայն՝ անփոխոս զճշմարտութիւնն պահելով։

ԱՆՁԻՆՔ

ՓԵԼԻՔՍ	Յատենակալաց Հռոմայեցւոց, կուսակալ՝ ի Հայս։
ՊՈԼԻԿՏՈՍ	Իշխան Հայկազն, փեսայ Փելիքսի։
ՍԵՒԵՐՈՍ	Ասպետ Հռոմայեցի, սիրեցեալ յինքնակալէն։
ՆԷԱՐԽՈՆ	Իշխան Հայկազն, բարեկամ Պոլիկտոսի։
ՊԱՒԼԻՆԷ	Դուստր Փելիքսի, հարսնացեալ Պոլիկտոսի։
ՍՏՐԱՏՈՆԻԿԷ	Մտերիմ Պաւլինեայ։
ԱԼԲԻՆՈՍ	Մտերիմ Փելիքսի։
ՓԱԲԻԱՆՈՍ	Պաշտօնեայ Սեւերոսի։
ԿԼԷՈՎՆ	Պաշտօնեայ Փելիքսի։

ԶՕՐԱԿԱՆՔ ԵՐԵՔ

Տեսարանն է՝ ի Մելիտինէ Փոքրուն Հայոց։
յապարանս Փելիքսի։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՅԿ-ССР Ա.
Ալ. Ա. Մասիսյան

Ն.Ա.Ջ. 12.

P. CORNEILLE. Պ. ԳՈՌՆԷՅԼ.

ՊՈԼԻԿՏՈՍ

ՀԱՆԴԷՍ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԻԼ Ա.

ՊՈԼԻԿՏՈՍ, ՆԷԱՐԽՈՆ

ՆԷԱՐԽՈՆ

Հաւատարիմ քեզ Թըւիցին, աղէ, երազք կանացի,
Եւ չընչենոց ահիւ վեհացն ոգիդ նըկունն եղիցի.
Սիրտ որ ընդ փորձ անց անսասան բազմահանդէս մըրցանաց,
Զարհուրիցի՞ արդ 'ի վտանգէն զոր կին 'ի ցնորս երազեաց։

ՊՈԼԻԿՏՈՍ

Գիտեմ՝ քաջ զինչ երազքն իցեն, եւ որ նոցայն զօրութիւն.
Գիտեմ եւ զոր հաւատս արժան իցէ մարդոյ տալ նոցուն։
Ի գոլըշեաց գիշերայնոց 'ի խառն 'ի խուռն յուզմանէ
Սին երեւոյթք են պատկերեալք, զորս արթնութիւն եղծանէ։
Այլ անծանօթ է քեզ, գիտեմ, Թէ բնաւ իսկ զինչ իցէ կին,
Եւ Թէ զիարդ ամենազօր դրաւէ ըզսիրտ ըզծակցին,
Յետ նախընծայ զիւրոյ սիրոյ արկանելոյ 'ի մեզ խանձ,
Հարսանեկանքն երբ ըլացանին ջահքն 'ի բորբոք անդրադարձ։
Զուր վայրապար տրխուր 'ի ցաւոս համակեալ Պաւլինէ,
Կայ յերկիւղն, զիս յերազեալն իւր մտան 'ի մահ տեսանէ.
Առաջարկեալ գործոյս խափան ինձ զարտասուս իւր հեղու,
Եւ զիս արտաքս յայսպարանից իսկ ելանել արգելու։
Ծաղրը զահիւն իւր արարեալ, այլ արտասուացն ոչ ժուժամ.
Դրթամ 'ի նա կարեկցաբար, այլ անխըռով յանձն կամ.
Եւ սիրտ յուզեալ յիս 'ի գորով, Թէպէտ անխառն յերկիւղէ,
Ոչ հանդուրժէ զոլ անհաճոյ աչաց յորոց զերեալն է։
ՄինԹէ անդէպ, ով Նէարխոն, մեզ կարճատի ժամանակ,

Մինչեւ ապախտ ըզսիրուհւոյն առնել զողորմ աղաղակ.
Այլում պահու կացցէ մեզ գործդ որ այժմ ընդա տագնապէ,
Որ ինչ այսօր առնելն է մեզ՝ նոյն եւ վաղիւն իսկ մարթէ։

ՆԷԱՐԽՈՆ

Այլ գիսիցեն դու անեարկլայ, վաստահիցին դու այդքան
Ընդ երկարել կենացըդ քոց, կամ՝ կալ եւ մնալ անսասան։
Եւ որ ըզմիւս եւ զչափ 'ի բանն ունի զաւուրց քոց Աստուած,
Ըզվաղորդայն քեզ խոստացան տալ ըստ քոյոցդ ըզձանաց։
Միշտ իսկ արդար է նա եւ միշտ իսկ բարերար. այլ ընորհք իւր
Ոչ միշտ նովին ազդեցութեամբ տեղան 'ի մեզ համասփիւռ.
Ի կորընչել պատեհ ժամուն առ հեղգութեանքս մերոյ,
Ոչ եւս 'ի սայր աստուածամուխ թափանց 'ի սիրա դոն ազգոյ.
Խըստանայ սիրտ մեր, ընկիցեն ընորհին ու 'ի բաց զայն մերժէ.
Այլ որ տեղայրն առատաձիր՝ ճըշդէ զզարգեւան յայնմ հեռէ.
Եւ որ բարոյն է թելադիր եռանդն այն սուրբ 'ի յորդոր,
Ոչ եւս 'ի մեզ արծարծանի, բոց առկայծեալ եւ անզօր։
Ահա եռանդն որ տայր քեզ ճեպ անձկաւ 'ի սուրբ աւազան
Այրդ թուլացեալ՝ ոչ եւս 'ի քեզ ազդէ 'ի նոյն յայն պայման.
Ի մեղկաղէտ ձայն հառաչմանց ինչ հընչելոց քեզ 'ի լուր,
Գեղափայլ բոցն այն արդ շիջեալ եւ նիրհէ սուրբն 'ի քեզ հուր։

ՊՈԼԻԿՏՈՍ

Քեզ անձանօթ գոյ Պոլիկտոս. յեռանդն 'ի նոյն վառիմ ես,
Եւ ըստ յամեալ արդեանց իրացն՝ իղձք յաւելուն մեծապէս.
Շիթք արտասուաց յորս ակնարկեմ՝ 'ի հարանաբերքն գորով
Ինձ չարգելուն հանդուգնատիպ քեզ քրիստոնեայ գոլ հոգւով.
Այլ 'ի զնորին յանձն ընդունել կընիք լուսոյ սըրբութեան,
Որ զեղեռանց մերոց ըզկեղտ լուանայ 'ի ջուր փրկական,
Եւ փարատեալ զաչաց ըզմէգ, սըրբեալ զոգիս մեր անբիծ,
Տայ վերըստին մեզ զիրաւունս ժառանգաւոր գոլ երկնից,
Գանձ պատուական ինձ վերհագոյն քան զմեծագոր պետութիւն,
Յայր միայնոյ անձկամ 'ի տենչ իրր 'ի բարեաց գերագոյն,
Ինձ զբժպատեհ ինչ ոչ թըսի՝ յամեալ միով թէ աւուրբ,
Վաղիւ պատարաստք ելցեմք յարդիւնս ըզնոյն ածել զնշանս սուրբ։

ՆԷԱՐԽՈՆ

Այդպէս պատրէ զքեզ սխալիւն ազգի մարդկան թըշնամի.
Եւ զոր ուժգին չկարէ առնել, նենգաւ ընդոյն հընարի.
Բարեաց ընաւից չարանախանձ՝ աղարտել զայնքս կանայ.
Եւ եթէ յայն չէ ձեռընհաս, բարոյն յետոկոյս մրցօն տայ.

Յաւելու խոչ 'ի խոչ եւ խառով 'ի լուսն ընձիցդ արկանէ,
Աչքսոր զարտասր, այլ ինչ վաղիւ ճարտարեալ օր ըստ օրէ.
Նա եւ զերազ անդոհական մահաշրջուկ արհաւրաց
Ի Նախասկիզբն չարանենդ դաւոյն 'ի փորձ առեալ աճ:
Նա զամենայն վարէ 'ի գործ զնապառնալիս եւ զաղերս,
Դիմամարտի, մրբցի անխոնջ 'ի տալ հարուածս եւ ըզվէրս.
Ուր դամագիւտ չեղեւ կանուխ՝ յուսոյ լինել 'ի վերջ.
Եւ զյաղագեալսն գործ եղծեալ համարի նա ըստ մասնէ:
Հան զու զնախկի հարուածն 'ի զուր. թող արտասուել Պաւլինեայ.
Զէ Բարձրելոյն չէ իսկ ճաճոյ սիրա, ում աշխարհ տիրանայ,
Որ զկայ առեալ հայի յեսոկոյս, որ դեղեւեալ երկրայի
Տիրահրաւէր ձայնին 'ի կոչ, այլուսմ անսայ նա ձայնի:

ՊՈԼԻԿՏՈՍ

Աստուածանուէր ուրեմն անձին չիցէ՞ օրէն զոք սիրել:

ՆԷԱՐԽՈՆ

Սիրել օրէն է զամենայն, զայդ եւս հրաման, զայդ չարգել.
Բայց համառօտ քեզ ասացից. ամենատերքն տերանց
Դէր 'ի վերոյ խընդրէ իւր սէր, խընդրէ պատիւ գերազանց.
Որ զի եւ չիք ինչ զուգակից գերազոյին մեծութեան,
Ի վայր քան զինքն եւ բնաւ 'ի նմա սիրել պարտիմք զամենայն.
Ի սէր նորա արհամարհել ըզկին, ըզզոյս եւ ըզմեզ,
Տալ 'ի վերայ փառաց նորա զանձն եւ զարիւն ըսվանդակ:
Սակայն քանի հեռի 'ի քէն սէր այդպիսի ըսոյտառ,
Որ կարեւորն է քեզ, զոր քեզ մաղթեմ անեղուլ անեղադար:
Քեզ զայսոսիկ առ զուտ սրբոյն խօսիմ արտասր 'ի յական.
Տես, Պոլիկոտ, զնարդ ըզմեզ ատեայ աշխարհ ամենայն.
Որ հալածէն ըզմեզ՝ առնէ առ Պետուութեան իւր վաստակ.
Իսկ քրիստոնեայն կայ խուժադուժքն տանջանաց նըշաւակ.
Եւ զու զիարդ այնքան ցաւոց տոկալ 'ի սպառ կարասցես,
Եթէ այժմէն ժոյժ արտասուաց եւեթի ունել ոչ զօրես:

ՊՈԼԻԿՏՈՍ

Ոչ ինչ ընդ բանսրդ զարմանամ. որ զնոսն ընկճէ զուտ սիրոյն
Վեհապանուն իսկ ըբռնացեալ 'ի սիրտ եւ չէ վաստութիւն.
Սա նըմանիսն իմ է հրզօր ժոյժ զոշոսիչ գեղ աչաց,
Զոր երկրնչի ցասուցանել քան 'ի մահուն արհաւրաց:
Եւ հանդուրժել թէ պէտք իցեն ինձ 'ի տանջանս անընդել,
Աստուածքն ձեր, որ զի չիշնեմ գեռ եւս Աստուած իմ կոչել,
Ի տալ ինձ կնիք՝ ասցէ նոյն ինքն ինձ եւ ըզնորհքս նորուն,
Կրել կամակար սիրով ըզվիշտ, եւ զգալ բերկրանս իսկ 'ի նոյն:

ՆԷԱՐԽՈՆ

Փուրթա ապա ընդունել զայն։

ՊՈԼԻԿՏՈՍ

Այո, փուրթամ, Նէարխոն,
Վառեալ 'ի տենչ ընդունելոյ ըզպերճ դերոշն ըզպատուոյն։
Այլ 'ի յանուրջսըն մահագոյժ ահաբեկեալ Պաւլինէ,
Կայ 'ի տաքնալ եւ ելանել ինձ արգելու 'ի տանէ։

ՆԷԱՐԽՈՆ

Յայսրէն դարձին քում առաւել ցընծացայ սիրա Պաւլինեայ.
Թէ անագան՝ ժամաւ ըզկնի ջընջեաս զարտասրը նորա.
Բատ դառնութեան ցաւոցն 'ի լալ ըզսիրատարին ամուսին,
Քաղցրացի ժամին ցանկալի տեսոյ նորա վերըստին։
Օ՜ն երթիցուք, մեզ ըսպասեն։

ՊՈԼԻԿՏՈՍ

Ջերկիւղ նորին փարատեա,
Եւ սփոփեացիր ըզվիշտ սըրտին յորմէ ընկճեալ թալկանայ։
Ահա նա ինքըն գայ։

ՆԷԱՐԽՈՆ

Խոյս տուր.

ՊՈԼԻԿՏՈՍ

Ո՜հ, ոչ կարեմ։

ՆԷԱՐԽՈՆ

Այլ հարկ է։
Փուրթա խուսել 'ի թըշնամւոյ, որ իւ պարտիսըն գիտէ,
Եւ յայլոցն հեշտեաւ 'ի նոցն աչքն 'ի քեզ մահացան.
Հարուածք նոցին օրհասարերք եւ 'ի մահուդ քաղցրանան։

ՏԵՍԻԼ Բ.

ՊՈԼԻԿՏՈՍ, ՆԷԱՐԽՈՆ, ՊԱՒԼԻՆԷ, ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

ՊՈԼԻԿՏՈՍ

Խոյս տամ, այդպէս թէ հարկ իցէ։ Բարեաւ մընա, Պաւլինէ,
Բարեաւ մընա, թէ անագան՝ դարձայց այսրէն 'ի ժամէ։

ՊԱՒԼԻՆԷ

Զինչ, աղէ, հարկդ այդ բրռնաւոր զի խուսափես դու հապճեպ.
Թէ համբաւոյ, կամ թէ կենաց իցէ արկած չարադէպ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Մեծ ինչ եւ մեծ քան զայդոսիկ։

ՊԱՒԼԻՆԷ

Եւ զինչ դաղտնիքդ այդ իցէ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Քեզ լուսասցին յաւուր միում. Ցանր ինձ մեկնիլ արդ 'ի քէն,
Այլ հարկ 'ի գոյն զիս ըստիպէ։

ՊԱՒԼԻՆԷ

Սիրիցես զիս։

ՊՈԼԻԿՏՈՍ

Յոյժ սիրեմ,
Գեր 'ի վերոյ եւ քան զանձն իմ, զերկինս վըկայ քեզ կոչեմ.
Սակայն...

ՊԱՒԼԻՆԷ

Սակայն անկարեկիր՝ ոչ ինչ ընդ վիշտս իմ հոգաս.
Դաղտնիք են քո պահեստ անձին, զոր եւ յինէն դողնաս.
Ա՞յդ իցէ սէր. երդմնեցուցեալ ըզքեզ 'ի մեր հարսանիս,
Զայս եւ եթէ օր ընդհանա առանց հառաչանաց, խնայեա յիս։

ՊՈԼԻԿՏՈՍ

Քեզ արհաւիրս աղդէ երաղ։

ՊԱՒԼԻՆԷ

Գուշակ է նա զիւրաքանչ
Գիտեմ, այս, սակայն առ դուք սիրոյ քո կամ՝ի տարնալ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Եւ զինչ վասանդ քեզ երկիւղի յելեցս ասսել ընդ մի ժամ։
Բարեաւ մընա, արտասր աչացդ ազդեն յիս դամ՝քան ըզդամ.
Մ՝որմանի սիրտ իմ աւասկ եղեալ յինեն ապրատամբ,
Եւ ոչ կարեմ յաղթել նըմին, բայց ճոռոգրեալ փախըստեամբ։

ՏԵՍԻԼ Գ.

ՊԱՒԼԻՆԷ, ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

ՊԱՒԼԻՆԷ

Արհամարհոտ դու արտասուաց իմոց, փուրթա զիմագրաւ
Մ՝ահուն՝ի վասանդ, զոր դիք ցուցին գուշակօրէն ինձ կանխաւ,
Այնմ՝որ առեալ բերէ օրհաս քեզ դըժընդակ՝ երթ ըզհետ,
Մ՝ինչեւ՝ի ձեռս իսկ սատակեսցէ զքեզ ետ ընդ ետ։
Տես դու ինձ, իմըս Ստրատոնիկ, տես յոր աւուրս եմք հասեալ.
Այս աւասկ մերս՝ի վերայ արանց մերոց տիրանալ.
Այս մընացորդ են ու արդասիք, ըստ հասարակ օրինի,
Հարսանեկան դաշանցն ընդ մեզ, սիրոյն որ մեզ չըռայլի։
Յորչափ սիրոդք են տարփածուք՝ սըրտից նոցա եմք իշխան,
Իբր ըզդըշխոյս պաշտեն ըզմեզ մինչ չեւ եղեալ յաղթական.
Այլ հարսանեացն ըզհետ դառնան նոքա լինին մեզ արքայ։

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Պոլիկտոսի սէրն անհիաղ առ քեզ՝ի նոյն պայման կայ.
Խուն մի առ ժամն եթէ թուեցար նա անվըստահ դոլ՝ի քեզ,
Թէ արտասուացդ եկայ անլուր՝ խնասուրթեանն էր հանդէս.
Մի դու ընդ այն լեալ դըժկամակ, խորհեա ընդ իս դու ըզնոյն
Զի նմա արժան էր ըզվասն էրն՝ի քէն ծածկել ըզձեզոյն.
Եւ զի ստուգիւ հարկ էր նըմա՝ լեր դու՝ի բանսըն վըստահ։
Թաքուստ երբեմն ունել՝ի մինչ օրէն արանց է եւ ճահ,
Եւ ինքնօրէն գործել ազատ, մի՝ նուաստանալ մինչ ցայնվայր
Թայլափոխից իւրաքանչիւր ճըշդիւ տալոյ մեզ համար։
Մի երկոցունցդ է սիրտ, այս, համակարգիք իրերաց,

Սակայն մոյ մոյ ազգմունք են ինքնուրոյն պաշտամանց.
Հարսանեկան դաշն որ ըզձեզ յանձուկ 'ի զոդ կըցորդէ,
Ոչ եւ Ներմա ազդէ երկիւղ 'ի քում սարսեալդ յերկիւղէ.
Որ զքեզ ունին ահ եւ դողումն, ոչ ներգործեն ինչ 'ի նա,
Գոլով Հայկազն ինքն 'ի տոհմէ, իսկ դու ազգաւ 'ի Հռոմայ:
Ոչ ինչ զանխուլ կարծեմ 'ի քէն զի ոչ ազդեն զուգակիրք
Յերկաքանչիւր 'ի մեր ազինս 'ի քեզ կըրեալն արհաւիրք.
Անըրջականքդ առ մեզ երազք ծաղուն են իրք համարեալ,
Զիք երկընչել յայնց կամ խըղճել եւ ոչ բարւոյ ինչ յուսալ.
Սակայն 'ի Հռոմ իրք հաստատուն վերհից պատգամ համարի
Որպէս բաշխից հանդերձելոց հաւատարիմ հայելի:

ՊԱՒԼԻՆԷ

Թէպէտ խոտեալ առ ձեզ երազք ոչ ունիցին զօրութիւն,
Այլ թէ պատմել եւեթ առից քեզ զոր տեսի ես 'ի քուն
Զահեղ սոսկումն եւ զարհաւիրս, քըստմունք 'ի քեզ ընթացեալ
Զերկիւղ ըզնոյն, ոչ երկբայիմ, կրեսցես դու ինձ հաւատար:

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Վըստացելումն ածէ սփոփանս յաճախ զիւր վիշտսն պատմել:

ՊԱՒԼԻՆԷ

Լուր դու ապա. բայց է եւ այլ ինչ կարեւոր քեզ գիտել.
Զի համարէն դու 'ի վերայ կացցես վիպացրս տըխուր,
Տըկարութիւն զմ'երկացայց եւ զնախընծայ սիրոյս հուր:
Զէ ինչ եւ չէ ամօթ կընոջ լաւի լինել խոստովան
Զըզգայութեանց իւրոց պատարանս, ոյց լեալ բանիւն յաղթական.
Ի կռիւ 'ի վէգ գալ ընդ նոսին առաքինւոյն է հանդէս,
Զիք վըստահել 'ի սիրտ անսիրտ ոյր չիք եղեալ յասպարէս:
Ի Հռոմ քաղաքն իմ անդ 'ի ընիկ ոմն յաստղեատաց, ահ, Սեւեր,
(Սակայն դու մի ըզհառաչանս իմ զայս գրեսցես ինձ յեպեր,
Որ ցանկալւոյ անուանն 'ի յուշ ազդի երբեմնն դեռ յիս),
Արիականքն քաջութեամբ զիս 'ի սիրոյն արկ սարիս:

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Թերեւս արդեօք ոչն որ յառաջ քան զայս աւուրքք ինչ սակաւ
Զերծ յոսոխացն զինքնակալ ձեր ըզՊեկոս դիմագրաւ,
Եւ որ մահուամն իւրով կորզեալ 'ի նոցանէ զյաղթանակ
Դարձոյց 'ի Հռոմ կոյս ըզՊարսից բազդին նըսեհ յաջողակ:
Ոյր եւ 'ի խան անդ անկելոց տեառնն իւրեանց ձօն 'ի սպանդ
Զըզտաւ դիակն ուրեք, կամ գէթ ոչ ոք ծանեաւ ըզնա անդ.

Եւ ումԴեկոս ապա 'ի շնորհըս գեղեցիկն արուեստն
Կառոյց շիրիմ՝ առ 'ի մարմնոյն ունայն՝ յաւերժ 'ի յարձան:

ՊԱՒԼԻՆԷ

Նոյն ինքն, այո. հանգոյն նըմին չեկաց 'ի Հռոմ՝ոք երբէք
Վէհանձն 'ի սիրտ. չիք լաւութեամբ մեծ քան ըզնա լեալ ուրեք:
Եւ զի ինքնին ծանօթ է քեզ, ոչ յաւելից ինչ ասել:
Զնա սիրեի, Սարատոնիկէ. զի արժանի սիրոյ էր:
Բայց լաւութիւն ըզկ զ'նչ օգտե անբաժ բաղդին 'ի բաշխից.
Մ'իսկն ճոխ էր նա, այլ նուաստ միւսոնն եւ զուրկ 'ի գոյից.
Կընճռիւն անլոյծ, դըժուարայաղթ եւ մեծազօր խոչ առ հօր,
Ում դըժուարաւ յոյժ թէ յաղթէ առաքինի տարփաւոր:

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Բարեպատեհ դեպք 'ի հանդէս հաւատարիմ պընդութեան:

ՊԱՒԼԻՆԷ

Նա՝ առ 'ի ցոյց, գոգջիր, յամառ եւ դըժպատեհ շամբշութեան:
Որ ինչ անտի ակընկալեալ բարեաց օճան է դըստեր,
Առաքինւոյ չիցե արժան, թէ ինքնախաբ չէ առ սեր:
Անդ 'ի տարփանն իմ առ Սեւեր, որ յիսն ուժգին բըռնանայր,
Ի հայրենի ոնայի ձեռաց առնուլ փեսայ զոր ինձ տայր.
Պատրաստ կամայն 'ի հնազանդել. զի ոչ երբէք անձնատուր
Բանն 'ի պատրանըս ցանկութեան անսայր աչացս 'ի հրապոյր:
Սիրոյ սըրտիս եւ խորհըրդոցս իշխեր նա ինքըն Սեւեր,
Եւ հոլանի էր առ նըմա հոգւոյս իմ խոց կարեվէր.
Զարտօսր յարտօսր հառաչախառն հեղեալ զաղէտ մեր լայաք,
Բայց հեծութիւն անմխիթար՝ նըմին յուսոյ փոխանակ.
Եւ փոխադարձ մեզ յուսադիր հառաչանաց ձայնք ողբք
Ոչ զօրեցին զհայրս ամոքել, ոչ եւ զպարտուցս իմ բողբք:
Թողի ապա ես ըզ Հըռոմ եւ զսէր սըրտիս կաթոգին,
Հօրն իմ ըզհետ այսր 'ի գաւառ իշանութեան գալ նորին.
Ինքն յուսահատ զայրոյթ 'ի սիրտ դիմեաց զօրուն 'ի ճամբաւր,
Աբիական շըքեղ մահուամբ առնել անուն մեծափառ:
Այլն ամենայն ծանօթ է քեզ: Ի գալ մերում յայս աշխարհ
Տեսի զՊոլիկտ ասա, եւ չեղէ յաչըս նորին արհամարհ.
Եւ վեհագոյն զի էր նա ինքն յաւագարեար աշխարհիս,
Իղձք եղեն հօրն իմում նըմա 'ի տիկնութիւն առթիլ զիս.
Ի խնամութեան նորա հաստել կարծելով զիւր զօրութիւն,
Պատկառելի գոլ աշխարհին եւ յաւելուլ զաՀն եւ զՀոյն,
Պատրսպարան եկաց սիրոյն եւ զհարսանիսքն կընքեաց:

Իմ վիճակեալ նրմա կրցորդ առագաստին հարսանեաց,
Առ սեր նորա նրբիրեցի զայն ամենայն ըստ պարտուց,
Զոր ինչ միւսումն յօժարութիւն սիրոյ 'ի բնէ տայր 'ի ցոյց։
Թէ հաւաստիս խընդրես բանիցս՝ աղէ յերկիւղ իմ հայեաց,
Յոր ապնապի սիրտ իմ հարեալ չարի աւուրս 'ի կասկած։

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Տաղնապդ այդ շատ իսկ ըզքոյին սէր առ Պոլիկտ առնէ յայտ։
Սակայն զինչ այն երազքդ իցեն որ զարհաւիրս ածեն զոյդ։

ՊԱՒԼԻՆԷ

Տեսի յանուրջս 'ի գիշերիս ըզհէգն առ իս Սեւերոս.
Կայր վրիժաբեր բազկաւ 'ի սաստ, աչք բարկացայտ եւ հրահոս.
Զոներ զանձամբ ըզկըտաւին զայն մահազգեստ ձիգ երկայն,
Զոր ուրուականքն ըստուերք թախիծք յելս 'ի շիրմոց առեալ գան.
Եւ ոչ իրանն էր վիրալից 'ի փառաւոր հարուածոց,
Որ զրաւ կենացն ածեալ՝ յանմահ զինքն յիշատակ տան յետնոց։
Թուէր նա փառօք իբր յաղթական 'ի կառս եղեալ վերամբարձ
Զերթ ինքնակալ մեր մեծայաղթ փառօք 'ի Հռոմ առնէ դարձ։
Այն ինչ կայի ես ընդ տեսիլն պակուցեալ ահաւոր,
Դուշեաց առ իս. « Որ ինձն էր անկ՝ ըզսիրտ քո, ով ապաշնորհ,
« Տուր ումեւ կամք իցեն · այլ օրս այն ինչ հասեալ յերեկոյ,
« Զոր ընտրեցերըդ զեր քան զիս՝ իցէ քեզ ժամ ողբալոյ »։
Սարսուռ յոսկերս 'ի լուր բանիցն եւ խռով 'ի սիրտ իմ անկաւ.
Քրիստոնէից ապա անգութ մատուցեալ գրոհ անիրաւ,
Ի կատարումն մահագոյժ բանիցն 'ի գլուխ արգասեաց՝
ԸզՊոլիկտոս նախանձորդին իւրոյ առ ոտքս ձրգեաց։
Ես անդ 'ի նպատս նրմին ըզհայրն իմ կարդացի առժամայն.
Այլ զիս 'ի սպառ յուսակըտուր, եղուկ զինեւ, առնէ այն,
Զի եւ ըզհայրն իմ անդանօր տեսի սուսեր 'ի ձեռին
Որ վերամբարձ բազկաւ կըշռեր հարուածս 'ի կուրծքս նորին։
Դառնակրսկիծ ցաւք 'ի տեսիլն արկին աղմուկ եւ խառնուրդ.
Պոլիկտոսի արեան ճապաղ ցասման նոցա ետ յաղուրդ։
Համբուն իսկ ոչ գիտեմ զնարդ ըզնա եւ. նրբ խոց եղին,
Բայց զայս եւեթ՝ զի զմահնորա ամենեքեան խընդրէին։
Այս է երազն իմ աւասիկ։

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Յոյժ տրխրագին արդարեւ.
Այլ պարտ է քեզ արիութեամբ առնել զերկիւղդ 'ի դերեւ։
Տեսիլն ինքնին, ոչ ժրխտեմ զայն, գիտե ածել քեզ սոսկաւմն.

ՀԱՅԿ-ՍՍՌ

Այլ ոչ ըստոյգ ինչ արհաւրօք առնել ըզքեզ եւ նըկուն։
Իցէ՞ երկիւղ՝ի մեռելոց, կամ զանգիտես՝ի հօրէ,
Որ պատուական է ամուսնոյդ, որ ըզկիսայն իւր սիրէ.
Ո՞ւ ինքն ըզնա քեզ պարգեւեաց ընարեալ խնամով իւրովի,
Ունել՝ի նմա աներկեւան թիկունս ասա իւր կորովի։

ՊԱՒԼԻՆԷ

Ըզնոյն եւ հայրն իմ ինձ ասաց՝ Ծաղրեալ զերկիւղս ահափեա.
Այլ գաղտնագործ քրիստոնէից նենգք եւ հրապոյրք տան ինձ
Գուցէ առեալ զէն՝ի փեսայն իմ դիմեսցեն խրմբովին, (խէթ,
Թափեալ ըզվրէժ այնչափ արեանց զոր ձեռք իմոյ հօրն հեղին։

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Ելն իսկ դոքա են չարաղանգք, մեհենադերձք ու ամպարիշտք,
Եւ դիւթական հրմայս՝ի զոհս իւրեանց դոքա խառնեն միշտ.
Սակայն զայրոյթ դոցա՝ բաղնեաց եւ ելեթ՝ի ինքեան սահմանի,
Դիցն անմահից են ատեցողք, չեն մահացուաց թըշնամի։
Տոկան անմուռնչ որ ինչ դոցա եւ յաւերցին տանջանք խիստ,
Եւ խընդալից դիմեն՝ի մահ իբր՝ի յանդորր՝ի հանդիստ.
Ի քրէական դատափետեալք ոճիրս ընդդէմ Պետութեան,
Այլ չէ մարթի զոք՝ի նոցանէ յանդիմանել մարդասպան։

ՊԱՒԼԻՆԷ

Լուա լեր, զի հայրն իմ հաւեալ գայ։

ՏԵՍԻԼԴ.

ՓԵԼԻՔՍ, ԱԼԲԻՆՈՍ, ՊԱՒԼԻՆԷ, ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

ՓԵԼԻՔՍ

Դուստր իմ, երազ զոր տեսեր,
Նըմանավիշտ եւ զոս յերկիւղ յուզէ ընդ քեզ՝ի յերեր,
Ի տեսանել իմ ըզնորին գալ՝ի յարդիւնքս տակաւ։

ՊԱՒԼԻՆԷ

Այլ յեղակարծդ այդ արդ ուսիր երկիւղ՝ի սիրտ քո անկաւ։

ՓԵԼԻՔՍ

Ողջ է Սեւեր։

ՊԱՒԼԻՆԷ

Եւզի՞նչ վնասս մեզ՝ի կենաց է նորին։

ՓԵԼԻՔՍ

Զի սիրելի է Դեկոսի եւ մեծարոյ առ նըմին։

ՊԱՒԼԻՆԷ

Որ ապրեցոյցն արիաբար ընդա յիւրոց թշնամեաց,
Զիցէ՞ նըմա իրաւացի սպասել բարձի եւ փառաց։
Բաղդն որ յաճախ վերհիցն ոգւոց բաշխէ հրմայս ձախողակ,
Է զի ուրեք զարդարութեանն հատուցանէ նոցա սակ։

ՓԵԼԻՔՍ

Նա ինքն ահա...

ՊԱՒԼԻՆԷ

Զի՞նչ, առ մեզ գայ։

ՓԵԼԻՔՍ

Տեսցես այժմիկ դու ընդա։

ՊԱՒԼԻՆԷ

Դեպք յեղակարծ. բայց դու ուստի՞ զայդ գիտացեր՝ զայն ասա։

ՓԵԼԻՔՍ

Ի մօտակայ աստ դաշտարայս ընդա տեսեալ է Ալբին
Ի բազմամբոխ դրանիկ խըմբի, որք ընդ Նըմա ուղեկցին,
Իշխանութեան նորա մեծի եւ զօրութեանն յայտարար։
Այլ դու, Ալբին, դու նմա պատմա զոր յուղեկցացն լուար։

ԱԼԲԻՆՈՍ

Ոչ անծանօթ է ձեզ մարտին մեծի օրն այն ահաւոր,
Որ կորըստեամբըն Սեւերեայ մեզ բարեբաղդ եկաց օր,
Յոր ինքնակալն 'ի ձեռանէ նորին եղեալ գերեթափ,
ՎըՀատեալց գընդիցն իւրոց յոյս յաղթութեան եւ անխաբ,
Աղատարարն երբ յամբոխէն մեծէ յաղթեալ կայր նըկուն.
Եւ դի 'նդ անկեալսն, որպէս գիտէք՝ չըգտեալ ուրեք 'ի մահուն,
Ուրուականաց նորա 'ի փառս պատուիք տրան անդ պէսպէս։
Ընդա աբքայն Պարսից բառնալ հրաման տրեալ էր նոյնպէս.
Եւ իւրովի ակամաւեւ նորա գործոցն արութեան,
Յանկացաւ յոյժ ըզքաջալինըն տեսանել կերպարան։
Եւ զետեղել յիւր 'ի վրանին գիակն ընդա բազմախաց,
Ուր անկենդան՝ սակայն ըզբիւրս յիւր նախանձուն վառեաց ըստ։
Այլ Խըլըրտիւն ինն հուսպ ընդ հուսպ կենաց 'ի նմա ետ նըշան.

Ընդ որ աբքայն ազնըւախոհ եկաց յապուշ հիացման.
Եւ թեպէտ յոյժ յահահասեալ չարեացն ընկճեալ եւ նըկուն,
Զաղետաբեր սակայն բազկին մեծարեաց նա զքաջութիւն.
Հրաման կենացն արար 'ի խնամս. եւ ծածկապէս դարմանեալ,
Հաս յամսօրեայ աւուրց 'ի գլուխ յառողջութիւն կատարեալ:
Յայնժամ նըմա ազ դաշնակից, բարձ եւ պատիւ եւ գանձ,
Եւ ճիգն 'ի ճիգն յաւելորսալ ընա 'ի ձեռն խոստմանց.
Այլ ըզհրաժեշտ նորին ապա առեալ 'ի գովպերճախօս,
Յըղեաց պատգամ՝ փոխանակաւ շնորհել ընդառ Դեկոս:
Յեղակարծումն առ խրնդին լեալ ինքնակալն այլ յայլմէ,
Յընտիր Պարսկին գերի հարիւր եւ զիւր եղբայրն ընձեռէ:
Զայս օրինակ արին Սեւեր ելն 'ի բանակ իւր այսրէն
Առնուլ ըզպերճ արիւնեանն զարժանին փոխարէն:
Ինքնակալին սեր եւ շընորհք տրւան նըմա մըրցանակ:
Նորոգեցաւ վերըստին մարտն, եւ մեզ դիպաւ ձախողակ.
Սակայն եւ այն աղէտք չարեաց 'ի նորին փառս յաւելան.
Նա ինքն ըզառաջին խարխալեալ կացոյց անդրէն յաղթական,
Զըբնաղ եւ մեծ տարեալ 'ի գլուխս եւ յաղթութիւն այնպիսի,
Զի հարկատու լեալ թըշնամին 'ի հաշտութիւն խոնարհի:
Ինքնակալին, որ մեծարէրն ընկա 'ի սեր անպայման,
Առեալ ապա յըղէ 'ի Հայս յետ քաջայաղթն արութեան:
Աւետաբեր մեծաց բարեաց այսր 'ի մեր կոյս դայ նա արդ
Զոհ աշխարհաւ մատուցանելդ ելեալ 'ի պաշտօն շնորհապարտ:

ՓԵԼԻՔՍ

Ո՛վ երկինք, յոր չարեաց սահման բաղդն իմ առեալ զիս վարէ:

ԱԼԲԻՆՈՍ

Իմ զայսոսիկ 'ի յուզեկցաց նորա ըլեալ յումմեթ,
Փութացայ, տէր, կանխաժման քեզ ազդ առնել զամենայն:

ՓԵԼԻՔՍ

Նա արդ անշուշտ, դուստր իմ, գիմեալ գայ զքեզ առնուլ կընու-
Հրաման զոհիցըն գուղնաքեայ ինչ առ նըմա համարի. (թեան.
Սիրոյն անձկաւ վեր 'ի վերոյ զայն ամենայն պատճառի:

ՊԱՒԼԻՆԷ

Իցէ արդեօք որպէս ասես. զի սիրէր զիս կամ ոգին:

ՓԵԼԻՔՍ

Զո՞ր նա չարիս ոչ նիւթեսցէ առ զայրացուկըս սըրտին.
Յաստուն արդար ընդ մեծազօր իշխանութեան կըցորդեալ

Ո՞ զիտէ ցոր վայր մոլեսցի 'ի վրէժ քինուն ոխակալ։
Դուստր իմ, կորուստ է մեզ անշուշտ։

ՊԱՒԼԻՆԷ

Այլ մեծախոհ է Սեւեր։

ՓԵԼԻՔՍ

Զուր յուսադիր բանիւք ջանաս սփոփել ըղհայր կարեվեր.
Դուստր իմ, կորուստ մեզ առաջի կայ մծտալուտ, աւաղ մեզ։
Զիղջ է ինձ յոյժ զի զլաւութիւն ոչ սիրեցի սոսկապէս.
Ո՜հ, ապաքէն դու, Պաւլինէ, եղեր կարի ինձ հրլու.
Քոյսում չըբնաղ արիութեան պարաք քո եղէն մատնիտու.
Խցիւ կացեալ քո ինձ ընդդէմ եւ հեստեիր հօրդ 'ի նպաստ.
Ո՜հ, հեստութիւնդ այդ զիս պահէր արդ յաղիտից չարաբաստ։
Ինձ արդ միակ յոյս թէ գուցէ եւ զօրավիգքն վերջին,
Է զօրութիւնն ամենազօր որով սիրես դու սրբոտին.
Օն 'ի նըպաստ ինձ արկ 'ի վար՝ յորմէ զերի նա՝ ըզսէր,
Եւ յականէ շարեացն իմոց դարման նոցին ած 'ի վեր։

ՊԱՒԼԻՆԷ

Ջինչ վերըստին ելից հանդէպ յաղթականին մեծազօր,
Գոլ գիմագրաւ աչացն որ վերս ածեն 'ի սիրտ ինձ 'ի խոր։
Քաջածանօթ է, հայր իմ, ինձ ընութիւն տըկար կանացի.
Այժմէն իակ սիրտ իմ հակամէտ 'ի նա՝ տրոփեալ յիս յուզի,
Եւ հակառակ հարսանեկան պարտուց 'ի վտանգ զիս ածէ
Տալ՝ երկոցուն մեզ դըժպատեհ՝ հառաչ անսուրբ 'ի սրբոտ։
Ինձ տեսանել ըզնա չէ մարթ։

ՓԵԼԻՔՍ

Սըրտապընդեաց քաջապէս։

ՊԱՒԼԻՆԷ

Է միշտ բնութիւն ինձ կանացի, նա սիրելի միշտ 'ի տես.
Առաքինի իակ պընդութեամբս համայն չկարեմ գոլ վըստահ
Ի մեծազօր ազդեցութեանց աչացն իւր գոլ անձնապահ։
Մի՛ զնա լեցի ինձ տեսանել։

ՓԵԼԻՔՍ

Սակայն հարկ է զի տեսցես։)
Այլ՝ եթէ ոչ՝ զազգ քո եւ զհայր, դուստր իմ, 'ի մահ մատնեսցես։

ՊԱՒԼԻՆԷ

Եթէ այդպէս հրաման է քո, ինձ հնազանդել քեզ պարտ է.
Այլ մըտախոհ ելիր, հայր, 'ի վտանգն յոր զիս հրամանդ այդ ածէ։

ՓԵԼԻՔՍ

Գիտեմ՝ ըզսիրտդ առաքինի։

ՊԱՒԼԻՆԷ

Եւ յաղթեսցէ աներկրայ։
Ոչ թէ Նդ յաջող եղլոյն ընդ յոյս անձն իմ՝ զահի հարեալ կայ,
Այլ ըստնութիւն մարտին որ յիս, եւ խառնն ածէ ինձ տագնապ,
Ըղձայութեանցս այժմէն 'ի սիրտ դըրդեալ կըռիւ ապըստամբ.
Եւ զի ինձ մարտ խիստ առաջն կայ 'Նդ ոսոխի զոր սիրեմ,
Թոյլ տուր ինձ, հայր, սպառազինեալ անձամբ անձին ինձ ընդդէմ,
Եւ պարապով 'ի տես նորին զիս պատրաստեալ ամրակուռ։

ՓԵԼԻՔՍ

Ես ընդ առաջ երթայց նըմա 'ի քաղաքիս մինչ 'ի դուռն.
Իսկ դու քաջ լեր եւ զսասանեալ զոգիսդ առ քեզ ժողովեա.
Աչ ըզմըտաւ զի բաղդ ընաւից մեր 'ի քոյում ձեռին կայ։

ՊԱՒԼԻՆԷ

Ադից, այո, զկիրըս սըրտիս նուաճել դարձեալ ես առից,
Եւ հրամանաց քոյոց 'ի սպառ զանձն իմ՝ 'ի սպանդ ձգեսցից։

ՀԱՆԴԷՍ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա.

ՍԵՒԵՐՈՍ, ՓԱԲԻԱՆՈՍ

ՍԵՒԵՐՈՍ

Մինչ ըզզոհին հրաման տուեալ կարդէ Փելիքս ըզհանդէս,
Զիցէ՞ մեզ այս բարեպատեհ ժամ տարփալոյն իմ՚ի տես.
Յանկամ տեսոյն ես Պաւլինեայ, եւ զդից պաշտօն գերագոյն,
Որ աստուածոյն արդ պատրաստի, տանել աչաց գեղանւոյն։
Ո՛չ մինչ զանխուլէ՚ի քէն այս պատճառք գալոյ իմ՚այսրէն.
Այլ ամենայն կրցեալ բաղդք՝ մինձ առ՚ի նոյն նըպաստեն։
Ի զոհել գամ, այլ զոհ իմն այլ սիրեցելումն մինձ գեղջն,
Ըզսիրտս՚ի նուէր մատուցանել նըմա եւ զանձն իմ՚ողջոյն։

ՓԱԲԻԱՆՈՍ

Տեսցես ըզնա, տէր իմ, ընդ հուպ։

ՍԵՒԵՐՈՍ

Ո՛վ տեսութիւն հրճուելի։
Եւ հաճեսցէ՞ դիս օրհնդն առնել տեսոյն արժանի.
Իցէ՞ արդեօք թէ ազդիցեմ՚դեռ եւս՚ի սիրտ ցանկալւոյն.
Ընդարձիցի՞ դեռ կայծ՚ի նմա նախկի առ իս իւր սիրոյն.
Ո՞ր ամբոխումն՚ի նմա կրեցի, եւ ընդ գալուստ իմ՚որ յոյգդ.
Բարեբախտիկս այս տեսութիւն նաւթձիցէ՞ ընաւ մինձ զիմ յոյս.
Չի ընտելի յոյժ է մինձ մահ քան յանարժան գալ՚ի հնարս
Ընծայութեան թըղթոփքն որ յիս՝ ածել ըզնա մինձ՚ի հարան։
Այն զենք սըրեալ են Փելիքսի, ոչ Պաւլինեայ հակառակ.
Սիրտ Սեւերեայ չեկաց երբէք կամաց նորին ըստահակ. (խեմ,
Եւ թէ յանկարծ զիւր սիրոն յինէն ուձացոյց բաղդն իմ դըժ-
Ես ընդ անձին լեալ ըբռնամարտ՝ յիւրմէն մինչ ոչ պահանջեմ։

ՓԱԲԻԱՆՈՍ

Տեսցես ըզնա, այլ մինչ քան զայս ասել մինձ քեզ չըմարթէ։

ՍԵՒԵՐՈՍ

Իսկ քեզ առ ինչ այդ հեծութիւն եւ հառաչանք 'ի սրտէ.
Ո՞չ եւս արդեօք սիրէ նա զիս, ասա ինձ զայդ յայտնապէս։

ՓԱԲԻԱՆՈՍ

Իցէն քեզ բանքս հաւատարիմ, մի եւս առ նա երթիցես.
Վերհաղուսեց դու 'ի նբւեր ըզշնորհս սիրոյդ, տէր իմ, աճ.
Շատ եւս 'ի Հռոմ իցեն քեզ պարք չբնաղադեղ սիրուհեաց.
Ազնըւագոյնք 'ի նոցանէ տացեն անձանց երանի,
Թէ այդքանոյ մեծ իշխանիդ լիցին սիրոյն արժանի։

ՍԵՒԵՐՈՍ

Քաւ Սեւերեայ թէ նուաստասցի յայդ վատութիւն տրմարդի՝
Արհամարհել ըզՊաւլինէ իբր անարժան իւր բաղդի.
Քաջիկ կանխեաց նա յայդ հանդէս, նրմա նմանել ինձ պարտ է.
Յայդ իսկ միայն սիրեմ ըզփառս, զի արժանի իւր եղէ։
Առ նա, առ նա, Փաբիանէ. բանք քո աճեն ինձ տաղտուկ.
Օն ձեպեսցուք յոտքս նորա դընել զիմ բաղդ մեծաշուք.
Զայն 'ի մարտին՝ դէպք 'ի բարի եղեալ՝ գրտի եւ յանկարծ
Երբ դիմագրաւ գնայի խընդրել մահ արժանի սիրուհւոյս.
Իւր մեծութիւնս իմէ եւ բարձ, իւր են եւ շնորհքս առ կայսեր,
Եւ որ ինչ յիսն է զամենայն նորին իսկ ինձ առթեաց սէր։

ՓԱԲԻԱՆՈՍ

Ներեա ինձ, տէր, ասել դարձեալ. մի՛ եւս ըզնա դու տեսցես։

ՍԵՒԵՐՈՍ

Շատ իսկ են արդ բանք պատ 'ի պատ, զեսկն ինձ ասա պարզա-
Միթէ յաղերս առ նա երթեալ եւ գտեր յինէն հովացեալ։ (պէս.

ՓԱԲԻԱՆՈՍ

Զիշխեմ ասել քեզ որ ինչ էն. է նա...

ՍԵՒԵՐՈՍ

Եւ զինչ։

ՓԱԲԻԱՆՈՍ

Հարմնացեալ։

ՍԵՒԵՐՈՍ

Զեռն ինձ մատ, Փաբիանէ, շանթահարեալ կամ հա.
Հարուածդ 'ի յիս անակընկալ յոյժ առաւել ծանրանայ։

ՓԱՐԻԱՆՈՍ

Զի՞ է քեզ, տէր, ո՞ր քո վեհանձն արիութիւն ասասեւոր։

ՍԵԻԵՐՈՍ

Արիութիւն դրժուարընդել է մահացուի ասասանօր.
Այսգոյն աղէտք եւ զվեհազանց ընկճեն ըզսիրտ անընկուն.
Արուորագոյն առաքինւոյ ասա ըսպառի զօրութիւն.
Սիրտ որ յայսգոյն գամ մի լուցեալ տարփից 'ի բոց գեղանի,
Զար քան ըզմահ իսկ յարկածից ասսի հարեալ սասանի։
Ի դրժընդակ բանիցդ 'ի լուր ոչ եւս իշխեմ արդ անձին.
Պաւլինէ հարան։

ՓԱՐԻԱՆՈՍ

Երիցս հընդեակ տիւք 'ի վերայ ցարդ անցին։
Պոլիկատոս ոմն 'ի Հայկազանց յաղնըւագոյն 'ի տոհմից
Ի հարմութիւն ընտա ածեալ բերկրի 'նդ նրմա կենակից։

ՍԵԻԵՐՈՍ

Դէթ ոչ անարդ է ընտրութիւնն, անգոսնել զայն կարեմ ոչ.
Մեծահամբաւ է Պոլիկատոս յաբքայազանցըն բողջոջ.
Այլ դուվնաքեայ սիոփանք իմոցս անբուժելի աղետից։
Ո՜հ, Պաւլինէ, իբր 'ի յօտար ըզքեզ 'ի գիրկըս տեսից։
Երկի՞նք, որ զիս՝ ինձ յակամայս 'ի լոյս կենաց դարձուցեր,
Ո՞վ բաղդ, որ ինձ յոյս յանցուսից եւտուր դառնալ 'ի նոյն սէր,
Յաւելջիք, օն, տալ ըզշնորհիդ նըպաստ զոր նախն ինձ եւտուք,
Եւ զոր երբեմն վանեցէք յինէն ըզմահն՝ այսրէն տուք։
Սակայն տեսցուք ըզՊաւլինէ, եւ յաղերեցս 'ի վայրին
Զաչս 'ի մահուն փակեսցուք մուտ՝ տալով ըզոջոյն մեր վերջին.
Անդ 'ի տանել սըրտիս 'ի կայս հոգւոց զայն քաղցրը պատկեր
Հառաչանօք տացէ զյետին մեծարանաց իւր նըւեր։

ՓԱՐԻԱՆՈՍ

Սակայն տեսցիր, ով տէր, խորհեաց...

ՍԵԻԵՐՈՍ

Իմ զամենայն խորհեալ է.
Անձն յուսահատ յորոց, աղէ, 'ի խակութեանց երկիցէ։
Պաւլինէ ոչ հաճի ընդ այն։

ՓԱՐԻԱՆՈՍ

Այո, տէր, բայց...

ՍԵՒԵՐՈՍ

Չէ ինչ փոյթ։

ՓԱԲԻԱՆՈՍ

Այնու եւ եւրս խրատասցին դըժուարընդեալ ցաւք հոգւոյդ։

ՍԵՒԵՐՈՍ

Եւ ոչ իմ այն են կամք բուժել թէ 'ի ցաւոց ցանկացայց.
Այլ տեսանել եւեթ ըզնա, անձկաւ նորին թող մեռայց։

ՓԱԲԻԱՆՈՍ

Այլ 'ի տեսիլ նորին չիցես ոչ եւս անձին քու�իչեան.
Յուսակորոյս սէր չըգիտէ ոչ եւս զօրէն եւ զարժան.
Ըզխանդակաթ խօսիցն ըզՀետ 'ի կրիցն անկեալ 'ի հրապոյր,
Տայ ըզլեզուն 'ի թըշնամանս եւ զանիծից ժայթքէ հուր։

ՍԵՒԵՐՈՍ

Այլագգ զինէն կարծիք են քեզ. նա մեծարոյ է ինձ դեռ.
Սիրա իմ թէպէտ եւ յուսահատ, վառ 'ի նորին է 'ի սէր.
Եւ ի՞նչ իւիք մարթ իցէ զնա յանդիմանել անիրաւ.
Ընդ որ մեղայ դատել՝ երբ չիք նորին խոստումն ինձ 'ի դրաւ.
Ոչ յեղյեղուկ զբաւաւ երբէք, ոչ երդմնազանց ըստ հարկին.
Պատշաճք պարտուցն եւ հայր նորա եւ բաղդն իմ ինձ ենդգէցին,
Բայց եւ արդար պարտք իւր էին եւ իրաւունք հօր նորա։
Իմոց բնաւից չարեացապարտ է միայն բաղդն իմ դըժնեայ.
Թէ նուազ ինձ բաղդն իմ յաջողէր, այլ փոքրը մի վաղագոյն,
Միով ըզմիւսն ածեալ յիմ կամն, պահէր ըզսէրն ինձ նորուն.
Յոյժ երջանիկ, այլ տարաժամ բաղդիւս՝ յինէն նա կորեաւ.
Թող ինձ ասա, տեսից ըզնա, անձկումն եղէց կենդանաւ։

ՓԱԲԻԱՆՈՍ

Այո, երթայց ասել նըմա զի եւ յաղէտսդ յետին
Ի զօրութիւն դեռ եւս 'ի քեզ մարտընչելոյ ընդ անձին։
Խեթայ եւ ինքն իսկ 'ի նախկին թափոյ վըշտին դըրդմանէ,
Զոր յեղակարծ կորուստ 'ի սիրա սիրեցողին արկանէ,
Ոյր ըբռնութիւն շատ է յուզել վըրդով յոգի՝ վըշտակիր
Առանց դալոյ եւ սիրելոյն տեսլեամբ եւ եւս 'ի գըրգիռ։

ՍԵՒԵՐՈՍ

Նա ինքն ահա, փաբիանե։

ՓԱԲԻԱՆՈՍ

Յուշլեցի քեզ, Տէր, յիշեա...

ՍԵՒԵՐՈՍ

Եղուկ զինեւ, զայլոք սիրէ, այլոք նորին է փեսայ։

ՏԵՍԻԼ Բ.

ՍԵՒԵՐՈՍ, ՊԱՒԼԻՆԷ, ՍՏՐԱՏՈՆԻԿԷ, ՓԱԲԻԱՆՈՍ

ՊԱՒԼԻՆԷ

Այո, զայլոք սիրեմ, Սեւեր, ոչ թանգուզեմ իսկ զայն քեզ.
Շընթեն քեզ այլք եւ փաղաքուշ բանիւք խաբեն, այլ ոչ ես.
Պաւլինեայ սիրոն ազնըւախոհ քեզ հոլանի է ահա։
Ոչ զոր կարծես՝ մահուդ շըռինդն՝ աղետաբեր այն քեզ կայ.
Եթէ երկինք իմ փեսային զիս առնէին ընտրոյ տէր,
Քեզ միայնոյ առաքինւոյդ Պաւլինէ զանձն ընծայէր.
Եւ բաղդն ոսոխ 'ի յիւրն համայն զինեալ 'ի ժլատ խրատութիւն,
Ի զուր ընդդէմ քոց արժանեաց թափեալ ըզքան գործէր գուն.
Շատ իսկ 'ի քեզ նըկատեալ տիպս առաքինի լաւութեանց,
Նախամեծար առնէի զքեզ եւ արքայից վերհազանց.
Բայց զի պարտուց պատշաճք օրէնս այլազգ առ իս սահմանեն,
Զոր ոք եւ հայրն իմ հրամայէր ընտրեալ փեսայ ինձ յիւրմէն,
Թէպէտ 'ի փառս իշխանութեանդ, որ արութեանց քոց է անկ,
Զարքունական թագին ճաճանչ յաւելուիր եւ զպարծանք,
Թէպէտ սիրով քեզ կըցորդեալ, թէպէտ ըզմիւսն ատեի,
Լուռ 'ի հառաչ յոգւոց հանեալ, բայց հրամանացն անսայի.
Եւ տարփանաց խանդից սըրտիս բանն յիս գոլով դերազանց,
Լըռեցուցեալ ըզհառաչանս՝ ատելութեան դընէր սանձ։

ՍԵՒԵՐՈՍ

Ո՛հ, երանի՜ քեզ, զի թեթեւ ինչ հառաչանք 'ի սրտէ,
Յաւոց հոգւոյդ ամենաբոյժ ըսպեղանի պատրաստէ.
Անդպէս ուրեմն ըղձից սըրտիդ ամենիշխան դու դըշխոյ՝
Դըժուարընդելկըրից 'ի քեզ փոփոխմանց գոս 'ի վերոյ.
Սիրաբորբոք բոց 'ի քոյին վառեալ 'ի սիրտ եւս քան զեւս,
Կաս դու անխլիրտ իբր անըզգայ, արհամարհոտ իսկ թերեւս.

Եւ անսասան քո պընդութեան թեթեւ թըւի եւ ընդել
Ըզմեծարանս յանարգութիւն, եւ զսէր 'ի հեռ փոխարկել։
Մասն ինչ յանկարծ բոյոյ ընուռնէ կամ թէ արդեօք լաւութիւ
Եթէ սփոփէր ըզլաքելոյս սիրա յաղխոցս անպայման,
Հառաչ մի լուռ եւ արտասուաց շնթ մի յաչաց թէ հոսէր,
Վաղ բրժըշկէր ըզզըրկելոյս 'ի քէն ըզսիրա կարեւէր.
Բանն յիս 'ի կամս իւր նըւաճէր ըզսէրն անկեալ 'ի յուժոյ.
Եւ զոր ըզգայր՝ իւր անըզգայ հանէր իսկ զայն 'ի յուշոյ.
Ապա եւ իմ քոյ տարփանաց բերեալ նախանձ ատաստին,
Երանեցից զանձն իմ գրգռուեալ 'ի ծոց սիրոյ օտարին։
Ո՛վ դու սրտիս սէր ցանկալի, որ զես 'ի դեղ քո հարեր,
Ա՞յդ սիրելոյ ինեն օրէնք, եւ բնաւ դու զես սիրեցեր։

ՊԱՅԼԻՆԷ

Շատ իսկ ցուցի քեզ զայն, Սեւեր, եւ թէ կարող ինչ էի
Նա եւ զբոցոյն խարոյկ 'ի սպառ շիջուցանել 'ի սրտի,
Բաբէ, յորոց անձն իմ՝ապրեր 'ի յոգեսպառ հեծուլթեանց։
Բանն յիս, այո, նուաճէ ըզթափ կըրիցն յանդուգն յարձակմանց,
Բայց ես Համայն իշխանութեամբն որով զրսպէն ըզնոսա,
Բըռնակալէ նոցին եւ ոչ արքայակերպ տիրանայ.
Վեր 'ի վերոյ թէպէտ թըւի 'ի կերպարան անվըրդով,
Այլ 'ի ներքոյ յուզի աղմուկ մեծ 'ի պայքար եւ 'ի խռով։
Հրապոյրք ինն ոչ գիտեմ զիարդ առեալ ձրգեն զես առ քեզ.
Թէ բանն 'ի յիս է մեծազօր, այլ արժանիք քո մեծ ես։
Ես ըզՍեւեր՝ որ յիս ըզսանդն էարկ՝ դարձեալ տեսանեմ
Հըզօրագոյն ես 'ի հրապոյրս ածել յորդոր ինձ 'ի դէմ,
Իշխանական փառօք եւ պերճ պատուով առեալ նոր ճաճանչ,
Եւ յաղթանակ ամենուրեք ըզհետ ձրգեալ մեծապանչ.
Քաջ իսկ գիտեմ զնոցին կըլիա, եւ Սեւերոս ոչ խաբեաց
Զոր յայնպանէ կալայ ես յոյս բազմաբեղուն արգասեաց։
Այլ որ երբեմն զես պարտուց պատշաճք 'ի Հռոմ պընդեցին,
Եւ որք ասին ընդ օրինօք նուաճեն զես հօր հրամանին,
Նոքին եւ արդ ջըրն զաղտու հրապուրանաց զորութիւն,
Որ կեղեբէ ուժգին՝ այլ ոչ զբորդուէ զսըրտիս պընդութիւն։
Առաքինի այս այն պատշաճք են անողք առ սէր մեր,
Զորոց բողք կալեալ քո անդ՝ բայց եւ գովել գովեցեր.
Ընդոյն բողք կալջիր եւ արդ, այլ զնըստութիւն գովեա զայն,
Որ զքեզն եւ զիս զուգապատիւ դընէ կըրիցս յաղթական.
Եւ խորհեաց քաջ զի սիրտ նենդոտ եւ 'ի պարտ իւր յերերի
Չէր արժանի՞ ժառանգելոյ ըզսէր մեծին Սեւերի։

ՍԵՒԵՐՈՍ

Ներեա, վեհանձն ինձ տիկին, ահ, ցաւք զիս առնեն թերատես,
Եւ չբիծղուն ինչ տեսանել բաց յաղեսիցս աղեկեզ.
Զայդ քոյին ճիգն առաքինի պարտուցդ 'ի փորձ հանդիսից
Համարէի քեզ 'ի յանցանս, եւ յեղյեղուկ թուէիր ինձ։
Մի, աղաչեմ, մի դու ցաւոց սրբոյս եւ եւս 'ի զայրոյթ
Ցայտներ ըզծանր ինձ ըզկորուսան եւ ըզկրեհա արժանւոյդ.
Այլ քոզարկեալ կարեկցութեամբ ըզքս չբնաղ զորութիւն,
Որ յանջատելն զիս 'ի քէն վառէ սիրովդ ուժգնագոյն,
Այս հանդէս ինձ թերութեանց, իւ կարիցեմ մանաւանդ
Սփոփել ցաւոցս ըզնրատութիւն եւ ըզսիրոյս մեղմել խանդ։

ՊԱՒԼԻՆԷ

Ի զորութիւնն յես անընկուն 'ի տոկ, այո, այլ եղբ՛ակ,
Ոչ կարէ՞նա ծանկել 'ի սպառ ըզյոյզս կրից եւ զաղմուկ.
Զայն քեզ արտօսր իմ յայտ առնէ, զայն հեծութի՛ և թառանչ
Զոր վերբերէ յինէն սիրոյ դառն յիշատակ մշտատանջ.
Դառնակրսկիծ արգասիք այսքր սիրատարփ տեսութեան,
Յորմէ չկարեմ գոլ անձնապահ որչափ ինձ պարտն է ու արժան։
Այլ թէ խցէ քեզ մեծարոյ այս սրբրազան զոգից պարտ,
Մի գնորին փառս յինէն կապտեր, արա տեսլանդ ինձ աւարտ։
Խնայեա յաչացս իմ զարտասուս որք 'ի կորանս ինձ հոսեն,
Ի խանդ սիրոյս խնայեա յըմբոստ եւ ապըստամբ առ յինէն.
Խնայեա եւ յայս բաղմավըստանդ զրուցատրութիւն տրխրական,
Որ երկոցունցս իակ յաճախեն 'ի սիրտ ըզցաւս անպայման։

ՍԵՒԵՐՈՍ

Այդպէս միակ 'ի սփոփանաց որ ինձ մընայն զիս զբրկես։

ՊԱՒԼԻՆԷ

Խոյս 'ի վանդէս տուր տեսութեանս աղիտաբեր ինձ եւ քեզ։

ՍԵՒԵՐՈՍ

Իակ զինչ սիրոյս իմ փոխարէն, որ մըրցանակ վաստակոց։

ՊԱՒԼԻՆԷ

Մի այն դարման է զօրաւոր առ 'ի բուժել ըզմեր խոց։

ՍԵՒԵՐՈՍ

Ես 'ի խոցոյս ըզմահ խընդրեմ. քեզ քաղցրացի միշտ իմ սեր։

ՊԱՒԼԻՆԷ

Եւ 'ի խոցոյս բուժիլ խընդրեմ, փառացս ածէ այն ըստուերս։

ՍԵՒԵՐՈՍ

Ո՜հ, զի քո փառք զայդ հրամայեն, տացեն տեղի ցաւք իմ քեզ։
Փառաց քոց զինչ կարեմ ժըխտել, որ եւ ընդ փառս իմ խնամեա-
կաց դու ողջամբ. ես դիմադրաւ երթամ 'ի մարտ՝ տարփաւոր
Անմահութեան, զոր հայթայթէ մահ գեղեցիկ անդանօր,
Եւ մեծաշուք մահուն փառօք ածէլ զլուսակ վայելուչ
Իմոց նախկին քաջարութեանցս 'ի յարդասիս թանձաւուչ,
Եթէ կայցէ խակ 'ի յիս յետ օրհասաբեր հարուածոյդ
Դեռ եւս շունչ կենդանութեան զոլ ինձ մահու հետամուտ։

ՊԱՒԼԻՆԷ

Եւ Պաւլինէ, այր յերեսաց քոց ցաւք 'ի սիրտ իւր յորդին,
Յաշխարհախուռմբ խակ 'ի զոհիդ խուսափեացէ առ 'ի քէն.
Եւ յառագաստ իւր մենայեալ աղիոցըմ 'ի մըրմունջ
Աղաչաւոր դից վասն քո հեղցէ աղերս սըրտառուչ։

ՍԵՒԵՐՈՍ

Արդարադատ երկինք իցեւ հաշտեալ 'ի սպանդ իմ մահուս
Եւ Պոլիկոտեայ եւ Պաւլինեայ յաւելցէ ամս 'ի յաւուրս։

ՊԱՒԼԻՆԷ

Իցեւ Սեւեր յետ այսքանեաց հասեալ չարեացըն զիւրեւ
Առցէ կըշիռ ըստ արժանեացն երջանկութիւն յարատեւ։

ՍԵՒԵՐՈՍ

Եւ այնմ 'ի քէն ակն ունիմ։

ՊԱՒԼԻՆԷ

Դուստր էի ես ոչ ազատ։

ՍԵՒԵՐՈՍ

Ո՜վ գառն օրէնք պարտուց, որ զիս կորուսանեն յուսահատ։
Ողջամբ մնասցիր, առաքինիդ դու յայժ, եւ յայժ սիրելի։

ՊԱՒԼԻՆԷ

Ողջամբ դնասցիր, վասաչաղդիկդ յայժ եւ սիրող տարփելի։

ՏԵՍԻԼ Գ.

ՊԱՒԼԻՆԷ ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Ընդ ձեզ կացեալ ես ողբայի, եւ աչք իմ դեռ արտասուեն.
Բայց գտնեայ արդ սիրտ քո Հանդէսաւ յերկիւղալից աղմկիկէն.
Տեսեր ինքնին արդ յայտնապէս զի են երաշխիք ընդունայն,
Եւ Սիւերք ոչ գայ վրիժառու շաղախեալ զաջ իւր յարեան։

ՊԱՒԼԻՆԷ

Եթէ իցէ քո գութ ընդ իս, գտնեայ սթափել ինձ թողցես.
Զի՞ ինձ 'ի յուշ 'ի յեռանդան ցաւոց զերկիւղ իմ ածես.
Ամբոխելոյ հոգւոյս 'ի կրից վայրիկ մի զէթ արա դուլ,
Եւ մի թափեր զոգիս՝ ցաւոց ցաւս 'ի վերայ յաւելուլ։

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Եւ զանգիտե՞ս դու տակաւին։

ՊԱՒԼԻՆԷ

Ո՛ Սարատոնիկէ՝ երկընչիմ.
Եւ թէ իցէ իսկ՝ զի չիցէ իրաւացի երկիւղիմ,
Ամլ տարապարան իսկ այն երկիւղ միշտ ինձ բերէ 'ի պատկեր
Ցաղեսալի տեսիլն աղդեալ ինձ յերազի զայս գիշեր։

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Ամլ մեծախոհ է Սիւերոս։

ՊԱՒԼԻՆԷ

Թէ եւ նա կրիցն ժուժկալ,
Ամլ յարենէ ինձ 'ի տեսիլ գայ Պոլիկոտս շաղախեալ։

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Այժմ իսկ լուար որպէս բարիսնախանձորդին իւր մաղթէր։

ՊԱՒԼԻՆԷ

Ի տալ Հարկին աջ եւս 'ի նպաստ կարկառեսցէ մարդասէր.
Թէ հաւասաւաւ զայս գիտիցեմ եւ թէ խարիմ 'ի կարծիս,

Սակայն գալուստ Նորա այսրէն միշտ արհաւիրս ազդէ յիս։
Առաքինի յոր կոյս եւ սիրտ իւր ըղձեսցէ զանարկիս,
Ի նա հրզոր միշտ տարփածու, եւ զայ 'ի հարսն առնուլ զիս։

ՏԵՍԻԼ Դ.

ՊՈԼԻԿՏՈՍ ՆԵԱՐԻՈՆ, ՊԱՒԼԻՆԷ, ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

ՊՈԼԻԿՏՈՍ

Շատ իսկ հեղեր դու արտասուս, արդ սրբբեաջիր դաչքս քո.
Փարատեսցին սրբտիդ քո ցաւք, զերկիւղ քոյին լքռեցո.
Ահա ընդդէմ նախազգեցիկ գուշակութեանց դիցն առ քեզ
Դառնամ ողջամիտ այսրէն, տիկին, եւ զիս դարձեալ տեսանես։

ՊԱՒԼԻՆԷ

Դեռ աւուր կայ, եւ յիս երկիւղ եւ քան զեւս յաճախէ,
Ի տեսանելս զեւս 'ի կատար գուշակութեանցն ըստ մասանէ.
Զ Սեւեր մեռեալ ես կարծեմ, արդ տեսանեմ՝ասա ընդնա։

ՊՈԼԻԿՏՈՍ

Գիտեմ՝ես զայն, բայց ոչ մեծ ինչ մեզ 'ի նմանէ երկիւղ կայ։
Ի Մելիտին Հայոց կամք աստ. իցէ Սեւեր որ ինչ էն,
Բայց հայր քո աստ իշխէ, եւ ընաւ որեարս յինէն ակն ածեն.
Զիր իսկ տեղի, որպէս կարծեմ, մեզ երկիւղի դաւանաց,
Զի Սեւերեայ չէ այնպիսի սիրտ, ընդունակ չէ իսկ այնց.
Նա այժմառ քեզ եկաւորէ, որպէս ըլայ հաւաստի,
Եւ փութացայ այսր 'ի պատիւ Նորա ըստ իւրն արժանի։

ՊԱՒԼԻՆԷ

Արդ իսկ յինէն մեկնեալ տքնուր եւ փնաց 'ի բաց այլ յայլմէ.
Եւ զի մի եւրս զիս տեսցէ՝ խոստումն առի ես յիւրմէ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Վասն ի՞ր. յինէ՞ն ինչ խիթացեր կասկած ըզքէն ունելոյ։

ՊԱՒԼԻՆԷ

Քաւ լիցի գնել զայդ նախատինս՝ երեցունցս իսկ յոյժ ազդոյ։
Ամբոխելումն 'ի տես Նորին զայդ ես խրնամ՝ինձ կալայ.
Ժուժկալութիւն եւս ամրակուռ յար 'ի վտանգաց տեղի տայ.

Որ անընդդիմադրաբար, կորուստ անձին իւր խընդրէ։
Եւ զի յայանի եւրս կալայց խօսելընդ քեզ'ի սրբոյ,
Որ յարժանեաց զբ'ի հրապոյրս գերել զմեզ յիւրն'ի սէր,
Տեսիլ նորա հրզօր է միշտ առ'ի զսարիսն պընդել։
Թող զառաջին շառագունանքս պարտութեանն անընդդիմ,
Տագնապ մեծ եւրս ժուժկալելն է, եւ խուսել տագնապ յոյժ.
Եւ թէպէտ սիրտ առաքինի իցէ'ի կրեցն անընկրկուն,
Այլ յաղթանակ է դըժուարին, ամենապարտ յաղթութիւն։

ՊՈԼԻԿՏՈՍ

Առաքինիդ դու գերազանց, հաւատարիմ պարտուց քոց,
Որոց արդեօք դու Սեւերի իցես'ի կշիռ լեալ ցաւոց.
Երջանկութիւն դու ինձ հնարիս'ի զոհ սիրոյդ անուշից,
Եւ որպէս զի քաղցրիկ ես դու սրբոյս'ի ծարաւ անձկալից։
Ֆանիցս ընդ քեզ առնում դարձեալ ըզթերութիւնս իմ'ի զնին,
Առաւել դու վնհ երեւիս...

ՏԵՍԻԼԵ.

ՊՈԼԻԿՏՈՍ, ՊԱՒԼԻՆԷ, ՆԷԱՐԻՈՆ, ՍՏՐԱՏՈՆԻԿԷ, ԿԼԷՈՎՆ

ԿԼԷՈՎՆ

Փութա, քեզ, տէր, առ բաղնին
Մընայ Փելիքս, ըսպասք պատրաստ կան, եւ'ի դուշս ամբոխն անդ
Քուսմիայնոյ մնայ գայլասուեան զի մատիցէ զոհն'ի սպանդ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Երթ դու, և զՀետ քո գամք և մեք։ Գան և դու անդրը, տիկին։

ՊԱՒԼԻՆԷ

Սեւեր յինէն արդ խուսափէ, ցաւք իւր ինեւ զայրասցին.
Հաւատարիմ կամ'ի խոստմանս՝ ոչ հանգիպել իւր տեսցն։
Բարեաւ դու մնա, տեսցես զինքն անդ. յուշ քեզ նորայն զորուն,
Եւ թէ քանի փառաջ պատուեալ'ի հնորհս իցէ՝ քաջ տեսցես։

ՊՈԼԻԿՏՈՍ

Երթ, զօրութիւն նորա այն մեծ ոչ երկիւղն ինչ է մեզ.
Ֆաջաճանօթի դոյ ինձ արդ վնհ եւ մեծախոհ սիրան ազնիւ.
Մըրցանք ոչ այլ ինչ մեզ լեցին՝ բայց յիրերաց'ի պատիւ։

ՏԵՍԻԼ Զ.

ՊՈԼԻԿՏՈՍ. ՆԷԱՐԽՈՆ

ՆԷԱՐԽՈՆ

Յո՞ դիմեալ գնաս։

ՊՈԼԻԿՏՈՍ

Ի տաճար անդր ուր ինձ 'ի զոհն ակն ունին։

ՆԷԱՐԽՈՆ

Եւ խառնեսցին դու 'ի նըւէրս ընդ ամբարիշտ խուժանին.
Թեզ մոռացո՞նք այդպէս եղեն զի քրիստոնեայ այժմիկ ես։

ՊՈԼԻԿՏՈՍ

Ա՛ստակարար դու ինձ շնորհին կացեալ՝ զայն քաջ յիշեսցես։

ՆԷԱՐԽՈՆ

Գարշիմ մերժիմ ես 'ի կըռոց։

ՊՈԼԻԿՏՈՍ

Գարշելիք են նոցնք եւ ինձ։

ՆԷԱՐԽՈՆ

Պաշտօն անարդ եւ ամբարիշտ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Եւ գըժոխոց հընարք պիղծ։

ՆԷԱՐԽՈՆ

Խոյս տուր ապա դու 'ի քաղաքեաց։

ՊՈԼԻԿՏՈՍ

Արկից ես զայնս 'ի կործան.
Կամ մեռայց անդ 'ի մեհենին, կամ զայնս ոտից տաց կոխան։
Ե՛կ, սիրելիդ իմ Նէարխոն, եկ 'ի հանդէս ելանեմք
Խոյտառակել գիցն ըզպաշտօն եւ ցուցանել՝ այլ խրեմք։
Այսմ 'ի մէնջ ակն ունին երկինք, պարտ է 'ի գլուխ զայն ածել.
Գեռ եւս ըզնոցն ես խոստացայ, եւ արդ երթամ կատարել։
Յոյժ շնորհապարտ եմ Աստուծոյն, ում՝ քեզ եղէ ես գիտակ։

Որ անպատուամբն բարութեամբ կազմ՝ ի կապել ինձ պրսակ՝
Զայս վաղ ընդ փոյթ հաճեցաւ տալ պատեհ չքնաղ առ՝ ի փորձ
Իւրոյ առ խս ձրբիատուբ նորոյ շնորհին հաւատոց։

ՆԷԱՐԽՈՆ

Յոյժ է վառումբն նախանձուդ, անսա, դիր այնրմ՝ պայման։

ՊՈԼԻԿՏՈՍ

Որ ճշմարտին Աստուծոյ չափ է նախանձուն եւ պայման։

ՆԷԱՐԽՈՆ

Ի մահ անձին դիմադրաւեա։

ՊՈԼԻԿՏՈՍ

Մեռայց առ սեր խբ ըղձիւք։

ՆԷԱՐԽՈՆ

Իսկ զինչ թէ սիրտ քո սասանի։

ՊՈԼԻԿՏՈՍ

Ինքքն լեցի ինձ նեցուկ։

ՆԷԱՐԽՈՆ

Զեն նորա կամք մեզ անձնամատն երթալ՝ ի մահ վայրապար։

ՊՈԼԻԿՏՈՍ

Յոյժ առաւել է պատուական մահ յոր դիմէ ոք յօժար։

ՆԷԱՐԽՈՆ

Շատ է սպառել մահու եւ կրել, չէ պարտ գոլ այնմ՝ ի խընդիր։

ՊՈԼԻԿՏՈՍ

Որ զանդիտէն դիմադրաւել՝ լեցի նմա մահ վըշտակիր։

ՆԷԱՐԽՈՆ

Այլ մահ անշուշտ ՝ի տաճարի անդ դարանեալ քեզ մընայ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Այլ ինձ անշուշտ արդէն յերկինս անդ յաղթանակ պատրաստ կայ։

ՆԷԱՐԽՈՆ

Զայն մեզ ՝ի ճիպն առաքինի վարուց օրէն է ուսեալ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Զայն 'ի հրապոյրս անկեալ մեղայ՝ մարթի է 'ի վտանգ արկանել։
Իսկ առ իմէ՞ գնել զայն յերկրայս, զոր մահ գործէ անելոյս.
Իցէ՞ իսկ այն գըժոխըմներ որ զերկնից դրուն ինձ բանայ։
Ես քրիստոնեայ եմ, Նեարխոն, եւ քրիստոնեայ իսկապէս.
Հաւատք զոր ետն արդ ընկալայ խընդրէ զարդեանց ըզհանդէս.
Որ խուսափէն՝ մեղկ 'ի հաւատս է եւ մեռեալ յոյս նորին։

ՆԷԱՐԻՈՆ

Կենաց անձին խընամ կալջիր, փառքն Աստուծոյ զայդ կամին,
Կեանք քո լիցին պատըսպարան քրիստոնէից որ կան ասա։

ՊՈԼԻԿՏՈՍ

Այլ օրինակ մահուս լիցի նոցա մեծ եւ բարս ներպաստ։

ՆԷԱՐԻՈՆ

Մահն ուրեմն փափաքես։

ՊՈԼԻԿՏՈՍ

Կենաց աղա դու ցանկաս։

ՆԷԱՐԻՈՆ

Ծածկել 'ի քէն ես ոչ կարեմ, դաս գըժուարին դու ինձ տաս.
Խիթամահիւ դուցէ՞ նըկուն զիս արասցին խիստ տանջանք։

ՊՈԼԻԿՏՈՍ

Որ 'ի հաստոջ առնու ըզկայ, անկանելոյ չիք վըտանգ.
Ամենազօր աջ Բարձրելոյն պահպանէ զնա 'ի վտանգի։
Որ զանգիտէ կալ 'ի յուրաստ, է ուրացեալ 'ի սըրտի,
Երկմըտի նա յանձին իւրում, է 'ի հաւատս իւր երկայ։

ՆԷԱՐԻՈՆ

Որ խիզախէն յանդըգնութեամբ՝ յանձնապաստան լիցէ նա։

ՊՈԼԻԿՏՈՍ

Այլ 'ի նորին եմ ես 'ի շնորհս եւ ոչ թէ յիս քաջայոյս։
Բայց զոր 'ի քէն ակն ունէի՝ ինձ իցէ տալ քեզ խրախոյս.
Զի՞ քեզ այդքան երկիւղ ընդ մահ։

ՆԷԱՐԻՈՆ

Զի եւ Աստուած իսկ երկեաւ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Այլ զանձն 'ի մահ եւս. ծն լիցուք ըզհետ նորին դիմագրաւ.
Անդան նրմին 'ի վերայ դիցն կանգնեսցուք փլատակաց.
Զի պարտ է մեզ, դեռ եւս յիշեմ ըզբանըս քո կանխասաց,
Առ սեր նորա արհամարհել ըզկին, ըզդոյս եւ ըզթագ.
Տալ 'ի վերայ փառաց նորա զանձն եւ զարիւն բռնանդակ:
Աւաղ, եւ ո՞ւր է այն քոյին եռանդն եւ սեր պատարուն,
Զոր դու երբեմն ինձ մաղթէիր, եւ արդ մաղթեմ քեզ ըզնոյն:
Թէ ապակայծէ դեռ այն 'ի քեզ՝ մի դու շարժիս 'ի նախանձ
Ի սեսանել ըզնորակնուքս յայնմիկ ըզքեւ գեղաշանց:

ՆԷԱՐԽՈՆ

Նորաձնելումդ յաւազանէն՝ առոյգ 'ի յոյժ մեծաղօր,
Սուրբ 'ի մեզաց, որք ըզկորով մեղկեն շնորհին երկնաւոր,
Եւ որ համայն հոգեացեալդ ես 'ի նորին ճոխութիւն,
Անհընարինքն իսկ հեշտ թրբին քեզ 'ի բոց այնքը սիրոյն.
Այլ յիս շնորհացն ըսկրզբնաձիր նուազեալ պարգեւք երկնատուր,
Եւ զօրութիւն նորա 'ատ մեզաց յոգուոց մեղկեալ օր աւուր,
Ոչ եւս իշխէ 'ի մեծամեծքս ձեռնարկել քաջաբար,
Եւ ամենայն ինչ անկելումս յուժոյ թրբի անհընար:
Այս վատութիւն ամենաապարտ եւ այս փախուստ անարի
Գիտեմ զի խիստ է պատուհաս մեզաց իմոց արժանի.
Այլ գըթութեանցըն Տէր յոր պարտ է մեզ ունել միշտ ըզյոյս,
Նախանձելի ինձ օրինակ բարեաց ըզքոյդ տայ խրախոյս:
Եկ, սիրելիդ իմ Պոլիկտ, եկ 'ի հանդէս ելանեմք,
Խայտառակել դիցն ըզպաշտօն եւ ցուցանել ոյք իցեմք.
Իցէ՞ եւ ինձ դոյր արկանել 'ի քեզ նախանձ 'ի տոկալ
Որպէս դու ինձ 'ի դիմագրաւ տալ զանձն 'ի վտանգ կամակար:

ՊՈԼԻԿՏՈՍ

Յերկնազգեցիկդ յայդ բարեբաղդ 'ի փոփոխումն սրբոյ
Ճանաչեմ զիմքս Նէարխոն, եւ արտասուեմ առ խընդի:
Զոհք 'ի բաղնին կան 'ի զենուլ, չիք յամենայ ժամանակ.
Օ՜ն, Աստուծոյն Ճըշմարտի անդրդ Ճեպելեսցուք նահատակ.
Երթիցուք տալ ըզխաղալիկըն շանթ ոտից 'ի կոխան,
Որով ըզփայտըն փուտ զինէ դիւրահաւատքն խուժան.
Օ՜ն, երթիցուք բանալ 'ի լոյս զաչս առ 'ի մահ կուրացեալ,
Եւ փիշրեսցուք ըզկուռսըն սուտ ըզկոփածոյ եւ զհրահալ.

Երկնաբորբոք 'ի մեզ հրոյս լեցուք կենօք մեք ճարակ.
Հարցուք զերկնիցն պատերազմ՝ թողեալ 'ի նա զյաղթանակ։

ՆԻՍՐՈՆ

Օ՜ն, երթիցուք մեծահանդէս փառացն երկնից տալ ըզոյց։
Եղեալ գործօնք հաւատարիմք կամացն առ մեզ զոր եցոյց։

ՀԱՆԴԷՍ ԵՐԲՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա.

ՊԱՒԼԻՆԷ

Ի բազմայոյզ հոգւոց 'ի ծուփս եւ 'ի վարանս մրթին,
Տեսիլք անդուլ ըղձեալ միմանց ինձ ընդ աղօտ նըկարին.
Ով ցանկալիդ խաղաղութիւն, 'ի քեզ յուսալ թէ ներես,
Երկնաճաճանչ նըշուլիւք երբ զայնս ինձ 'ի լոյս վերբերցես:
Յամբոխելոյ մլատցս 'ի հոգ՝ յոյզք խորհրդոց բազմանին
Խուժեն 'ի սիրտ իմ ասասանեալ, եւ յիրերաց եղծանին.
Թէ առկայծէ յուսոյ նըշոյլ, է փայլնորա խաբուսիկ.
Թէ արշաւեալ տիրէ երկիւղ, չեն եւ նորա հաւատիք:
Կերպացելոց հոգիս 'ի միտս իմ պատկերաց լեալ հաւան,
Երջանկութիւն մերթ տեսանէ, մերթ ինձ կորուստ յապագայն.
Եւ յանեակ ցնորից 'ի խաբս անկեալ զրահետ վայրապար,
Մըշտատատան ընդ ահ ընդ յոյս կայ յերերի անդադար:
Տագնապ է ինձ 'ի Սեւերեայ, յուղիմ՝ անդուլ 'ի կասկած.
Սիրտ իւր վերհանեն ազդեւ յիս յոյս, այլ ահ՝ նորայն յիս նախանձ.
Եւ ի՞նչ իցէ ինձ վրատահելոյ Պոլինկտոս աստանօր
Սիրողաբար տեսցէ աչօք ընդնախանձորդ իւր հրզոր:
Եւ զի սովոր է նախանձորդ ընդ նախանձորդ ըզչարել,
Յերեսանալ նոցա միմանց՝ խանձեսցի մարտ անընբեր.
Մին ըզպահեսան անձին 'ի ձեռս այլոյ տեսեալ 'ի յաւար,
Միւսն յուսահատ ոչ ձեռնուրեց ընաւէց չարեաց գոլ 'ի հնար.
Թէպէտ եւ բանն ըզգօն՝ կըրից նոցին իցէ խակ ուղղեակ,
Սակայն յուզի մին 'ի նախանձ, միւսն 'ի կասկած դրժ ընդակ.
Եւ զբրկանացըն նախատինք զոր համարին երկոքեան
Ընկալեալ մին այժմէն, եւ միւսն ընդ հուլ ահա սպառնական,

Վաղ ըսպառեալ ըզբընաձատ զուգոց նոցա ժոյժ 'ի տուկ,
Եւ 'ի զայրոյթի վառեալ ահեղ եւ 'ի կասկած անողոք,
Դիրդե զվեսայն ընդ տարփածուին գալ գիրկընդխառն 'ի գըրգիռ.
Եւ յակամայս գոլ անձնատուր ցասմանն 'ի թափ վրէժխնդիր։
Ա՛յլ զի՞ 'ի ցնորքս խօլականս տատանիմ ես 'ի զուր՝
Ի Պոլիկտոս եւ 'ի Սեւեր ըստեալ ըզվատն բարուր.
Ա՛ռաքինեացն երկաքանչիւր իսկ ոսոխաց չիցէ՞ հնար
Հասարակաց մարդկան կրբից գեր 'ի վերոյ ամբառնալ,
Երկաքանչիւր նոցա հոգւոցն երով անձին ինքնիշխան.
Եւ ամբարձեալ գերաշխարհիկ՝ անընդունակ վատութեան,
Դոքա 'ի միտս մեծախոհ տեսցեն զիրեարս 'ի բաղնին։
Սակայն, ա՜ւաղ, տեսցեն զիրեարս, եւ անկցի խանձ 'ի լուցկին։
Զի՞նչ ամուսնոյս իմ օգտեսցէ 'ի Մելիտին գոլ քաղաք,
Թէ ըզՀռոմայ զարծուիս նըմին զինէ Սեւեր հակառակ,
Երբ հայրն իմ ասա գոլով իշխան եւ զարհուրելի յոսոխէն,
Եւ յընտրութիւն իսկ փեսային թէ սարջացեալէ այժմէն։
Նըշոյլ յուսոյ յիս առկայծեալ նըսեմատուեր նըշողէ,
Եւ յարծարծել անդ խափուցեալ՝ դառնայ 'ի չիք յերկիւղէ.
Եւ որ յուսոյն է հաստատան՝ նոյն զայն վանէ տարագիր։
Երկինք, իցէ՞ դուք ինձ 'ի զուր հանջիք զերկիւղն իմ պատիր։
Ա՛յլ ելք իրացն մեզ ցուցցեն։

ՏԵՍԻԼ Բ.

ՊԱՒԼԻՆԷ, ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

ՊԱՒԼԻՆԷ

Ստրատոնիկէ, օն լուիցուք,
Կատարեցա՛ աշխարհախուսմբ զոհին հանդէս մեծաշուք.
Զոյդ դիւցազունքն 'ի տաճարին երեսեցան իրերաց։

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Ա՜հ, Պաւլինէ։

ՊԱՒԼԻՆԷ

Զի՞նչ, լըսելի չեղէ՞ն իմ ձայնք մաղթանաց.
Այդ կերպարանք քո պլպտոխ չարագուշակ յոյժ ինձ դոն.
Մի՞թէ 'ի կռիւ անդ ընդ իրեարս...

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Ընդ Պոլիկոեայ Նեաբխոն,
Եւ քրիստոնեայք...

ՊԱՒԼԻՆԷ

Զի՞նչ քրիստոնեայք, աղէ ասա։

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Եւ մրպէս։

ՊԱՒԼԻՆԷ

Մեծի ցաւոց գուշակ են բանք քո Հաակբլեալ կէս 'ի կէս։

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Մեծագունի ցաւոց չեցէ երբէք ունել քեզ պատճառ։

ՊԱՒԼԻՆԷ

Միթէ սպանաւ...

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Դոյզն 'ի չարեաց լիներ մահուն պատահար.
Երաղքդ 'ի գլուխ գան ելանեն, Պոլիկտ ոչ եւս է, չէ այլ...

ՊԱՒԼԻՆԷ

Զի՞նչ, մեռաւ նա։

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Ոչ, ողջ իսկ է. բայց, ով ընդ վայր ողբք հեղեալ,
Արեն այն քաջ վեհիցն յերկրի զարմ եւ պատկեր դիւցական
Ոչ եւս լուսոյ է արժանի, ոչ Պաւլինեայ զուգական.
Ոչէ պատուեալն 'ի քէն փեսայ եւ քեզ սիրով սիրելի,
Այլ աշխարհի եւ Պետութեան եւ աստուածոց թշնամի,
Զար անօրէն եւ ապըստամբ, նենգող, մատնիչ եւ դրուժան,
Եղեռնաւոր եւ վատ արանց, արիւնարբու չար գազան,
Ապականիչ լաւորերոյ ժանտախտ 'ի ժահրը դըժնեայ,
Մեհենազերծ հրեշ այլանդակ, համայն ասել՝ քրիստոնեայ։

ՊԱՒԼԻՆԷ

Անունդ այդ շատ էր, եւ ումպէտ թշնամանացըդ խուժան։

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Իսկ այդպիսիս ըզքրիստոնեայս կոչել իցե՞ն թշնամանք։

ՊԱՒԼԻՆԷ

Իսկ 'սա բանիդ՝ ըզքրիստոնեայց թէ ընկալաւ նա զՀաւատ,
Այլ իմ փեսայ է տակաւին, եւ դու առ խօսիս զայդ։

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Մի եւս 'ի նա, այլ յոր պաշտէն նա Հայեացքիր դու ընդ այն։

ՊԱՒԼԻՆԷ

Ըզնա սիրել ինձ պարտք էին, եւ նոյն պարտք կան ինձ եւ մնան։

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Այսպէս պատճառիս քեզ տայ արդ ուծանալայ յինքենէ.
Որ դէպքն գոյ հաւատարդրուժ, նոյն ինքն եւ քեզ խակ նենդէ։

ՊԱՒԼԻՆԷ

Թէպէտ եւ ինքն նենդեսցէ, այլ ես ըզնա սիրեցից.
Եւ զարմացումքն թէ ածէ քեզ այսանակ սէր տարփից,
Ուսիր զի պարտք իմոյս սիրոյ ոչ նորայովքն չափին.
Թող թերասցի նա 'ի յիւրմէն, ես զիմն առնեմ զարժանին։
Թէ տուիմ օտար վառէր 'ի նա, աղէ, զիմ՞դ քեզ թիւն՝
Է՞ր ինձ օրէն Հանդոյն նրմին տրուիլ 'ի սեր օտարի։
Թէ եւ իցէ նա քրիստոնեայ, այլ չէ նա ինձ դարշելի.
Մինչ սիրեցից զանձքն նորա, իցէ զերիպակն տուելի։
Բայց Հայրն իմ յի՞նչ կիրս է առ նա, զո՞ր ցուցանէ կերպարան։

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Սիրտ 'ի ցասումն յուզի վառեալ 'ի Հուր զանխուլ բարկութեան.
Այլ վասն անձուկ յառաջադոյն մշտերմութեանքն մեծի՝
Ոչ փակէ զգութ իւր 'ի նմանէ, զեռ եւս ընդ նա կարեկցի։
Ըզդատակնիք մահու զնոփաւ ածել՝ թողու զեռ 'ի պահ,
Մինչեւ տեսցէ նա զսիրելին իւր Նէարխոն չարամահ։

ՊԱՒԼԻՆԷ

Նէարխոն, զի՞նչ, նա ինքն ապա...

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Նա ինքն ըզնա զքրիստեցոյց.
Այս արդասիք եղեն նոցա սերտքն սիրոյ 'ի վաղուց։

Ո՞չ անօրէնն այն 'ի քոյոց կորզեալ ընդա 'ի գերկաց,
Յաւազանին իւրեանց 'ի ջուրքս մխսրրձել բրռնի ած.
Եւ այս ահա գաղանիքն էին մեծ եւ պահեստ առ 'ի քէն,
Զոր վերբերել զուր ջանացաւ սերդ հետազօտ 'ի սրրտէն:

ՊԱՒԼԻՆԷ

Դու ինձ յայնժամ ընդ ժրատութիւն իմ լինիր մեղադիր:

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Եւ որպէս մարթ էր կասկածել ընդ մեծեղեռն այն ոճիր:

ՊԱՒԼԻՆԷ

Այլ չեւ 'ի կրկոյ ատի ցաւոց լքքեալ 'ի սպառ յուսահատ,
Օ՞ն զարտասուաց ժամ է հանել ըղձօրութիւն 'ի ճակատ.
Իբր ամուսին, կամ որպէս գուսանը յուսացեալ ակն ունիմ
Յիս ըզվերսայն իմ նրաճել, կամ ողբել ըզհայր իմ:
Իսկ թէ անզօր առ երկոսին իսկ ոչ գնացին արտասուք,
Ի յուսահատ կիրս անմնատուր նոցին եւ ի թանատուք:
Բայց դու պատմեա որ ինչ իրք անդ 'ի տաճարին գործեցան:

ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

Ոճիրք անբուրք ամպարրշտացն անօրինակ եղեռան,
Ոյր յիշատակ ինձ արհաւիրս ածէ եւ դող ոսկերաց.
Սոսկամ պատմել զայն թէ գուցէ մեղապարտ դիցն իսկ գրատայց:
Լուր դու ապա կարճ 'ի կարճոյ զնոցին վայրագ ժրպրհութիւն:
Այն ինչ բրրմին խաղաղութեան տուեալ հրաման ժողովոյն,
Եւ կայր զերեա իւր հաստատեալ ելիցն հանդէպ արեւու,
Նոքա անդէն ժրպիրհ դիմօք դիցն անպատկառ անարգու
Ըստ կատարել զոհին պատեհ զօրենս առեալ պաշտամանց,
Այր քան զընկեր յանդգնադոյնը մուլին 'ի լուտանս,
Բարձր 'ի ծիծաղ ըզսրրութիւնսն հենգնելով ահաւոր,
Եւ թրշնամանս աղօթընկալ արկեալ 'ի դիս մեծաղոր:
Յուզէր ամբոխն 'ի քրրթմընչիւն, Փելիքս 'ի սիրտ բոցավառ.
Այլ երկոքին նոքա անսանձ ժրպրհեալ եւ եւս անպատկառ,
Եւ Պոլիկոտեայ անդ ձայն բարձեալ գոչէր առ նա. « Ա՞ինչեւ ցերբ
« Զաստուածականն տայք պաշտօն 'ի քար ու 'ի փայտ դիցակերպ »:
Ներեսջիր ինձ լռեալ ասասէն ըզհայհոյանսն ահագին,
Զոր եւ առ մեծն իսկ Աբրամադ՝ սոսկամ ասել՝ ժայթքեցին.
Թեթեւադոյն յայնց էր շնացողն եւ մրծղընեալ անօրէն:

« Լուսաբուք , յաւել ապա , լուսաբուք ինձ ժողովուրդք համբէն .
« Ի Պոլիկտեայ պաշտեալն Աստուած՝ զոր եւ պաշտէ Ղէարխոն ,
« Երկնից երկրի նա ինքն է տէր միահեծան դերաբուն ,
« Որ ինքն եւեթ ամենիշխան տնօրէն բաղդի եւ բաշխից ,
« Ինքն անբսկիզբն , ինքն պատճառ , նոյն եւ վախճան բոլորից :
« Նա ինքն Աստուած քրիստոնէից , եւ եմք նմին շնորհապարտ
« Վասն յաղթութեանցդն Դիւկոսի ինքնակալին մեր 'ի մարտ .
« Պատերազմաց բաղդին նրժաքք 'ի նորայում՝ կան 'ի բռին ,
« Եւ 'ի շարժել յօնիցն յառնեն դահոյք , ու 'ի կոր կործանին .
« Արդարութեան նորա հըզօր եւ գըթութեան չիք սահման .
« Ինքն եղեռան պատիժ , տայ ինքն մըրցանակ բարութեան .
« Զի ճիւաղացդ ապիկարից տանիք պաշտօն դուք մնուտեաց » :
Եւ զոյգ բանին դիմեալ առ խուռնին եւ 'ի գինին նըւիրաց՝
Ըզսըրբազան սպասուցն հարեալ զանօթս արկին 'ի տապատ ,
Ոչ Փելիքսի ինչ ակնածեալ , ոչ եւ շանթից երկնասաստ :
Նոքին ապա մոլեգնութեամբ 'ի բաղին անգր յարձակեալ,
Երկինք , իցէ ուրուք տեսեալ ոճիր հանդգոյն կամ լըսեալ,
Ցամենամեծն 'ի գից տեսաք անդ յամպարիշտ 'ի ձեռաց
Աբկեալ յերկիր եւ լեալ կոխան ոտից պըղծոց դարձելեաց :
Պըղծի տաճարքն վերհավայր , նըւէքքդ զոհին 'ի բաղնին ,
Ճիչք եւ խուճապ խառնաշըփոթ , եռայ խուժան ամբոխին՝
Երկիւղալից 'ի մեծ տագնապ յերկնատեղաց ցասմանէ :
Անդ եւ Փելիքս... Այլ ինքն ահա , զմնացորդն ինքնին պատմեսցէ :

ՊԱՒԼԻՆԷ

Զի այլափոխ տեսիլ դիմաց յուզեալ 'ի կիրքս պէսպէս .
Սըրտմաշութիւն 'ի նմա խառնեալ ընդ տըրտմութեան գան 'ի տես :

ՏԵՍԻԼ Գ.

ՓԵԼԻՔՍ , ՊԱՒԼԻՆԷ , ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

ՓԵԼԻՔՍ

Այ նենգաւոր ապերասան , յանդգնութիւն մինչ ցայդ վայր .
Ի հանդիսի , ինձ ակներեւ : Տացի 'ի մահ չարաչար :

ՊԱՒԼԻՆԷ

Ինայեա յիս , Հայր , շնորհեա դըստեր քում՝ որ զտիւքդդ փարիմ :

ՓԵԼԻՔՍ

Ըզնէարխոն չարեացապարտ, ոչ զամուսնոյդ բարբառիմ.
Թէպէտ չիցէ նա արժանի կոչիլ այլ եւս իմ փեսայ,
Այլ գուցէ սըրտի հըզօրագոյն դեռ եւս յուզի յիս առնա։
Ոչ եղեռանց նորա ոճիրքը, ոչ թափ ցասմանն իմ մեծի
Յաղթել սիրոյս իմ զօրեցին, որով ըզնա ընտրեցի։

ՊԱՒԼԻՆԷ

Եւ ոչ այլազգ ինչ՝ի բարւոյ հօրեդ էր ակն ինձ ունել։

ՓԵԼԻՔՍ

Արդար ցասմանն իմոյ՝ի սպանդ հանել ըզնա ինձ պարտ էր,
Ոչ անծանօթի իցէ եւ քեզ յոր մեծեղեռն՝ի յոճիր
Դա ամբարիշտ մոլեգնութեամբն եհաս յանդուգն եւ ժըպիրհ.
Ստրատոնիկեայ անշուշտ պատմեալ իցէ քեզ զայն ամենայն։

ՊԱՒԼԻՆԷ

Ի տես մահուն Ներարխոնի զնա պահեցեր՝ գիտեմ զայն։

ՓԵԼԻՔՍ

Զի՝ի տեսիլ պատժոյ նորին՝ յորմէ յուռթեալ դիւթեցաւ,
Ըզգօնասցի խորհուրդ բարեաց առնուլ՝ի ճահ ընտրանաւ։
Ի մուերմին արեան ճապաղ զիւրըն տեսեալ յանդիման,
Մահուն երկիւղ եւ վայելից կենաց անձուկ ցանկութեան
Այնպէս հըզօրք են՝ի գործել ազդումն՝ի սիրտ խորագաց,
Զի որ զայլոց ետես կորուստ՝ խուսէ անտի ինքն՝ի բաց,
Եւ մոլեգին հուր եռանդանըն վաղ դառնայ՝ի մոխիր.
Քան զահընկէց սաստիցն որոտ՝ ազդողագոյն է տեսիլ։
Զուր վըրդովեալ կաս՝ի տարդնալ ցաւոց սըրտի ընդունայն,
Ըստըրջասցի նա՝ի չարեաց իւրոց ոճիր եղեռան։

ՊԱՒԼԻՆԷ

Եւ թողասցի՞ նա յանվնասիր արուութենէն, յուսամ՝, օ՞ն։

ՓԵԼԻՔՍ

Ներարխոնի խրատեալ մահուամբ՝ բերցէ յանձին միտս ըզգօն։

ՊԱՒԼԻՆԷ

Այդպէս արժան էր. այլ առաղ, զոր ցուցանես յոյս ինձ, հայր,
Ցոր յեղակարծ անկցի՝ի վտանգ հոգւոյս հատորն իմ եւ այր,

Թէ զոր 'ի հօրէդ գլթալիր բարութենէ իշնդրեմ արդ՝
Ի փոխելոյ մշտաց նորա ինձ ակն ունել, ցգէ պարտ։

ՓԵԼԻՔՍ

Ըզբարութեանն իմ հաւատիս, Պաւլինէ, շատ խակ ցուցի,
Շնորհեալնմա զարեւ կենաց թէ զգօնացեալ զլոջասցի։
Զառաձելոցն 'ի նոյն ոճիր՝ նոյն պատուհաս է արժան.
Եւ թէ երկուցդ ես պղտցիկ կըշռեմ դաղճուած զանազան,
Ծրնեալասէր գութ յիս նենդէ արդարութեան մատնատու,
Եւ գասայ փոխան յանցուցելոյն արժան ես ինքըն մահու։
Շնորհակալեաց ես առ 'ի քէն ակն ունէի առաւել՝
Քան զոր կասկած երկիւղալից տայ քեզ զինէն գանգատել։

ՊԱՒԼԻՆԷ

Ընդ իմ իմիք կալայց ընորհ՝ չեւ ընկալեալ ինչ 'ի քէն։
Քրիստոնէից բարք անյողդողդ քաջաձանօթ յոյժ ինձ են.
Անդրբդուելի կացցէ 'ի սպառ նա զմահ եղեալ յաչս իւր.
Թէ զապաշաւ նորին խընդրես՝ վրճիռ մահու սպժմէն տուր։

ՓԵԼԻՔՍ

Կեանք իւր յիւր կամն է ապաստան, քաջ խորհեսցի թող ինքնին։

ՊԱՒԼԻՆԷ

Այս ընշնորհ քո անթերի։

ՓԵԼԻՔՍ

Իւր է ընտրել ըզթերին։

ՊԱՒԼԻՆԷ

Մի յընարութիւն մոլեգնութեան դենին իւրոյ զայն թողուր։

ՓԵԼԻՔՍ

Զայն օրինաց թողում, չկարեմ կալ յայնցանէ 'ի ստերիւր։

ՊԱՒԼԻՆԷ

Աւդպէս աներբդ պաշտպանես քոյումդ ընարեալ վեսային։

ՓԵԼԻՔՍ

Փոյթ զոր 'ի գութ նորա կալայ, կալցի եւ ինքն ընդ անձին։

ՊԱՒԼԻՆԷ

Սակայն նորա կալեալ են աչք։

ՓԵԼԻՔՍ

Ձայդ ախորժէ նա սակայն։
Որում վերկալ իւր քաղցրանայ՝ դըժկամակի թողուլ զայն։

ՊԱՒԼԻՆԷ

Յանուն վերջին աստուածոց, Հայր...

ՓԵԼԻՔՍ

Մի զդիս առնուր ապաւէն
Եւ նոցա փառք զանարդանացն յինէն ըզվրէժ լողոքեն։

ՊԱՒԼԻՆԷ

Նոքա ուխտից մերոց լսեն։

ՓԵԼԻՔՍ

Ուրեմն անկցի նա առ դիս։

ՊԱՒԼԻՆԷ

Յանուն մեծի ինքնակալին, զորոյ դու զդէմս ասա ունիս...

ՓԵԼԻՔՍ

Այո զնորայն իշխանութիւն ըներեմ ես ասա՝ի յանձին,
Այլ յոսոխաց նորին ըզվրէժ պարտ է խնդրել ինձ նովին։

ՊԱՒԼԻՆԷ

Ի՞նմա ոսոխ եւ Պոլիկտոս։

ՓԵԼԻՔՍ

Են քրիստոնեայք համարին։

ՊԱՒԼԻՆԷ

Անգութութեան այդ դառն օրէնք ոչ եւ առ նա զօրեսցեն.
Նա՝նդ Պաւլինեայ ամուսնացեալ՝ի քոյդ խառնեալ է յարիւն։

ՓԵԼԻՔՍ

Յոճիր նորա պարտ է ինձ ասա հայել, ոչ յաղգն եւ՝ի տուն։
Ուր Պեսուութեան եւ դից ընդդէմ զինին ոճիրք եղեռան,
Անդ եւ արեան եւ մլտերիմ սիրոյ կապանք տեղի տան։

ՊԱՒԼԻՆԷ

Խրստութիւն յոյժ իսկ ծայրայեղ։

ՓԵԼԻՔՍ

Ոչ եղեռանն 'ի կրչիս։

ՊԱՒԼԻՆԷ

Աւա՜ղ, զիարդ յարգուեցար դան անբրջականքն արհաւիրք։
Կամիս, ով Հայր, եւ ինձ դրստեր քում՝ ընդ նրմա կորընչել։

ՓԵԼԻՔՍ

Դիք ինձ անմահք եւ ինքնակալն են քան ըզդուստր առաւել։

ՊԱՒԼԻՆԷ

Ո՞չ ինչ ապա մեր երկոցուն կորուստ ըզքեզ ողբքեն։

ՓԵԼԻՔՍ

Դիքն եւ Դեկոս ահիւ զոգիս իմ խուճապեալ տագնապեն։
Սակայն առ Ի՞նչ քեզ այդ տագնապ, չէք աղերից դեռ վլտանդ։
Կարծես զի նա 'ի կուրութեան իւրում յամառ կացցէ ցանդ։
Վազել նորին արդ դիմագրաւ լիւրն 'ի կորուստ ահագին,
Այդ նորընծայ քրիստոնէից անզուսպ եռանդն է նախկին։

ՊԱՒԼԻՆԷ

Թող անդր ըզյոյսըդ զայդ 'ի բաց թէ զնա սիրես տակաւին.
Իցէ թէ 'նդոստ կրօնից 'ի կրօնս անցցէ երկիցս առ օրին.
Թողեալ զ'ի կրօնս հաստատութիւն քրիստոնէից անյեղլի,
Այդէսպի յոգդողդ եւ յեղջմիտ արդեօք նա քեզ կարծիցի։
Զէ այդ վրիպակ 'ի մանկական տիոց արբեալ ընդ կաթին,
Զոր անխորհուրդ միտք կանխակալ յանըզգաստից ընդունին.
Այլ Պոլիկտոս է քրիստոնեայ տենչացեալ այնմ իւրոմի,
Եւ 'ի տաճար անդրը փութեայր խորհուրդ անդարձ 'ի սրբոյն։
Մի՛ քեզ ընդհատ թուեսցի յայլոց, որ քաջ իակ քեզ են ծանօթ.
Մահ եւ տանջանք չածեն նոցա ոչ արհաւիրս ոչ ամօթ.
Ի թըշնամանըս զից հնարին անձանց պարծանքս նաւթ ճեալ.
Երկրաւորացս արհամարհուք՝ 'ի տենչ երկնից եղեւեալ,
Բացող դրբանց նոցին ըզմահ եւեթ իւրեանց համարին։
Ընդ հուր ընդ սուր եւ ընդ կըտտանս ոչ մի ինչ փոյթ է նոցին.
Որ ինչ առ մեօքս է հեշտալի՝ նոյն առ նոսա են տանջանք,
Նոքօք կարծեն լինել ժամն յոր զակին պիշ ունին ցանդ.
Որք 'ի նոցունց մահու չարաւ զուաւին՝ կոչին նահատակք։

ՓԵԼԻՔՍ

Քաջ է ապա, եւ Պոլիկոս ըլլցէ զաղէիցն ըզփափագ։
Շատ է ցայդ վայր։

ՊԱՒԼԻՆԷ

Հայր իմ...

ՏԵՍԻԼ Դ.

ՓԵԼԻՔՍ, ԱԼԲԻՆՈՍ, ՊԱՒԼԻՆԷ, ՍՏՐԱՏՈՆԻԿԷ

ՓԵԼԻՔՍ

Լ,ըցա՛ւ, Ալբին, տուեալն իմ՝ հրաման։

ԱԼԲԻՆՈՍ

Կացին հրամանքդ, եւ Նէարխոն ելցէ ըզվրէժն եղեռան։

ՓԵԼԻՔՍ

Լսես Պոլիկս ըզփողոտեալն չարամահ կենաղրաւ։

ԱԼԲԻՆՈՍ

Լսես, այո. սակայն, աւա՜ղ, 'ի նոյն նախանձ վաւեցաւ.
Նա՝ փոխանակ զարհուրելոյ, տենչայ նրմին հետեւել.
Սըրտալընդեալ եւ անդողդոջ խիզախէ նա անվիհեր։

ՊԱՒԼԻՆԷ

Ձայդ ես կանխաւ ասացի, հայր, սակայն ներեա ինձ դարձեալ.
Եւ թէ աղերս մեծարանացս քեզ չիցէ անընկալ,
Թէ Պոլիկոս գլխաւ երբէք քոյոյ սիրոյդ արժանի...

ՓԵԼԻՔՍ

Պաւլինէ, սէր քո առ փեսայդ անարժան՝ չէ գովելի։

ՊԱՒԼԻՆԷ

Դու զնա ետուր 'ինձ 'ի փեսայ. թէ զնա սիրեմ ես սերտիւ,
Այս գեղեցիկ քո ընտրութեանդ առնէ պարծանս եւ պատիւ.

Վասն նորա ես ընկալայ զքանդակաթ բոց սիրոյս՝
Քաջասահմիկ առն ազնուի եղեալ սրբութեն 'ի Հաճոյս։
Յիս, Հայր. 'ի ինքնէն զաչացու իմոյ հլուծեան ինքնանուէր,
Որով եղէ հնազանդ յաւէրժ առ Հայրենիդ քո պատուէր,
Եւ բովանդակ իմոց կամացս, իմոյ սրբոյս իշխեցեր,
Տուր ինձ փոխան միոմս այսուհետ սիրողաբար քեզ իշխել։
Երդմնեցուցեալ ըզքեզ 'ի սատս քոյին ինձ արդ սոսկալի,
Երդմնեցուցեալ 'ի խանդ սիրոյն զոր նուաճեցն յիս բըռնի,
Մի զոր ետուրըն բառնայցես՝ Հարեալ ընդ բիբ իմ ական,
Զի ծանրագնի յոյժ ինձ եղեւ ընեալ իւր ինձ պատուական։

ՓԵԼԻՔՍ

Կարի է քո այդ ժրտութիւն. է, է եւ յիս սիրտ գըթած,
Բայց չէ հաճոյ ինձ գըթութիւն՝ զոր այդքանոյ թէ ստացայց։
Ցարդարացի ցաւոցդ ըղձիդն այլուր յօգուտ վարեսջիր.
Մի զարտասուսդ եւ զժամանակ վասուեր առ իս 'ի նանիր՝
Առ 'ի շարժել բըռնի յիս գութ. ըշնորհ զոր տալ խոստժեմ,
Բըռնազբօսեալ սակայն 'ի նոյն՝ բացէ 'ի բաց զայն մերժեմ։
Լեր դու պատրաստ ըզհէքըն զայն սեռանել արդ քրիստոնեայ,
Եւ զեմ ըզհետ առնել հանդէս յեռին ճըգանոյ քոց 'ի նա։
Երթ, մի զցասումն յուզեր ըզհօր՝ որ կաթոգին փարի զքեզ,
Եւ գուն գործեա յիւրմէ զփեսայն քո ընդունել 'ի պարգեւ։
Ըզնա ընդ հուլ 'ի տեղւոջ ասա տաց յանդիման ածել ինձ.
Մեկնեաց դու այժմ, եւ թոյլ տուր ինձ գոլ ընդ նըմա խօսակից։

ՊԱՒԼԻՆԷ

Թող եւ ինձ, Հայր...

ՓԵԼԻՔՍ

Երթ, ասացի, մի խոչընդոտան ինձ լինիր.
Ցաւք քո ազդեն 'ի յիս գորով, բայց եւ զայրոյթ զուգակիր։
Ի Պոլիկտոս ցոյց ըզկորով Ջանիցդ ըզնա Համոզել.
Կարձեա առ իս ըզթախանձանս եւ օգտեսցիս առաւել։

ՏԵՍԻԼ Ե.

ՓԵԼԻՔՍ, ԱԼԲԻՆՈՍ

ՓԵԼԻՔՍ

Ասա, Ալբին, որպէս կորեաւ։

ԱԼԲԻՆՈՍ

Իբր ամպարիշտ, իբր անբան.
Արհամարհեալ ըզկեանս, առ ոսն հարեալ ըզվիշտս ամենայն.
Ոչ ապաշաւ, եւ ոչ սոսկումն, այլ անմբռնուն անբարբառ՝
Կայր անընկուն սրբոյն 'ի տոկ, կայր անսասան եւ յամառ.
Զի երկարեմ, զերթ քրիստոնեայ կայր հայհոյանս ժայթքելով։

ՓԵԼԻՔՍ

Իսկ Պոլիկտոն։

ԱԼԲԻՆՈՍ

Որպէս կանխաւն ասացի՝ կայր անվըրդով,
Եւ անընկուն 'ի տեսլենէն՝ եւս առաւել խիզախեր.
Ի մահաբեր բեմն ընդ քարշ բերեալ հազիւ թէ մեկներ.
Արդ աւասիկ կայ 'ի բանտի, եւ անդանօր տեսի զնա.
Սակայն ածեալ 'ի զգօնութիւն զուր ըզնա տեղդ իմ յուսայ։

ՓԵԼԻՔՍ

Եղուկ զնեաւ։

ԱԼԲԻՆՈՍ

Քաղաքս սղջոյն քեզ կարեկից արտասուէ։

ՓԵԼԻՔՍ

Այլոր ինչ ելս տոգնապ չարեաց կըրին՝ նա զայն ոչ գիտէ.
Հոգոց 'ի հոգըս տատանեալ ծրփիմ անդուլալեկոծ.
Վիշաք 'ի վըշտաց միմանց ըզհետ զիս պաշարեն բազմահոծ.
Ընդ ահ ընդ յոյս, ընդ քէն ընդ սեր, ընդ խընդութիւն եւ թախիծ
Տարաբերեալ յանկեաց 'ի կեանըս տագնապիմ ցաւալից։
Ցուզին ելս կիրք ընդդիմամարտք, ոյց ոչ կարեմ գոլ հաստուռ,
Են որ աղէտ աղիողորմ, են որ ուժգին եւ ազդու.

Է՛ որ ըզվեհ ազդէ խորհուրդ՝ այլ կատարել ոչ զօրեմ,
Է՛ որ ըզվատ եւ զանարժան՝ ընդ որ ինքնին ամաչեմ:
Սիրելի հէքն ինձ եւ թշնաւառ, զոր ընտրեցի 'ի փեսայ,
Այլ ատելի վրիպակն անմիտ, յոր պարանեալ նա արդ կայ.
Ողբալ ողբամ ընդ մահ նորա, այլ վայ է ինձ թէ փրկեմ,
Նախատելոյց դիցն ցասումն ահեղ զինի ինձ ընդդէմ.
Ի բարկաձայթ շանթից նոցա եւ Դեկոսի զարհուրիմ.
Կորուստ անդարձ փառաց գահուս, կորուստ հացեալ կենացս իմ:
Այսպէս 'ի ծուփքս վարանեալ դիմադրաւեմ մերթ 'ի մահ,
Մերթ 'ի կորուստ նորին մրզէ զիս կորըստեան իմոյ ահ:

ԱԼԲԻՆՈՍ

Զաներոյն գութ ընդ փեսային ներէ անշուշտ եւ Դեկոս.
Զէ սինլքքոր եւ անանշան օր յարենէ Պոլիկտոս:

ՓԵԼԻՔՍ

Քրիստոնէից 'ի պատուհաս հրաման է բուռն 'ի նմանէ.
Բազմավրտանգ եւս օրինակն է երեւեալ 'ի բարձուէ.
Ակնառութիւն ոչ է օրէն ուր դան ոճիրք յերեւան.
Եւ առաջնին մեղք քօղարկեալ անպատուհաս եթէ մնան,
Ո՞ր օրինօք եւ կամ որով իշխանութեամբ մարթի իցէ
Պատուհասել յանձն օտարին զոր ոք իւրոցըն ներէ:

ԱԼԲԻՆՈՍ

Թէ դու քեզէն չիշխես առնել զայդ մեծարանս երեսաց,
Ինքնակալին տաջիր աղերս ներելնորին յանցանաց:

ՓԵԼԻՔՍ

Կորուստ անշուշտ 'ի Սեւերեայ եկեալ հասցէ ինձ յայնժամ.
Ի մեծասաստ վրիժուց նորա զահէն հարեալ եւ խիթամ:
Զոճիրն ահեղ անպատուհաս եթէ թողից ընդ երկար,
Թէպէտ իցէ ազնըւախոհ, թէպէտ ներող բարերար,
Սակայն զի մարդ է դիւրազգաց եւ անդոսնեալ եւս յինէն,
Յուսակըտուր ըզսիրուհւոյն իւր կորուսեալ ըզՀիմէն,
Ծանրացաստումն ընդ իս՝ զայրոյթ նորին պատեհ կալեալ զայն,
Եւ զԴեկոսի ածեալ զինեւ ըզսաստ՝ արկցէ զիս կործան:
Անարգանաց 'ի վրէժ եւ զինչ ոչ ճահ թըւի եւ օրէն.
Դէպք եւ պատեհք 'ի ցըրտացեալ իսկ սիրտ հրապոյրս արկանեն:
Իցէ թերեւս (եւ զոր ասեմըս չէ եւ չէ կասկած սին)
Զի առկայծէ յուսոյ նըշոյլ 'ի սիրտ նորա վերբըստին,

Ըզպոլիկտեայ մահ մօտալուա տեսանելով զառաջեան՝
Դառնայ ի սեր, զոր էր մերժեալ ի սըրտէն յոյժ դըժուարաւ։
Տես դու ինձ արդ թէ յապառու

Եւ ոչ բանտին ինձ անկասկած թշնամին պատուարքն ամբաստանեան.
Ամենոյն ուժգին տեսի զնոքօք խրատնեալ արտասուս 'ի յակատ.
Ընդ ըստնութիւն նոցա խիստ:

ՓԵԼԻՔՍ

Հապա հանցի նա անտի,
Եւ անկասկած 'ի նոցանէ ասա ըզգուշեաւ պահեսցի:

ՍԼԻԻՆՈՍ

Դու ինքն ապա հանջիր ըզնա, եւ զխուժանին մոլեալս,
Ըզմեծ ցասումն յուսով շնորհի նեղոցութեանդդ զկնքս:

ՓԵԼԻՔՍ

Ոն երթիցուք. եւ յամառեալնա թէ կացցէ քրիստոնեայ,
Հրաման զանխուլ տացուք առնել որ ինչ արժանն է ընդ նա:

ՀԱՆԴԷՍ ՉՈՐՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա.

ՊՈԼԻԿՏՈՍ, ԿԼԷՈՎՆ, ԵՒ ԱՅԼ ԵՐԵՔ ՉՈՐԱԿԱՆՔ

ՊՈԼԻԿՏՈՍ

Զ՞ինչ իրք իցեն, ով զօրականք։

ԿԼԷՈՎՆ

Քեզ Պաւլինէ դայ ի տես։

ՊՈԼԻԿՏՈՍ

Ո՛վ տեսութիւն, ահեղազոյն է ինձ մարտիս այս հանդէս։
Ըղբեղ, Փելիքս, անդ ի բանտին տեսի ըղբեղ անտասան,
Ծաղը ըզսատիւք քովք արարի, մարտեայ ընդ քեզ յաղթական.
Աւդ դու ի վեր՛ դերդեա այլ մարա՝ ազդողագոյն առեալ զէն,
Ոյր արտասուք ինձ քան դահճաց ըսպառնալիք ահեղք են։
Ով Տէր իմ՝ տեր, որ տեսանեսցդ զայս հասեալ ինձ վերանգ,
Յաւել, մաղթեմ՝, ինձ ի տարընտալ ժամուս լինել օժընդակ։
Եւ որ դեռ եւս յասպարիզէ մարտիդ ելեալ յաղթական՝
Պըսակազարդ յերկնից դէտակն յայս արկանես մըրցարան,
Դու, սիրեցեալդ իմ՝ Նէարխոս, հաս ի թիկունս ինձ եւ դու
Բարեկամիդ քո ինձ ի դոս մարտիս լինել ձեռընտու։
Օն, պահապանքըդ, ժըխտիցէք զայս ինձ ըսպասս հարկանել.
Ոչ թէ ի խիստ պատուհասէ ատսի խընդրեմ՝ խուսափել,
Քա՛ լիցի այդ ինձ վատութիւն թէ զերծանել խնդրեցից.
Այլ քանզի շատ է ինձ ի պահ ըդգուշութեան կալ երից,
Զորրորդդ ինձ մեծ առնէ շընորհ թէ ի խընդիր Աւետեայ,
Եթէ չիցեն ձեզ այն ի վտանգ, առ ի հաճել զիս երթայ։
Թէ զկարեւոր գաղտնիս ինչ զիմ ասել՝ նըմա կարացից,
Նա բարեբաղդ կեցցէ յետ իմ՝, եւ ես մեռայց խընդալից։

ԿԼԷՈՊԶ

Թէ քո այդպէս հրաման է մեզ, ահաւասիկ երթայց ես։

ՊՈԼԻԿՏՈՍ

Վարձ, զոր շնորհէ մահ զի ես տաց, զայն Սեւերոս տացէ քեզ։
Օ՜ն ապա երթ, մի դանդաղիր, եւ ճեպեսցիս այսր 'ի դարձ։

ԿԼԷՈՊԶ

Յական քրիստոնէլ թագուցեալ, ոմ տեր, դառնալ առ քեզ փութացայց։

ՏԵՍԻԼ Բ.

ՊՈԼԻԿՏՈՍ

(Պահապանէն կան Մելոսէ)

Աղբերք բերկրութեանց եւ աղունց մրթեր
Պատրող հեշտութիւնք, զի՞ կայ իմ եւ ձեր։
Մարմնոյ ւաշխարհի սէր ամօթապարտ,
Էր լաբեալք յինէն՝ ոչ թողուք զիս ցարդ։
Օն ա՜նդր 'ի բացէ, դրդանք եւ պատիւ,
Որք ընդդիմամարտ բերէք ինձ կրռիւ.
Վայելք ձեր համայն
Խուսեն անկայուն
Ի քրիստոնէլ ական.
Զերդ նուրբ ապակի
Զի շողոյ փայլուն,
Այլ վաղ խորտակի։

Զեզ ոչ տենչացայ, Ջանայք 'ի նաներ
Ի հրապոյրս աղուս ածել ինձ պատիր.
Զուր ինձ ցուցանէք զատուածամարտից
Ընդ ոլորտս երկրի զկենցաղ բերկրալից։
Անդուսա եւ երկինք ցուցանեն փոխան
Զարդարք վերիժուց նոցուն դատաստան,
Որով դահավէժ
Գոռոզք տան վերէժ.
Ա՛ոկախեալ երկանին

Իջանէ յանկարծ
Յերջանկին դագաթն
Մինչ կայն անկասկած։

Խուժադուժ Դեկոս, վադր արիւնարբու,
Քեզ Բարձրեալն յերկար թէ զիւրսքն թողու,
Ցերջանիկ բաղդիդ զահաւոր վախճան
Վայրիկ մի եւս այլ՝ տեսցես քեզ ժամն.
Վրիժառուն Ըսկիւթ գայ թափել 'ի քէն
Ցարեան վրկայիցն եւ Հայոց ըգքէն.
Փըրկութիւն քեզ չէր,
Ճայթեցին յամլոց
Երկնասաստ շանթիք,
Ընկըրկին ոչ եւս՝
Ի գեղջ եւ 'ի կոծ
Թէ եւ աշխարես։

Թող ցասմանդ 'ի սպանդ փեղիքս գիս զենու.
Ցաչսքն շըլացոյց նախանձորդն հուժկու.
Թող մահուամբս ըզնա կալցի իւր փեսայ,
Եւ ըստրըկաբար մարդիս տիրանայ.
Ոչ ինչ դըժկամակ եղէց ես ընդ այն,
Այլ են իմ տենչանք, ըզձանամ մահուան։
Ոչ եւս ինչ ունիս,
Աշխարհ, դու ընդ իս.
Սիրա իմ Աստուծոյս
Բոլբոլի 'ի սեր.
Ըզհարան իմ բարւոյս
Համարիմ արդեալ։

Ո՛վ վըսեմ խորհուրդք եւ սուրբ հեշտութիւն,
Ի՞ՐՐ ըզձիւք ձեր սիրտ առնի պատարուն.
Ի սուրբ 'ի հրապոյրս ըզմայլեալ հոգի
Ոչ եւս 'ի տեսիլ էից պարանի։
Առաք 'ի խոստմունս եւ առատադոյն
Պարգեւաց 'ի տուրս յորդեք լուսթիւն.
Կեանքդ այդ յամերամ,
Եւ մահ երանեակ
Որում ըզձանամ,

Քուն է անուշակ
Եւ անոյք 'ի հաճոյս,
Յանդիմեր 'ի լոյս։

Քեզ, աստուածավառ հուրդ անշիջական,
Քեզ ըզՊաւլինէ տեսից անսասան։
Ահա տեսանեմ, եւ վառ 'ի սուրբ սէր,
Ոչ ըզգամ գեղոյն, որ զիսքն գերէր.
Այլ իմ պատարուն լուսոյն երկնային՝
Յաչացն 'ի շողիւն ոչ եւս բըլշակնին։

ՏԵՍԻԼ Գ.

ՊՈԼԻԿՏՈՍ, ՊԱՒԼԻՆԷ, ՋՕՐԱԿԱՆՔ

ՊՈԼԻԿՏՈՍ

Ա՛ռ ինչ, տիկին, դալուստդ այսրէն. մարտ ինձ ազդէ, թէ խրախոյս.
Զբքնաղ սիրոյդ 'ի պերճ հանդէս ընկճէլ զիս գաս, թէ յիմ կոյս.
Ամենուրեքին առեալ բերես, թէ զհաշտութեան սուրբ ըզսէր.
Պէս թըշնամւոյ գիմեալ առ իս, թէ սրբտակից իմ ընկեր։

ՊԱՒԼԻՆԷ

Քեզ թըշնամի չիք բայց 'ի քէն. դու զքեզ տեես, այլք սիրեն.
Դու եւ զերազն իմ, դու միայն 'ի լուսին աճես համբրէն։
Մի՛ դու զքոյին նիւթեր կորուստս, կամեաց միայն՝ եւ կեցցես.
Թէպէտ մեծ յոյժ ոճիրքդ իցեն, խնայեա անձինդ՝ եւ քաւես։
Ցո՛ւշ քեզ լիցին յոյց յարենէ բողքոքէցար շառաւեղ,
Յո՛ւշ արութեանցդ հանդէս չբքնաղ եւ լաւութիւնքդ ըքեղ.
Ինքնակալին գոս մեծարոյ, ժողովրդեան ցանկալի,
Եւ մարդպետի Հայաստանեայցըս դու փեսայ սիրելի.
Զմիշտ ինչ զիմ քեզ հարսնութիւն. որ ինձ բաղդ մեծ՝ քեզ չէ ինչ.
Այլ արութիւն քո, զարմ տոհմիկ և զօրութիւն տես դու զինչ
Ընծայեն յոյս, եւ մի թողուր գահճաց 'ի ձեռս անձնատուր
Զոր խոստանայն բաղդ գեղեցիկ արդար ըղձից մեր 'ի լուր։

ՊՈԼԻԿՏՈՍ

Ինձ առաւելն իսկ է ծանօթ. ըզպարծանս իմ գիտեմ ես,
Եւ 'ի նոցունց քաջարութեամբը որ ինչ յուսալ իցէ մեզ.
Այլ յի՞նչ, աղէ, յանդիցին այնք, բայց 'ի բարիս անցաւոր,

Որոց ըղձեաւ դան բիւր վրտանգք, վերդովեն հոգք բիւրաւոր.
Բառնայ 'ի մէջ մահ զամենայն, լինիմք բաղդիս խաղալիկ.
Այսօր 'ի գահ արքունական, վաղիւ յարեան ճապաղիք.
Գրգուեալքն 'ի բաղդ գեղանրսեհ եղեն տրժգոհք առաւել.
Քանի՞ նուազունք 'ի կայսերաց կացին փառացն 'ի վայել:

Է՛, է եւ յիս փառաց անձուկ ապնրաւգոյն եւ վրսեմ.
Վաղանցիկ այդք են մեծութիւնք, զանանցականսն խընդրեմ,
Ջերջանկութիւն աներկեւան, որ ոչ է չափ, ոչ պայման,
Որ մախանաց գեր 'ի վերոյ, գեր 'ի վերոյ բաշխից կան:
Մի՛ ծանրաղնոյ լեցի ստանալ ինձ զայն ընդ այսոց կենաց,
Որ թէ կանուխ թէ անադան բարձցին յինէն յեղակարծ,
Ոյց փախըստեայ են սուղ վայելք եւ կեղակարծ ապադայն:

ՊԱՒԼԻՆԷ

Քրիստոնէիցդ ձեր երազք են այդոքիկ ծաղրական.
Աւասպելեաց հրապոյրք ըղձեզ տեսեք զիարդ կախարդեն.
Ոչ ինչ արիւնքդ ձեր թըւին ընդ այնոցիկ փոխարէն:
Այլ կարծիցէք անօրէն ըստ կամս արեան ձերոյ գոլ եւ տէր.
Զէ իսկ եւ չէ ըզկեանս հանգոյն ժառանգութեան առեալ ձեր.
Այլաբէն օրն կենստու եւ պարտուց ձեզ պայման,
Եւ աշխարհի եւ Պետութեան եւ արքայի պարտիք զայն:

ՊՈԼԻԿՏՈՍ

Զայն մըտադիւր գնէի 'ի մահ վասն նոցա 'ի մարտի.
Գիտեմ ըզժամն եւ ըզպայման եւ թէ որ փառք են անտի:
Հարց եւ հաւուց Գեկեայ պարծանքն 'ի ձէնջ գովեալ մեծապէս,
Եւ սիրելի անուն այն ցարդ Հռոմայեցւոցդ եղեալ ձեզ,
Նա արդ 'ի գլուխ վեցեակ դարուց վերամբարձաւ ինքնակալ:
Վասն արքայի եւ աշխարհի զարիւնս, այո, պարտիմ տալ,
Այլ առաւել եւս Աստուծոյ իմոյ՝ որ զայն ինձ շնորհեաց.
Թէ 'ի վերայ արքայի տալ զանձն ելցէ բաղդ գերազանց,
Իսկ քանիցն վասն Աստուծոյ որ զանձն 'ի մահ որ թէ տայ:

ՊԱՒԼԻՆԷ

Ո՞ր այն Աստուած...

ՊՈԼԻԿՏՈՍ

Պաւլինէ, զգոյշ, ըզբանըս քո լըսէ նա.
Զէ նա Աստուած հանգունատիպ կըռոց քոց սին թարմատար,
Թուլ, անըզգայ, համր եւ անշարժ, յոտից ձեռաց ապիկար,

Ոչ ասկեՃոյլ եւ կամ վիմարդ ըստ քիմքս ձեր կոփածոյ.
Քրիստոնէից է նա Աստուած նա եւ իմ է, նոյն եւ քո.
Յերկինս 'ի վերջ չէք այլ Աստուած եւ ոչ յերկիր 'ի խոնարհ:

ՊԱՒԼԻՆԷ

Երկիր դու պագ նըմա հոգւով, մի 'ի վերոյ ցոյց ինչ տար:

ՊՈԼԻԿՏՈՍ

Զի քրիստոնեայ եւ դիցապաշտ կամիս համայն թէ իցեմ:

ՊԱՒԼԻՆԷ

Կեղծեա առ ժամն՝ մինչեւ Սեւերը դնասցէ ասսի տարադէմ,
Եւ հօրն իմում լիցի պատեհ ըզգուութ 'ի քեզ ցուցանել:

ՊՈԼԻԿՏՈՍ

Ինձ ցանկալի է Աստուծոյն իմոյ գլթոյն հանդիպել,
Որ կենցաղոյս զիս 'ի վտանգաց յափշտակեալ 'ի վերոյ,
Եւ ոչ թողեալ ինձ ժամանակ յեւս ընդ կըրուանին հայելոյ,
Յասպարիզիս 'ի գլուխս կապէ ինձ գլթութեամբ ըզսրսակ,
Յանդորր աճեալ նաւահանգիստ 'ի նախկին շունչ աջողակ,
Ըզնորաճնեալս յաւազանէն յուզարկելով զիս 'ի մահ:
Ո՛հ, Պաւլինէ, թէ գիտէիր զինչ կեանքս իցեն գիւրասահ,
Եւ բարեբազդ մահուս այս որ քաղցը վայելք յաջորդեն...
Այլ ծածկելոց գանձուց այս ճառք, աւաղ 'ի զուր նոցին են,
Զորոց չեւ եւս աստուածային շնորհ ըստիրտսըն շարժեաց:

ՊԱՒԼԻՆԷ

Ո՛վ անողորմ դու, ժամ է արդ զի զկիրս անձին մերկացայց,
Եւ ապաշնորհ սիրտ քո հարցի 'ի կըշտամբանս իմ արդար.
Այս իցէ քո հարսանեկան սիրդդ ինձ ցոյց զոր երգուար.
Այս քո սըրտիդ գութ կարեկից զոր ցուցանես ինձ հիգիս.
Լըռեցի ցարդ զոզորմ աղէտս յոր յուսահատ թողուս զիս,
Կարծեալ թէ շատ իսկ սեր ընդ իմ լիցի առ քեզ բարեխօս,
Որ զի եւ չեն իսկ ինձ հաճոյ աղաղաւանք ըբռնաղբօս:
Այլ սեր անկեղծ, զոր խոստացար դու ինձ յաւերժ անյեղլի,
Եւ զոր կալայն ես միշտ առ քեզ ամրապահեստ 'ի սրտի,
Իցէ՞ թէ գէթ 'ի ըքանելդդ զիս այսպէս առ 'ի մահ՝
Յօղեսցէ շիթ մի արտասուաց յոգւոց հանեալ ընդ իս ահ:
Լըքանես զիս, ո՛վ ապաշնորհ, եւ զոհութեամբ ըքանես,
Ոչ ծածկեալ զայն, ըզխընդութիւն սըրտիդ ցուցեալ յայտնապէս,

Անկարելիր սիրա քո իմոց դառն աղիտից 'ի կըսկիծ,
Երջանկութիւն ցնորք անձին որում չիցեմ մատակից։
Տաղտուկ ուրեմն հարսանիքքս մեր ածին քեզ յինէն.
Հարսն ընծայեալ քեզ Պաւլինէ եւ ատեցա՛ւ նա 'ի քէն։

ՊՈԼԻԿՏՈՍ

Եղուկ։

ՊԱՒԼԻՆԷ

Քանի՞ դըժուարաշարժ բերին ըրթունքդ յայդ եղուկ.
Ա՜յլ այդ թէ սկիզբն էր շարժելոյ սըրտիդ դուշակ 'ի փըղձուկ,
Բըռնաղբօսիկդ իսկ այդ քանի՞ քաղցր ինձ գոյին հառաչանք։..
Վա՜ղ վա՜ղ, յուղին դուիթք իւր ահա, աչք 'ի յարտօսրը Թանան։

ՊՈԼԻԿՏՈՍ

Թանան, այո, աչք իմ յարտօսր, եւ ո՞ այնց տայր զորութիւն
Զընդդիմամարտ խըստացելոյ սըրտիդ կակղել ալընդութիւն։
Ողորմ աղէտք յոր ղքեզ թողում՝ են արտասուաց արժանիք,
Զոր կարեկից հոսէ դորով սիրոյն իմոյ հաւատիք.
Եւ թէ երբէք մարթեն երկինք ցաւոց լինել ընդունակ,
Լացից ես անդ, լացից ըղքեզ 'ի յաղիտիդ յիշատակ։
Բայց յօթեւանս անդ լուսաճեմ երանաւէտ խորանաց
Եթէ լուիցէ արդարադատ եւ բարերարն ինձ Աստուած,
Թէ հաճեսցի ընդունել զուխտ հարսանեկան իմ սիրոյս,
Ըղկուրութեանդդ քո խաւար փարատեսցէ յիւրն 'ի լոյս։
Այո, ով Տէր, զայդ 'ի քումմէ բարութենէդ յուսամ ես,
Զի արժանի քրիստոնէի է ուղղութեանցն իւր հանդէս։
Զէ մարթ նրմա այսքան բարեօք գոլով 'ի քէն ճոխացեալ,
Զբաճանաչել ըզքեզ, եւ ոչ զուրկ 'ի սիրոյ քումմէ կալ՝
Գերեալ յանլոյծ 'ի դըժոխոց սարիս ըստրուկ վատշուէր,
Ծընեալ ընդ խիստ նոցին լծոյվ եւ 'ի նրմին մեռանել։

ՊԱՒԼԻՆԷ

Զի՞նչ բարբառիս, ով վատաբախտ, եւ զի՞նչ շըրթունքդ ինձ մաղթեն։

ՊՈԼԻԿՏՈՍ

Զոր բովանդակ արեանս 'ի գին ցանկամ առնուլ փոխարէն։

ՊԱՒԼԻՆԷ

Նա մանաւանդ...

ՊՈԼԻԿՏՈՍ

Մի վայրապար ըստահակիր դըժկամակ,
Յեղակարծում շարժէ Աստուած ընկճեալ ըզսիրտս վայրապ։
Զեւ եւս իցէ երանաւէտ օրն այն եւ ժամ հասեալ արդ.
Հասցէ անշուշտ, այլ երբ եւ ուր զիտեալ այժմէն չէ ինձ մարթ։

ՊԱՒԼԻՆԷ

Թոյլ անդր ըզգնորս, եւ ցոյց ինձ սէր։

ՊՈԼԻԿՏՈՍ

Ըգքեզ սիրեմ եւ այո,
Յոյժ քան զԱստուածն իմ 'ի ստորեւ, այլ յոյժ քան զիս 'ի վերոյ։

ՊԱՒԼԻՆԷ

Երդմնեցուցեալ ըզքեզ յայդ սէր, մի զիս անխնամ ըլքաներ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Երդմնեցուցեալ ըզքեզ յիմ սէր, լիջիր ուղղոյս իմ ընկեր։

ՊԱՒԼԻՆԷ

Ո՞չ շատ իցէ թողուլ քո զիս, եւ կախարդել իսկ հնարիս։

ՊՈԼԻԿՏՈՍ

Ոչ շատ է գնալ ինձ 'ի յերկինս, անձկամ լինել քեզ ընդ իս։

ՊԱՒԼԻՆԷ

Ջառանցելոց մըտաց ցընորք։

ՊՈԼԻԿՏՈՍ

Ճըշմարտութիւն երկնառատ։

ՊԱՒԼԻՆԷ

Ո՞վ կուրութիւն տաբօրինակ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Յաւէրժ լուսոյն ճառագայթ։

ՊԱՒԼԻՆԷ

Այսպէս ուրեմն ընտրեսս ըզմահ գեր Պաւլինեայ քան ըզսէր։

ՊՈԼԻԿՏՈՍ

Այդպէս ապա սիրես զաշխարհ քան բարութեանց դու ըզՏէր։

ՊԱՒԼԻՆԷ

Երթ, խըստասիրա, Ճեպեա 'ի մահ, ընաւ իսկ դու զիս ոչ սիրես։

ՊՈԼԻԿՏՈՍ

Կաց բարեբաղդ դու 'ի յերկրի, եւ յանդորրու զիս թողցես։

ՊԱՒԼԻՆԷ

Թողից, այո, այժմ յանդորրու թողից ըզքեզ, հանդարտ լեր։
Ահա երթամ...

ՏԵՍԻԼԴ։

ՊՈԼԻԿՏՈՍ, ՊԱՒԼԻՆԷ, ՍԵՒԵՐՈՍ, ՓԱԲԻԱՆՈՍ։
ԶՈՐԱԿԱՆՔ

ՊԱՒԼԻՆԷ

Այլ քո առ ինչ դալուստդ այսրէն, ով Սեւեր։
Աղնըւական վեհանձն ոգիդ, ո՞ր երբէք հաւատայր,
Զի նուաստացի գալ եւ 'ի վայր այսքր հիքին ոսընհար։

ՊՈԼԻԿՏՈՍ

Ցառաքինւոյ չքնաղ հանդէս թիշնամանես, Պաւլինէ։
Ի յաղաչանս իմ խոնարհեալ՝ ներողաբար այց առնէ։
Տըմարդութեանս իմում այսմիկ, մաղթեմ, դու տէր իմ, ներեա,
Յոր՝ պարաւանդ 'ի կապանաց՝ բըռնադատեալ ես բերայ։
Գանձու մեծի ժառանգաւոր ըստ ոչ իմոց արժանեաց,
Թոյլ արա ինձ՝ զի կենդանեաւ զաւանդն ինքնին 'ի քեզ տաց,
Եւ զոր 'ի ընաւ հարստանս երկինք մեծափարթամ օժտեցին՝
Ըզշնաշխարհիկ 'ի դեղ 'ի զարդ առաքինի ամուսին՝
Ան արժանւոյ թողից 'ի ձեռս եւ 'ի քաջաց քաջադին,
Դան զորքս ծնաւ երբէք Հըռոմ եւ ամենզերք պաշտեցին։
Արժանաւոր դոս դու վեսայ, նա հարսըն քեզ արժանի։
Մի յամուսնոյն ձօնեալ ձեռաց՝ քեզ արհամարհ թըւեսցի։
Թէ զձեզ կենաց նա բաժանեաց, մահուամբն անդրէն զգուեսցէ։

Եւ գեղանի խանդից ձեր բոց մի մեայլ առցէ յայնմանէ։
Նըմա դու զսիրտ քոյին մատո, եւ զիւրն ընկալ աջակից.
Կեցցիք անարատք եւ բարեբախտք, մեռցիք ըստ Հանդոյն ինձ.
Եկեալքանչիւր ձեզ Պոլիկտոս մաղթէ բարեաց զայս վայել։
Հապա տարայք զիս առ 'ի մահ, չքնայ ինձ այլ ինչ ասել։
Օ՜ն, զօրականք, իմ զամենայն ինչ վերճարեալ՝ ձեզ մընամ,

ՏԵՍԻԼ Ե.

ՍԵՒԵՐՈՍ, ՊԱՒԼԻՆԷ, ՓԱԲԻԱՆՈՍ

ՍԵՒԵՐՈՍ

Ընդ կուրութիւն մըտաց նորա յապուշ հարեալ զարմանամ.
Ընդ անկեղլի հաստատութիւնն, ընդ անյողդողդ միտս իւր
Թերահաւատ լեալ յերկուանամ՝ 'ի լըսելեացս իսկ 'ի լուր։
Սիրտ որ 'ի սէր քո բորբոքեալ, (եւ ո՞ր այն սիրտ վայրենի,
Որոյ յարեալ դամ մի 'ի գեղդ՝ եւ ոչ 'ի սէր պարանի)
Եւ որ 'ի քէն սիրեալ փոխան՝ այն ինչ ըզքեզ ըստանայ,
Թողու յօժար ըզսարփալին եւ ոսոխին տեղի տայ.
Եւ իբրու այն թէ բոց սիրոյդ ձօն 'ի ձախող գոյր բաղդէ,
Ինքն իւրոյի նախանձորդին իւրում առեալ ընծայէ։
Ո՜հ, արդարեւ քրիստոնեիցդ աղանդ է յոյժ մոլեկան,
Եւ կամ թէ ոչ՝ երջանկութիւն պահի նոցա անվախճան.
Յորոյ 'ի յոյս վառեալ նոցա արիաբար ընդոտանեն
Զոր եւ 'ի գին արքունական թագի զընել էր օրէն։
Եթէ բաղդին ոչ յիս խեթիւ էր ակնարկեալ այսանակ,
Այլ յաջողեալ ինձ հարանութեամբ քով պըրսակել զիմ վասակ,
Ի լուսափայլ աչացդ 'ի բաց պաշտեի ես եւ ոչինչ.
Նոքա իմ տեր եւ թագաւոր, նոյնք եւ ատուած գոյին ինձ.
Եւ նաեւ յաճիւն լուծեալ 'ի հուր գնեի փոշի 'ի կոխան,
Եւ ապա թէ...

ՊԱՒԼԻՆԷ

Շատ է արդ, բանք քո երանեն ըստ արժան,
Եւ բոց խանդից քոց 'ի նախկին տարփից սիրոյդ առեալ վառ՝
Գուցէ չարեաց ինչ լինիցի երկաբանչիւր մեզ պատճառ։
Այլ քեզ, Սեւեր, քաջածանօթ իցէ 'ի սպառ Պաւլինէ։

Ահաւասիկ առ դուրս իմոյս Պոլիկտեայ մահ ժամանէ.
Փոքրը միւս եւս, եւ այլ, աւաղ, ոչ եւս լցէ Պոլիկտոս.
Թէպէտ անպարտ դու յարենէն, սակայն պատճառք մահուն գոս։
Թէ 'ի հրապոյրս երբէք ըղձից քոց սիրտ քոյին դիւրամէտ՝
Մահուամբ նորա կարծէ ժամն գոլ յանձկալին իւր 'ի կէտ,
Զէր, գիտասջիր, մահ երջընդակ, յոր ոչ երթայց անվերջեր,
Ոչ արհաւիրք խիստ գըժոխոց, այլ ոչ տարայց վըշտամբեր,
Զի մի փառացս ածից մըռայլ՝ ձեռքն տրեալ հարսնութեան
Ամմամ՝ որ պատճառք՝ թէ եւ փոքրս՝ լեալ եղկելոյն կորըստեան.
Եւ թէ յուսովդ այդուիկ կարծիս զայդ վատուլթեան ինձ դընես,
Սէրն իմ նախկին յոր յուսացարն՝ յատելութիւն դարձցի քեզ։
Եթէ վերանձն ես, հնապա լեր դու անխոտոխ մինչ 'ի սպառ.
Ի քէն արդ հայրն իմ ակնածէ, տայ զոր խընդրեսն անպատճառ.
Նա Պոլիկտոս, գիտես եւ զայս, քո վասն 'ի սպանդ տայ այսօր.
Լեր եղկելոյն դու կեցուցիչ, լեր ապաւէն դու հըզօր։
Ոչ է թեթեւ ինչ քաջ գիտեմ՝ խընդիրս իմ այս առ 'ի քէն,
Բայց ծանրագոյն ճըգանցդ 'ի կշիռ փառք մեծագոյն քեզ յորդեն։
Կեցս զոսոխ քո նախանձորդըդ լեալ անձին յաղթական.
Աւաքինի այս հանդէս քեզ է միայնոյ սեփական։
Թէ իղձք փառաց եւ համբաւոյ չիցեն քեզ շատ 'ի գըրգիռ,
Զէ գոյզն եւ այն՝ զի սիրուհին քո զոր սիրով սիրեիր,
Եւ յոյր ողջք այժմ իսկ արդեօք չէ անընդոստ սիրտ քոյին,
Ընծանձնութեան քում շնորհապարտ ընկալցի զերբ անձկալին։
Յուշ 'ի վերջէ քեզ լիցի այս զի դու նա ինքն ես Սեւեր։
Ողջամբ մընա. տես առանձին զոր ինչ մընայ քեզ ընարել.
Եթէ չիցես դու այնպիսի որպիսի ոք ինձ կարծիս,
Լաւ եւս իցէ չգիտել ինձ զայն, զի պատուական ինձ լիցիս։

ՏԵՍԻԼ Զ.

ՍԵՒԵՐՈՍ, ՓԱԲԻԱՆՈՍ

ՍԵՒԵՐՈՍ

Դէպք դըժընդակ, Փաբիանե. որ չանթ դարձեալ ամբահար
Զերջանկութիւն իմ դիր եւ տար ցընդեսց զերդ ծուխս հողմավար
Որչափ առ իս մնա կարծէի, նոյնչափ այն խոյս ետ 'ի բաց.
Թրբեր 'ի բուին ինձ զայն ունել, եւ կորուսի յեղակարծ։

Բաղդն ոխերիմ անդուլ 'ի կռիւ դարանի ինձ հետամուտ.
Դա ինքն ըզյոյս իմ չեւ ծընեալ հեղձուցանէ մնալուտ :
Մինչչեւ յաղերս կացեալ շնորհին, մերժիմ անլուր. ակընկոր,
Թախծեալ 'ի սիրա, լի ամօթոմ խուճապիմ յար անանդորր,
Տեսեալ անդրէն յիս վատութեամբ իշխեալ ըզյոյս 'ի ծնանել,
Եւ անարդ եւ ըս վատութեամբ իշխեալ իմ զոյն 'ի յայտնել.
Այն զի յաղէաս իմ կին մի ինձ մեծանձնութիւն թելադրէ :
Զբնաղ հոգիդ քոյին է հէք համայն եւ վեհ, Պաւլինէ,
Սակայն եւ խիստ՝ որչափ վեհանձն արիութեամբ գերազոյ.
Յաւք անսոզոք ըզտարփածուելի գերին ըզսիրտ 'ի սէր քո :
Զեցէ՛ ինձ շատ կորուստ քոյին, պա՛ռտ իցե՛ զքեզ տալ 'ի նուէր՝
Բսպաս տարեալ նախանձորդիս որ լքանէն ըզքո սէր,
Եւ ճիգն 'ի ջան առաքինի ելեալ եւ գութ անիրնայ՝
Զնա 'ի մահուն թափել ժանեաց, տալ զքեզ 'ի գիրկըս նորա :

ՓԱՌԻԱՆՈՍ

Թող զառաջնորհ զայդ ազդատոհմ 'ի հաճոյս անդրը բաղդին.
Դա, թէ կամի, զհայր ընդ դրատեր եւ ըզիեսայ ընդ հարսին
Եւ զՊոլիկտոս ընդ Փելիքսի ածցե՛ 'ի սէր հաշտութեան.
Իսկ դըժընդակ քոյոց ճըգանցդ իմ՝ ակն ունիս դու փոխան :

ՍԵՒԵՐՈՍ

Ըզյանկալին ինձ ըզպարծանս՝ զի հոգին այն գեղանի
Տեսցէ զՍեւեր զուգապատիւ իւր եւ իւրեան արժանի,
Եւ զի նա էր ինձ վայելուչ, այլ դից հրամանք դիմամարտ
Զիրձս 'ի դերեւ հանեալ սըրտիս՝ անիրաւին տարապարտ :

ՓԱՌԻԱՆՈՍ

Մի՛ դու զերկնից բառնար բողոք եւ մի՛ զբաղդին զբրկանաց,
Այլ զոր քեզէն անձամբ անձին նիւթեաս չարիս՝ յայն հայեաց.
Քաջ մըտասոհ լեր, տեր, 'ի վանդն յոր դիմագրաւ արշաւեա,
Զայր քրիստոնեայ կեցուցանել յանդըգնաբար թէ իշխես.
Մի՛թէ չգիտես զիարդ աղանդդ այդ ամպարիշտ եւ մոլի
Ի եւ եղեւ ինքնակալին միշտ Դիկոսն ատելի :
Գուցէ եղեռնըդ մեծ գրեսցի յանմերելի քեզ ոճիր,
Եւ 'ի շնորհայ նորա 'ի սաստ անկցիս չարեաւ տարագիր :

ՍԵՒԵՐՈՍ

Իցեն խրատաբդ այդ փոքրոգի վատաց 'ի ճահ խուժանին :
Բաղդն իմ եւ կեանք թէ կան Դիոկեայ ինքնակալի 'ի ըրքին,

Այլեմ գեռ եւ բս Սեւերոս, եւ նորայն մեծ զօրութիւն
Զունի իշխել խմոյ պատուոյս եւ ոչ պարտուցս իմ համբուն։
Հարկ է լինուլ զայն զոր յինէն պատուն իմ արդ պահանջէ,
Եւ բաղդն ապա, ըստ յեղյեղուկ կոյր հաճոյիցն իւր ի ընէ.
Ինձ օժանդակ կամ ոսերիմ թէ յարիցէ հակառակ,
Ցաց մտադիւր զանձն իմ ի մահ փառաց քաջի յաղթանակ։
Նա զառաւելն իսկ ասացից, խորհրդաբար թէ լսես,
Ոչ է աղանդոր քրիստոսեանց որ ինչ կարծին այլապէս.
Ասելիք են, սակայն առ ինէ՝ զայն ես երբէք ոչ լուայ.
Եւ յայսմ եւեթ անիրաւեալ Դիոնս ի զուր խրատանայ։
Եղեն երբեմն իղձք հետաքրքրաք ինձ առ ի խոյզ ճշմարտին.
Կախարդասարք նորա դժոխոց արբանեակք կիւսք համարին.
Եւ որ պաշտին ի նոցանէ գաղտնեաց խորհուրդք մեզ անհայտ,
Նոքին կարծեաք՝ մահու չարաւ կերբեն ըղխատ պատուհաս։
Այլ ելեւսեանքն Դեմոտրեայ, եւ դիցուհւոյն Բարուխեանց
Ոչ եւ ի Հռոմ եւ առ Հելլէնս տօնք նոցնպիսիք են գաղտնեաց.
Ոչ եւ ի մինչ է ընդ հանուր ներեալ պաշտօն գերագոյն
Դից բիւրազգի անպատուհաս, բաց ի նոցա Աստուծոյն.
Հրեշից ընաւից Եգիպտոսի տաճարք ի Հռոմ կառուցան.
Եւ ըստ հաճոյս նախնեաց մերոց մարդիկ ընդ դիս գասեցան,
Եւ ընդ արեանն նոցա վերիպակ իւրանց սերեալ մինչ առ մեզ,
Լընումք յամբոխ ինքնակալաց մերոց զերկնից ասպարեզ.
Այլ թող զի պարզ իսկ ասացից, ասուածարեալքն պարուն
Կարի յերկրայս այլակերպեալգ այդ ինձ թըսի գոյութիւն։
Քրիստոնէից է մի Աստուած՝ տիեզերաց ինքնակալ,
Ցոյր միայնոյ կամաց համայնք յաւիտենից առին կալ.
Եւ թէ օրէն է զոր խորհիմքս քեզ ասել ի գաղտնիս,
Դիք մեր յաճախ անմիաբանք են ընդ իրեարս ի հերձիս.
Եւ թէպէտ ասա իսկ ի նոցունց հասցէ ինձ գոլ շանթահար,
Այլ ասացից. յոլովք առ մեզ պաշտին ասուածք թարմատաք։
Իցեն թերեւս այն ամենայն աւանդք կրօնից յօգուտ ազգ
Բաղաքագէտ խմաստութեան գիւտք բազմարուեստ հանճարոյ,
Առ ի նուաճել այնու զամիին եւ կամ ածել ի յորդոր,
Եւ ի նոցին պարզմտութեան առնել զիւրեանց սատ հրզոր։
Լուր ի վերջն, քրիստոնէից յոյժ անարատ է կենցաղ։
Բարեաց ի գործքս բարգաւաճ, յախտից անբիծ անշաղախ.
Զնն առ նոսա ոչ աւազակք, ոչ շունք եւ ոչ գողք հատու,
Ոչ դաւաճան մատնիչ եւ ոչ արբշիռ շրեայս գինըմարս.
Համակ ի սէր անկեղծ վառեալ, համակ ի զուսի ի գորով,
Սիրեն զիրեար, որպէս եղբայր ընդ եղբօր ձեռքն տալով.

Վասն Հալածչաց իսկ Իւրեանց միշտ նոքա բարիս մեզ մաղթեն,
Եւ 'ի դարուց հեաւ լուկեալք, չեն ապըստամբք, ոչ հեստեն։
Հաւատարիմ՝ քան ըզնոսա զօրք կայսերաց մերոց չիք.
Գոռք 'ի մարտի, եւ առ դահճօք մերովք հըլուք կան լռիկ,
Եւ մեռանին որպէս դառինք առիւծքն հըզօրք 'ի մարտի։
Զկարեմ՝ չօգնել նոցին, զի սիրտ իմ՝ ընդ նոսա մորմոքի։
Օ՜ն, առ փեղիքս եկ երթիցուք, նախ ըզփեսայն խնամելով՝
Ըզպաւլինէ համանդամսյն հաճել, զնմ՝ փառս եւ զգորով։

ՀԱՆԴԷՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա.

ՓԵԼԻՔՍ, ԱԼԲԻՆՈՍ, ԿԼԷՈՎՆ

ՓԵԼԻՔՍ

Տեսնը դու արդ, իմն Ալբինէ, զնենգ Սեւերի խորամանդ.
Տեսնը զնորին քէն ոխակալ, եւ զաղիտիցն իմ՝ վրատանդ։

ԱԼԲԻՆՈՍ

Ոչ ես 'ի նմա զայլ ինչ տեսի՝ բայց նախանձորդ ոչ վեհանձն,
Եւ 'ի քեզ ոչ տեսանեմ՝ այլ բայց հայր մոլեալ 'ի նախատանձ։

ՓԵԼԻՔՍ

Ընդ երեւոյթ գիմաց ու 'նդ սիրտ չգիտես խըստրել, իսկ դու ընաւ.
Նա 'ի սրտէ ատեայ զՓելիքս, արհամարհէ զՊաւլինեաւ,
Ում թէ երեմըն տարփացեալ՝ այլ արդ խոտէ անգոսնէ
Իբր անարժան իւր ըզմնացուած նախանձորդին իւր ըզնէ։
Նա Պոլիկտեայ արդ բարեխօս՝ եւ աղերսէ եւ սպառնայ
Կորուսանել զիս, թէ չանսամ՝ ընտրել ինքեան ես ըզնա.
Ի մեծամեծըս կոտորել՝ կարծէ ածել ինձ խըրտուիլ.
Ծանծաղ են յոյժ հնարիցըն խորք, դիւրանըշմար 'ի տեսիլ։
Զեն անծանօթ ինձ արքունեաց քաղաքագէտ այդ հընարք,
Ճարտար քան զինքն եմ՝ 'ի վարել ընդքօք ուր ինձ տացի հարկ։
Զուր որոտայ, զուր մոլեգնի 'ի չարահնարսըն կեղծիս,
Քաջ նըշմարեմ զոր առ կայսեր հնարի նիւթել ինձ չարիս.
Զոր առ յինէն խընդրէ 'ի ընորհ, զայն ինձ քսեցէ 'ի յանցուած.
Յասոխ նորին եմ թէ խնայեմ՝ 'ի սպանդ նըմին ես մատեայց։
Եթէ ընդ այլ ոք թերատես էին նորա իբր անշուշտ
Յոյժ քաջադէպ լարեալ են հաղբքն յանպուրծ նորին 'ի կորուստ.
Այլ յարքունիս հնացեալ դրանիկ չանսայ լինել դիւրագայթ,

Քաջ ըդիմակըս նրկատեալ եւ ըզկեղծեաց որոգայթ.
Ընդ բազմազան իրաց ընդ փորձ անցեալ՝ հըմուտ եմ այնպէս,
Զի եթէ դէպ տայցէ՝ գիտեմ վարժապետել նրմին ես։

ԱԼԲԻՆՈՍ

Բա՜ըե, զի՞ քեզ, զի՞ տարապարտ կասկածանօք տագնապիս։

ՓԵԼԻՔՍ

Այս գիտութիւն է բարձրագոյն ոյց կամք են կալ յաքքունիս։
Որոց գամ մի ատելութեան ընդ մեզ կալեալ է պատճառ,
Այն եւ պարտ իակ է հաւատալ զի դարանին մեզ 'ի սպառ.
Մըտերմութեան նոցա 'ի ցոյց եւ 'ի բան չիք վըստահել։
Յորչափ յաղանդն իւր յամառեալ կայ Պոլիկտոս 'ի հեստել՝
Թող զոր կամի պաշտպան նորա երկնէ խորհուրդս 'ի սըրտի,
Ինձ յայտնապէս պատկառ կալ հարկ է հրամանաց աքբունի։

ԱԼԲԻՆՈՍ

Գրթութիւն, ով տէր, գրթութիւն խընդրէ 'ի քէն Պաւլինէ։

ՓԵԼԻՔՍ

Բայց ոչ ապա եւ ինքնակալն արդեօք ըստ իս գրթայցէ.
Ի վնասակար հետոցն ըզնա ընկերկել ոչ կարացեալ,
Ներումն այն իմ մեզ երկոցուն ածցէ կորուստ հաւասար։

ԱԼԲԻՆՈՍ

Բայց խոստանայ Սեւեր...

ՓԵԼԻՔՍ

Ալբին, ոչ հաւատամ ես նրմա։
Քաջ խելամուտ եմ ես քան զինքն ատելութեանքն Դեկեայ.
Քրիստոնէից թէ թեւարկեալ՝ զնորա ցասումն դըրդէ,
Ինքն եւս հանդոյն մեզ աներկբայ կորուստ ընդոյն կորիցէ։
Այլ փորձ մի եւս առցուք փորձել զիջանելով տակաւին։
Այսր, աղէ՛, ած ըզՊոլիկտոս, տեսցուք ըզնա վերըստին։
Թէ յամառեալ մընաց յեւոյ յեւին ճըգանցս իմ տեղի,
Ընդ ելանելն ասսի՝ 'ի մահ պատուհասին վարեսցի։

Ա- Կլէոն։

ԱԼԲԻՆՈՍ

Ցոխատ են հրամանքն։

ՓԵԼԻՔՍ

Ամլ անվրէպ տանել 'ի գլուխ զայն հարկ է.
Թէ ոչ՝ շրջուկ ամպրոպայոյզ ինձ հուպ ընդ հուպ հասանէ։
Ամբոխն արդէն 'ի գուժ շարժեալ խլրտի նրմին կարեկիր,
Որպէս եւ դու իսկ ինձ կանխաւ գուշակօրէն ազդէիք.
Ի նախանձուն նոցա մոլել, զորոյ այժմէն տան ըզցոյց,
Ոչ գիտեմ ինչ ինձ ընդորին լեցի նուաճել ըզզայրուց.
Թերեւս այգուն, թերեւս ըզցայգ, թերեւս աւուրս ընդ երեկ
Հասցեն նորին դառն արդասիք ինձ 'ի սոսկումն ահաբեկ.
Եւ Սեւերեայ 'ի վրէժ քինուն իւր փուութացեալ 'ի քրսխս,
Ցինէն բարուրքս կրցեսցէ զոլ համախոհ 'ի չարիս։
Ազնտաբեր իւր հարուածոյն զառաջս առնուլ հարկ է մեզ։

ԱԼԲԻՆՈՍ

Ազէտք քանի տարօրինակ կասկած այդքան կանխատես.
Համայն վրտանգ, համայն կորուստ, համայն ինչ քեզ երկեղուտ։
Այլ տես զի մի մահուամբ նորա դերդի խուժանն 'ի զայրոյթ.
Չէ այդ դարման ածել չարեաց, այլ զայրացուկ յուսահատ։

ՓԵԼԻՔՍ

Այլ յետ մահուն զուր խուժանին լեցի յուզումն 'ի դանգատ.
Իսկ թէ ժրաջրհել յանդգնեսցի 'ի բրնութիւն մոլեկան,
Շատ իսկ իցեն աւուրք երկու շնորհեալ նոցա խեռութեան։
Որ ինչ գալոցն է եկեսցէ, մեք զոր պարտիմքս արասցուք։
Այլ արդ նա ինքն ահա Պոլիկտ. ընդա փերկել ջանասցուք։
Տեղի աստի տուք, զօրականք, եւ զգուշասջիք 'ի պակ դրաց։

ՏԵՍԻԼ Բ.

ՓԵԼԻՔՍ, ՊՈԼԻԿՏՈՍ, ԱԼԲԻՆՈՍ

ՓԵԼԻՔՍ

Ա՞յդչափ ուրեմն, Պոլիկտ, տաղտուկ է քեզ 'ի կենաց.
Զայդ քեզ օրէնք քրիստոնէիցդ հրամայեն, ով թերշուտ,
Անկարեկիր սրբաւ փակել առ քոյդ ըզգուտ քո 'ի սպառ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Ոչ՝ կենաց տաղտուկ է ինձ. եւ ես ինքնին յարգեմ զայն,
Այլ՝ զորէն պագչտելոց տամ զիս նոցա գերութեան.
Զօնեմ սիրով զայն Աստուծոյ յորմէ առեալ եմ՝ ի նուէր.
Բան ինքնին զոյս ինձ հրամայէ, այս Քրիստոսն է պատուէր.
Եւ ես ցուցից ձեզ համօրէն որպէս արժան իցէ կեալ,
Միայն թէ սիրտ յօժար՝ ի ձեզ գըտցի հետոցս ըղձեալ դալ:

ՓԵԼԻՔՍ

Հետոցդ ըղձեմ դալ դահավէժ՝ ի վիհ յոր զինքնըդ հոսես:

ՊՈԼԻԿՏՈՍ

Նա մանաւանդ փառաց՝ ի կայս, յոր հուպ ընդ հուպ ելից ես:

ՓԵԼԻՔՍ

Տուր ինձ առա գէթ ժամանակ զոր աւանդեսն ուսանել.
Վարժասլատեա ինձ, թէ ցանկաս զիս քրիստոնեայ տեսանել.
Մի՛ հրաժարեր, ո Պոլիկտ, ի կրօնըս քո վարժել զիս,
Այ՝ եթէ ոչ համար ընդ իմ՝ ի յԱստուծոյդ պահանջիս:

ՊՈԼԻԿՏՈՍ

Մի՛ դու, Փելիքս, մի՛ զնա ծաղրեր, որ դասելոցն է ըղքեզ,
Եւ յերեսաց նորա քեզ չիք ուրեք թագուստ յոր կեցցես.
Ընդ թագաւոր եւ ընդ հովիւ յայնմ՝ ատենի չիք խրտիր.
Ի քէն Աստուածն իմ՝ անդ իւրոցն արեան լիցի վրէժխնդիր:

ՓԵԼԻՔՍ

Ոչ եւս հեղից զարիւն նոցա, դայցէ որ ինչ է՝ ի գալ՝
Քրիստոնէից ներեալ յինէն իւրեանց կրօնից պատկառ կալ.
Եւ ինքն եղէց նոցա պաշտպան:

ՊՈԼԻԿՏՈՍ

Մի՛ դու, այլ լեր հալածիչ.
Երջանկութեան մերոյ օճան դոլ հրաժարեա դու առ ինչ.
Քրիստոնէիցս ճըշմարիտ երջանկութիւն է՝ ի կրել.
Ի պարգեւի մասին են մեզ վիշտք եւ աղէտք խըստամբեր:
Որ ըզվաստակըս վարձատրէն բիւրապատիկ մեզ Աստուած,

Նա զՀալածիչս յարուցանէ 'ի լուսոյ իւրոց պարգեւաց.
Այլ այսոքիկ դըժուարահաս են ձեզ խորհուրդք եւ գաղտնի,
Զորս ընտրելոց եւեթ իւրոց առնէ Աստուած հոլանի։

ՓԵԼԻՔՍ

Անպատրաստակ ասեմ քեզ արդ. ցանկամ լինել քրիստոնեայ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Եւ զի՞նչ ըզքեզ արդելուցու չառնել զոր սիրտ քո անձկայ։

ՓԵԼԻՔՍ

Ինձ տհարկու է ասասնօր...

ՊՈԼԻԿՏՈՍ

Ո՞այն, արդեօք Սեւերոս։

ՓԵԼԻՔՍ

Վասըն նորա ցասումն այսչափ քեզ պատճառիմ ըբռնազբօս.
Եւ դու վայրիկ մի պատճառեաց մինչեւ 'ի բաց մեկնեսցի։

ՊՈԼԻԿՏՈՍ

Այսպէս ուրեմն անպատրաստակ Փելիքս առ իս արդ խօսի.
Զայդ քո աղու հրապոյրս առ քոյս եւ առ քո դիս վարեսցիր։
Այր քրիստոնեայ ոչ երկընչի, չածի 'ի հնարքս պատիր.
Տիեզերաց յայտ յանդիման կացցէ նա միշտ քրիստոնեայ։

ՓԵԼԻՔՍ

Նախանձ կրօնիցըդ քոց խրատու քեզ պատահէ խաբեբայ,
Թէ զմահ ընտրես դու առաւել քան ինձ վարժիչ գոլ կրօնից։

ՊՈԼԻԿՏՈՍ

Քեզ հաւատոց ճառք տարաժամ բանք են այժմիկ զանհասից.
Չէ այն մըտաց հանճարոյ տուրք, այլ երկնաձիր պարգեւաց։
Անդ 'ի վայելս իմ 'ի մեռոյ դէմ յանդիման յԻնն Աստուած,
Ինձ դիւրագոյն լեցի ըզշնորհդ ընդունել քեզ 'ի նմանէ։

ՓԵԼԻՔՍ

Սակայն քոյդ մահ, քոյդ բաժանումն յուսակըտուր զիս առնէ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Սակայն վնասուդ քո այդ դարման կայ քեզ պատրաստ 'ի ձեռին.
Ըզիեսայիդ կորուսելը լցցէ միւս ամն ըստեղին.
Աստիճանաւն իսկ վայելուչ քան զիս քոյսմդ յաւէտ,
Կորուստն իմ քեզ չիցէ 'ի տոյժ, այլ տուրեւառ շահաւէտ։

ՓԵԼԻՔՍ

Շատ է արդ, մի թըշնամանաց բանիւք բերիր դու առ իս։
Շուք եւ պատիւ գըտեր յինէն գեր քան ըզքո արժանիս.
Այլ հեզութիւն երկայնամիտ ցարդ խեռութեանդ յաղթական,
Յատելութիւն փոխի 'ի լուր ժըպիրդ բանից քոց այդքան.
Եւ հատուսցես դու ինձ ըզվրէժ անարգանաց զիմ՝ եւ զդից։

ՊՈԼԻԿՏՈՍ

Բա՛ւք, առ ի՞նչ այդ փոփոխումն յանկարծ ելզուի քո եւ կրից.
Նախանձ փառաց դից քոց թերեւս յուզէ ըզքեզ վերըստին,
Եւ քրիստոսեան կրօնից քեզ տենչ 'ի մոռացօնքս լինին.
Մի՛թէ յինէ՞ն ինչ ըստիպեալ անպատրաստ խօսէիր։

ՓԵԼԻՔՍ

Թող անդր 'ի քաց, եթէ երդմնի իսկ քեզ եղէց՝ մի խաբիր,
Վարդապետացըդ նորահնար կեղծեաց լըսող ես սչ գոմ։
Մոլենախանձ ըղձիցըդ քոց հայթայթէի զայն շողոմ,
Ընկըրկելոյ դքեզ 'ի վախից, յոր դիմեալ գնաս ճեպընտապ.
Ի փըրկութիւն քո հնարէի առնուլ դեռ եւրս պարապ,
Մինչ 'ի հրաժեշտ աստի 'ի բաց որ առ Դեկեայն քըմտոսէ.
Բայց շատ իսկ ցարդ ընդ անարգուս ամենակալ դիցն եղէ։
Արդ ընտրեսջիր՝ կամ զքո արիւն, կամ խունկ 'ի նուէր տալ նոցա։

ՊՈԼԻԿՏՈՍ

Քաջ իսկ գիտես զոր ընտրիցեմ։ Այլ Պաւլինե այսրը գայ.
Ողջ Տէր։

ՏԵՍԻԼ Գ.

ՓԵԼԻՔՍ, ՊՈԼԻԿՏՈՍ, ՊԱՒԼԻՆԷ, ԱԼԲԻՆՈՍ

ՊԱՒԼԻՆԷ

Ի ՀԷՆՉ յերկոցունց ո՞դահիճ այսօր ինձ կացցէ.
Երկոքի՞ն իսկ միանգամայն, թէ մէն ուրոյն ինձ, աղէ։
Զկցէ՞ հընար յողոք ածել ինձ ըզընութիւն կամ ըզսէր,
Եւ 'ի հօրէ եւ յամուսնոյ մնայ ինձ մերժումն անընդէր։

ՓԵԼԻՔՍ

Ընդ ամուսնոյ քում խօսեսջիր։

ՊՈԼԻԿՏՈՍ

Ընդ Սեւերի դու կեցցես։

ՊԱՒԼԻՆԷ

Ա՛յ անողորմ, հար զիս ըսպան քան նախատել զիս այդպէս։

ՊՈԼԻԿՏՈՍ

Սէր 'ի գորով շարժեալ 'ի յիս հնարի ըզքեզ ըսփոփել.
Զեմ անծանօթ որոց 'ի քեզ ըբռնանան ցաւք անընդել.
Ի դիւր նոցին սէր այլ իցէ սըրտիդ միակ 'ի սփոփանս.
Եւ որ վառեացն ըզքեզ երբեմն յիւր արժանեացն 'ի տարփանս,
Նոյն միշտ հըզօր 'ի յողոքել ըզսիրտ քո՝ քեզ կացցէ մերձ.
Դու զնա երբեմն, արդ ինքն ըզքեզ սիրէ, եւ փառք նորա մեծ...

ՊԱՒԼԻՆԷ

Զի՞նչ մեղայ, ով անագորոյն, զի անխնայեալ յիս այդպէս՝
Հաւատարիմ սիրոյս ընդ հեգն 'ի կըշտամբանս ինձ ածես
Ըզնախընծայ տարփից սարիս, զորս խրզեցի առ քո սէր։
Տես դու քանիք հասին ինձ գոռք եւ ընդ անձին ոգորել,
Առ 'ի կանգնել քեզ յաղթութիւն ընդդէմ հըզօր ոսոխիդ.
Քանի ծանուցց տարայ վըշտաց առ 'ի ձօնել քեզ ըզսիրտ,
Որ նախագրաւ յաղթականին գոյր իրաւանցըն պահեստ։
Եթէ չիցէ արդ ապաշնորհ եւ ապառուտ սիրտ զոր կրեսդ,
Խուն մի եւ դու գուն գործեսջիր պահել ըզքեզ Պաւլինեայ.
Ընդդէմ կըրեցդ ուսիր կըբրել, նրմին եւ դու նրմանեա.

Ի կուրութեան քում զուղղութիւն նորին քեզ կալ առաջնորդ.
Կամեաց զի քեւ վերընկալցի նա զքեզ կենաց իւր կրցորդ,
Աղաչնորէն կալ միշտ ընդ քեզ եւ հրամանաց քոց հըլու։
Իսկ թէ արդար ըղձիցն անլուր արհամարհես դու զայնու,
Գէթ յարտասուս իւր ակնարկա, հառաչանաց նորին լուր,
Եւ որ սիրէն ըզքեզ՝ դու մի զնա լքաներ, մի թողուր։

ՊՈԼԻԿՏՈՍ

Այժմ իսկ ահա քեզ ասացի, եւ զնոյն առնում երկրորդել.
Լեր Յեւերեայ դու կենակից, կամ 'ի մահու ինձ ընկեր։
Ոչ զարտասուս քո անդոմեմ եւ ոչ զանկեղծ բոյին սերդ.
Սակայն որ զնոչ եւ խօսիցի առ իս ըզքէն սեր մեր սերտ,
Ոչ եւս ըզքեզ այլ ճանաչեմ՝ մինչ չեւ լցես քրիստոնեայ։
Շատ է ցայսվայր. առ դու, Փելիքս, դարձեալ ըզսատ քո դըժ-
Հան ընդ կառափն անօրինիս ըզվըբէժ դից քոց եւ զանձին։ (նեայ.

ՊԱՒԼԻՆՆ

Ո՜հ, հայր, ներեա, անտերելի են արդարեւ մեղք դորին,
Այլ թէ մոլի դա խելայեղ՝ դու խոհական ես, դու զգօն.
Մեծ է բնութեան յոյժ զօրութիւն եւ սիրելի տիպք նորուն
Տըպաւորեալք 'ի ընկեր արեան՝ եղծանելիք չեն երբէք.
Հայր միշտ է հայր. յայս ազատան՝ չեմ ես 'ի սպառ յուսաբեկ։
Արկ ծնելասեր ակն 'ի յաղէսրս միանգամ դըստեր քո՝,
Որ հուպ ընդ հուպ մեռցի ըզկետ մահապարտին սիրելոյ.
Եւ պատուհաս նորա գրեսցի անիրաւ յաչս անմահից՝
Արիւն անպարտ խառն ընդ արեան յանցաւորին պատժակից,
Եւ ընդ միոյն՝ մահուամբ երկուց արդարութեանըն պատիժ
Յեղափոխեալ 'ի խրստութիւն մոլենախանձ ամբարիշտ։
Ի քէն իսկ բաղդք մեր ընդ իրեարըս զօդեցան անմեկին,
Երանելիք 'ի միասին գոլ կամ թըշուառք երկոքին.
Ի խուժադուժ անգըթութեան 'ի ծայր վերջին դու հասցես,
Թէ զոր ձեռօքըդ զօդեցեր, քակեալ անդրէն բաժանես։
Սիրտ ընդ սըրտի յեռեալ 'ի մի՝ ոչ եւս երբէք բաժանին.
Եւ ոչ քակելոք կարասցէ՝ թէ չփեռեկէ զայնս ուժգին։
Այլ դու իմոցս անպարտակիր ցաւոց լինիս կարեկից,
Եւ յարտասուս իմ՝ հայրաբար հայիս ահա զրթմալից։

ՓԵԼԻՔՍ

Դուստր իմ, այո, հայր միշտ է հայր. զայդ ասացեր դու արդար.
Ըզսըրբազան բնութեանըն դրոշմ ջնջել երբէք չէք հընար.

Ի՛ եւ յիս սիրա գորովալիր զոր հարկանես կարեւիր ։
Քեզ ձայնակցիմ արդ զապառուսմբդ կըշտամբելոյ ըզվաստշուէր ։

Ով չարաբախտ դու Պոլիկոտ , դու միայն կաս խրատասիրտ ,
Եւ դու միայն անոներելի ջանաս առնել քեզ զոՀիրդ ։
Ի՞նչ Հանդուրժես զայդչափ արտասր անԹաց աչօք նըկատել ։
Զիա՞նդ կարես առ այդչափ սէր ըզգուսի սըրտի քո փակել ։
Ո՞չ եւս աչաց քոց երեւելն ոչ կողակից ոչ անոր ,
Ո՞չ եւս միոյն մըտերմութիւն եւ ոչ միւսոյն քաղցրը սէր ։
Կամ՞ն Թերեւս ըզմեզ յաղերս անկեալ զոտիւքըդ քոյին ,
Զի Հաճեսցես այր եւ փեսայ վերակոչիլ վերըստին ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Ո՛վ չարաՀնար լարեալ ինձ Հաղբը եւ չարարուեստ որոգայթ ։
Յետ փորձելոյ 'ի սպառնական սասոից 'ի գոռ զիս 'ի զայթ ,
Յետ չարամահ ըզՆեարխոն ինձ ածելոյ 'ի տեսիլ ,
Յետ ըզսիրոյ աղու Հրապոյրս տալոյ ինձ յումպ 'ի Թըմբիր ,
Յետ կեղծաւորըն ծարաւոյ աւազանին սըրբութեան՝
Աստուածայնոյ սիրոյն ընդդէմ զինուորելով ըզնոյն զայն ,
Միաբանեալ գայք յիմ վերայ . ով զբժոխոց ժանտ հընաբք ։
Առ 'ի տանել ըզմըրցանակ քանիցս յաղթել իցէ Հարկ ։
Եւ մինչեւ ցՀրբ յամէք տարտամք 'ի խորՀըրդոցդ ընտրութիւն .
Օ՜ն , դուք ըզձերն առէք ընտրել . իմ է ընտրեալ վաղագոյն ։

Ըզմին միայն պաշտեմ ես Տէր՝ տիեզերաց արարող ,
Յորմէ սարսեն երկինք ւերկիր , սանդարամետք կան 'ի գող .
Ըզմի Աստուած , որոյ սիրեալ ըզմեզ 'ի սէր անըսպառ՝
Զանարգանաց մահ վասն մեր ինքնայօժար յանձն էառ ,
Եւ որ մեծի սիրոյն զեղման Հրաշագործեալ յիշատակ՝
Օր ըստ օրէ Հաճի տալ զանձն ընդ մեր մեղաց պատարագ ։
Այլ ինձ զայնց մեղք են ձեզ ՀառեԼ , այց ոչ կարէք գոլ Հասու ։
Իսկ որպիսեանց , տեսէք , ցնորից կայք գուք պաշտպանք զաւացու .
Ի զաղագործ ոճիրս անլուր Նըշաւակէք ըզդիս ձեր .
Պատուհասեալք 'ի ձէնջ ոճիրք յերկինս Համայն ունին տեր .
Գոռնիկն եւ շուն , առեւանգեալն եւ ազգապիղծ մըճղընեայն ,
Գողն , աւազակ , եւ որ ինչ այլ եւս գարշելիքն են Համայն ,
Յանմահ 'ի դիս ձեր նախատիպ ունին իւրեանց օրինակ .
Զորոց մեՀեանսըն պըղծեցի , զբագինս եդի Հարթյատակ ,
Որ Թէ եւ այժմ ինձ առաջի կային՝ ըզնոյն առնէի
Յայտ յանդիման քեզ Փելիքսի , եւ յանդիման Սեւերի ,
Եւ ծերակոյտ մեծ ատենին , դէմ յանդիման իսկ կայսեր ։

ՓԵԼԻՔՍ

Արդար ցասման խմբամ ոչ եւս արդ ժուժէն կամք մարդասէր.
Նոցին պաշտօն տար, կամ մեռիր։

ՊՈԼԻԿՏՈՍ

Քրիստոնեայ եմ։

ՓԵԼԻՔՍ

Անօրէն.
Քեզ ասեմ՝ դիցն պագ երկիր, թէ ոչ՝ ընարես մահ քեզէն։

ՊՈԼԻԿՏՈՍ

Քրիստոնեայ եմ։

ՓԵԼԻՔՍ

Քրիստոնեայ ես. ով խբստասիրտ դու յամառ։
Օ՜ն, զօրականք, ածէք զառեալդ յինէն հրամանն 'ի կատար։

ՊԱՒԼԻՆԷ

Ցո՞ զնա տանիք։

ՓԵԼԻՔՍ

Ի մահ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Ի փառս։ Ով Պաւլինէ սիրելի,
Ողջամբ կացջիր, եւ զյիշատակս անջինջ կալցիս 'ի սրտի։

ՊԱՒԼԻՆԷ

Եկիր ընդ քեզ ուր եւ երթաս, եւ 'ի մահ իսկ՝ թէ մեռցիս։

ՊՈԼԻԿՏՈՍ

Կաց, մի ընդ իս գար, եւ կամ թող 'ի բաց ըզդիս քո սնոտիս։

ՓԵԼԻՔՍ

Առէք ըզդա յաշացս 'ի բաց, ըզցին հրամանք իմ 'ի դա։
Զի ընդ կորուստ իւր կամեցաւ, զբացէ զկորուստ իւր ապա։

ՏԵՍԻԼ Դ.

ՓԵԼԻՔՍ, ԱԼԲԻՆՈՍ

ՓԵԼԻՔՍ

Բուռն են ինձ իրքդ, Ալբինոս, այլ զայդ առնել ինձ հարկ էր,
Զի հեղութիւնն իմ ընդակից մի՛ ի կորուստ ինձ յանգէր։
Թող զայրագնի արդ դիժկամակ կատաղութիւն խուժանին,
Թող Սեւերոս որոտընդոստ փայլատակէ մոլեգին,
Բուռն արարեալ անձին՝ հանի յաներկեւան զիս յանդորր։
Սակայն դու ո՞չ յապուշ կերրթիս ընդ խստութիւնս անսովոր.
Ի՞նչ քո տեսեալ քան զՊոլիկտեայ սիրտ անթափանց խորհրդոց,
Կամ ամպարիշտ քան ըստորոյն արհամարհօտ աստուածոց։
Արդ հանգուցի գէթ զալեծուփ սիրտս ՝ի հոգոց վերահաս,
Եւ յամոքել ըզսալացեալն շարարի ինչ պակաս.
Տեսեր իսկ յոր վատութիւն յանձն առի կեղծեօք խոնարհել.
Եւ եթէ ոչ նորա վերջին հայհոյութեանցն ժայթքել
Ընդ արհաւիրքս գերգռեին յիս եւ զայրոյթ յեղակարծ,
Բուռն էր ինձ մարան եւ յաղթութիւնս իմ կարի յոյժ կեղակարծ։

ԱԼԲԻՆՈՍ

Այլ զընջասցիս ընդ յաղթութիւնդ, արասցես զայն դատապարտ.
Ի ինչ ՝ի նմա՝ ոչ գիտեմ զինչ ազդեցութիւն ապիրատ,
Դիժպատեհ առն հռամայեցոյ եւ Փելիքսի անարժան
Ինքնին ըզքոյդ անգութի ձեռամբ հեղուլ զարիւն սեփական։

ՓԵԼԻՔՍ

Ըզնոյն երբեմն եւ Մանլիոս, ընդոյն Բրուտոս արարին,
Եւ փառք նոցա ոչ ինչ նուազեալ՝ եւ եւս այնուիկ աճեցին.
Եւ դիւցազունք մեր հինք թէ գոյր նոցա արիւն պիղծ յերակ,
Ինքնին զիւրեանց բանսային կողս առ ՝ի հեղուլ զայն երագ։

ԱԼԲԻՆՈՍ

Բուռն եռանդեամբդ արդ դու մոլեալ՝ կալցիս որպէս եւ կամիս.
Սակայն ՝ի կրկնցդ թողանալ, յորոց խառվեալ այժմ յուզիս,
Երբ զառաջեաւ ըզՊաւլինէ տեսցես ՝ի սուգ յուսահատ,
Յարտասր աչաց նորին ու ՝ի ճիչ հարեալ յոգի ինքնադատ...

ՓԵԼԻՔՍ

Բանդդ ինձ 'ի յուշ ածեն զի նա մահապարտին գնաց ըզհետ.
Անդ 'ի տեսիլ իւր յուսահատ եւ 'ի կական դառնաղետ
Ըզհրամանացն իմոց զարդիւնքս վեր 'ի վայր ընդ ոչնչեցեալ։
Օ՜ն դու սլացիր ապա 'ի վայր անդրը դիտել զինչ գործէ.
Տես զի մի ցաւքն աղիողորմ արկցէն գործոյն ինչ խափան.
Մի՛ զնա թողուր՝ եթէ կարես՝ կալ յայն տրխուր տեսարան.
Ջանա սփոփել ընդ նա։ Աբի երթ օն, եւ զի՞ յապաղես։

ԱԼԲԻՆՈՍ

Գնալոյ իմոյ չեն ինչ պէտք, տեր. ահա ինքնին գայ առ քեզ։

ՏԵՍԻԼ Ե.

ՓԵԼԻՔՍ, ՊԱՒԼԻՆԷ, ԱԼԲԻՆՈՍ

ՊԱՒԼԻՆԷ

Խուժադուժ հայր, տուր դու, աղէ, տուր կատարումն գործոյդ.
Երկրորդ ահա սպանդ արժանի մոլեգնութեան քո անգութ.
Ընդ փեսայիդ խառնեա 'նդ արեան եւ ըզդքսաեր քո. զի՞ կաս.
Ո՞ՀԻ նորա կամ բարութիւն զբացէ եւ յիս պատուհաս.
Խրժդըժութիւն քոյին ըզնոյն գտանէ եւ յիս ըզպատճառ։
Ինձ ամուսինն իմ 'ի մահուն ծագեաց ըզլոյս իւր պայծառ.
Արիւն նորա ցայտեալ զինեւ 'ի սուսերաց քոց դահճաց,
Ըզմուրթ յինէն մերժեալ 'ի լոյսն անբաստուեր զաչս իմ՝ երբաց.
Եւ տեսանեմ արդ եւ գիտեմ, եւ չհաւատամ 'ի նաներիր.
Երանելեաւն արեամբ արդէն իսկ մրկերտեալ զիս ծաներիր.
Գիտա, հակիրճ, զի քրիստոնեայ եմ, եւ չեցէ՞ բաւական։
Հապա կորո զիս եւ պահեա զհամբաւդ և զբարձր աստիճան.
Ինքնակալին քում ակն ածջիր, երկիր յահէ Սեւերեայ.
Թէ ընդ կորուստ քո ոչ կամիս, կորուստ իմ հարկ է՝ գիտեա։
Ինձ Պոլիկտոս փողէ հրաւէր յիւրն երջանիկ կատարած,
Եւ Նէարխոն 'ի մեասին բազկաբ առ իս կան տարած։
Տար զիս, աղէ, առ դիս քո տար եւ զդարշելիսքն ցոյց ինձ.
Նոցա ըզմին կործան արկեալ, զայլս համբէն ես արկից։
Յուցից թէ իբր արհամարհեմ յորոց լինիցի ահաբեկ,
Ջանազբ չանթիսն յոր ընդոցին աչ 'ի պատկերսքն զինէք.

Եւ սրբբազան հեստութեամբ իբր յորդիական 'ի պարտեաց՝
Զայս մի անդամ եւեթ հետեմ հայրենի քոց հրամանաց ։
Ուչ այս ցաւոց եւ յուսահատ սրտոյն են խօսք յայտարար ,
Այլ երկնաւոր շնորհաց՝ որ այժմ ազդենն յիս՝ է բարբառ .
Եւ թէ կըրկին լսել կամիս , եմ իսկ եւ եմ քրիստոնեայ .
Մահուամբ իմով զիմ եւ ըզքո կացս ըզբաղդ աներկեպայ .
Երկաքանչիւր մեզ կենարար լիցի միակն այն հարուած ,
Ըզքեզ յերկրի յապահովեալ , զիս 'ի կամարս աստեղաց ։

ՏԵՍԻԼ Զ.

ՓԵԼԻՔՍ , ՍԵԻԵՐՈՍ , ՊԱՒԼԻՆԷ , ԱԼԲԻՆՈՍ , ՓԱԲԻԱՆՈՍ

ՍԵԻԵՐՈՍ

Գազան վայրագ , ծընող անգութ , քաղաքավար վատչուեր ,
Ի ցնորական ահէ գերեալ ըստրուկ անարգ փառասէր ,
Կորեաւ ուրեմն Պոլիկտոս . եւ երազէս դու անձին
Անդընթութեամբդ յաւերժանալ յամօթապարտ քում բարձին ։
Զի բարեխօս վասըն նորա կացն ըզկեանսն 'ի փըրկել ,
Փոխան կենաց դու 'նդ հակառակն ըզմահ նորուն ճեպեցեր .
Աղերս արկի եւ սպառնացայ , այլ դու անշարժ սալացեալ՝
Համարեցար զիս խորամանկ , կամ դոյզն ինչ ոք ապիկար ։
Քաջ է . ուսցիս ապա ինքասուք անձին 'ի խրատ զի Սեւեր
Ուչ 'ի մնոտիս պանծայ , այլ յայն որ չէ քան զկար իւր 'ի վեր .
Եւ կորբստեամբ քո խելամուտ լիցիս քեզէն ճանաչել
Զի որ գիտէն կորուսանել , նոյն եւ կարող էր փրկել ։
Այդպէս յաւերժ դիցն 'ի պաշտօն հաւատարիմ լեր եւ փոյթ ,
Եւ եղեռամբրդ սոսկալի հանդէս արա նախանձուդ ։
Ողջամբ կացջիր , այլ 'ի ճայթել ըզքեւ ահեղ մրբրկին ,
Կանխաճանօթի իցէ քեզ աչն ուստի հարուածքն եկին ։

ՓԵԼԻՔՍ

Անսա ինձ , տէր , եւ անվըրդով սրտիւ ներել ինձ հաճեաց
Զի կամակար վրէժ հեշտընկալ քեզ հատուցից փոխադարձ ։
Մի՛ եւս այլ զիս կըշտամբեսցես զի ես յեղեռն 'ի յանդուգն
Գուն գործիցեմ կալ 'ի թըշուառ իշխանութիւնս իմ անբոյթ .
Ըզսին փառաց նոցին փաղփիւն առ ոտքս քո արկանեմ ,

Գերագունից քան ընտրեալ փառաց յիշձ վըսեմ.
Ախորժ զանխուլ բըռնազբօսեալ եւ հրապուրեալ զիս 'ի նոցն,
Եւ յանձանօթ յուզեալ 'ի կրից գտանիմ ընկճեալ եւ նըկուն.
Ցեղափոխեալ՝ ոչ գիտեմ իբր՝ յաներեւոյթ իմն ազդմանց,
Ի ցասմանէ՝ 'ի փեսային իմոյ բերիմ 'ի նախանձ :
Նորին արիւն է տարապարտ հեղեալ, գիտեմ աներկբայ,
Որ առ Աստուած հըզօր յաղերս վասն հալածչայ իւրոց կայ.
Խանդակաթ սեր նորին եւ գուրթ առ ընտանիսն համասփիւռ
Դրստերն 'ի զայգ եւ զհայրն ինքնին առեալ ձրգէ ըզհետ իւր.
Վրկայ ինեւ կացեալ, արար մահուամբըն զիս քրիստոնեայ.
Երանացեալ ինեւ, եւ զնոյն երանութիւն ինձ ցանկայ :
Այս է ցասնուլ քրիստոնէի, այսպէս խընդրէ նա զիւր վրէժ.
Ո՛վ երջանիկ անգրթութիւն, այր արգասիք՝ կեանք յաւէժ :
Բեր, Պաւլինէ, մատո զբաղուկս. առէք մեզ այսր ըզշրդթայս.
Դից ձեր 'ի սպանդ զենէք երկուս նորընծայեալ քրիստոնեայս :
Քրիստոնեայք եմք. թափեա զցասումն քո 'ի յիս եւ 'ի նա :

ՊԱՒԼԻՆԷ

Դէպք բարեբաղդ. անակընկալ հայրն իմ առ իս արդ դառնայ.
Զուրախութիւն իմ պըսակէ այս փոփոխումն երջանիկ :

ՓԵԼԻՔՍ

Դուստր իմ, պարգեւք են այդ աջոյն որ ներգործէ զայսոսիկ :

ՍԵՒԵՐՈՍ

Ի տեսարանս յայս գըթալն ոյր անընդոստ կան ոդիք :
Այսպէս դիպաց յեղափոխել հրաշից են միշտ արգասիք.
Քրիստոնեիցդ, որոց ընդդէմ զուր հալածչայց ճրգնի ջան,
Ի ինչ անշուշտ գեր 'ի վերոյ քան ըզբնութիւնըս մարդկան.
Ամբիծ վարուքն արժանաւորք լինին յերկնից առնուլ վարձ.
Զէ հասարակ առաքինեաց յընկճելն զոլ վերամարձ :
Զինչ եւ զնոցունց ասիցեն այլք՝ ինձ սիրելիք միշտ թըւին.
Ի տեսանել ըզմահ նոցունց աղէաք 'ի սիրտ իմ յուզին :
Ցեղեկագոյն իակ ընտրեսին արդեօք երբեմն ծանեայց,
Բայց արդ կալցի իւրաքանչիւր ոք զոր կամի իւր ասատուած,
Եւ աներկիւղ նըմա պաշտօն տարցի 'ստ հաճոյս համարձակ :
Թէ քրիստոնեայք էք դուք, մի եւս յիմոց վըիժուցըս խիթայք.
Նոքա սիրունք են ինձ, փելիքս, եւ դէպք կարի անընդել,
Զի որոց ցարդ կացի պաշտպան, 'ի քեզ առից հալածել :
Կացցես 'ի քում իշխանութեան, զորէնս պատուոյդ առ քեզ կալ.
Հաւատարիմ լեր Աստուծոյդ եւ առ տէր մեր ինքնակալ.

Մերժեալ անկայց ես յերեսաց կայսեր մեծին Դենկոսի,
Կամ դրժպատեհըն խրատութեան ընդ հուպ վախճան եղիցի.
Զի անիրաւ խրժդրժութեամբն ածէ զիւրեւ նա մընթար։

ՓԵԼԻՔՍ

Հաճեսցի Տէր զոր ըսկըսաւն 'ի քեզ ածել 'ի կատար.
Եւ զի 'նկալցիս ըստ արժանեացդ յաւուր միում փոխարէն,
Ճըշմարտութեանըն ճառագայթք այժմէն 'ի քեզ ծագեսցեն։
Այլ մեք մեծի գեղանըսեհ բաղդիս եղեալ մանակից,
Օ՜ն երթիցուք օրհներգութեամբ նորոցս յուղարկ վըկայից,
Տալ վայելուչ հանգիստ սըրբոց նըշխարաց ջերմ 'ի համբոյր,
Եւ զԱստուծոյ հրաչակ հարցուք զանունն յաշխարհ ընդհանուր։

ՆՈՐԻՆ ԹԱՐԳՄԱՆՉԻ

ԻՆՔՆԱՍՏԵՂԾ ԲԵՐԹՈՒԱԾՔ

Ի ԾՆՈՒՆԴ ՓՐԿԶԻՆ

ԵՐԳ Ա

Զոր 'ի նախնումն Հոգւոյն կարապք կանխապէս
Նըւագէին զափամբք գետոյն Յորդանէս,
Այսօր ահա յառնէ երկիր նորաստեղծ
Յանըլոյս վըշէն վերաբերեալ անտըխեղծ։
Ծաղկէ Եդեմ քան ըզնախնին վայելուչ
Աստուածազարմ որդւոցըն դրախտ ընկալուչ.
Սերով տարերք գըրկախառնին 'ի համբոյր
Գոյն կապուտակ պարզին երկինք լուսաթոյր.
Մըշտազուարճ փըթթի գարուն ծաղկաւէտ
Զըմեռն և տօթ հալածականք լեալ անհետ։
Կանաչագեղ ծաղկեն այդիք բուրազուարճ
Փափկիկ կողերք ծանրին 'ի մրգ բարգաւաճ։
Սին անապատք լերինք խոպան ապալեր
Երփին ծաղկօքըն ծածանին ոսկեհեր։
Կորդ անդաստանք բիւրաբեղուն բացեալ ծոց
Յոճ ինքնաբոյս բերեն որայս ընդ փըշոց։
Արուգ կաղինք պտղաբերեն ոսկի գունս
Եւ քաղցրահոտ նարկիզ բարտիքն անծընունդ։
Վայրագասուն մայրիք յաւէրժ անպըտուղ
Ընդ քիրան հարեալ ծորեն աւիշ մեղր եւ իւղ.
Գայլ գիշխանն ձոգ ընդ գառին 'ի ճարակ
Եւ առ ուլու թիւնդրս տայ ինձըն վայրագ.
Առիւծ ըզբարսըն մերկացեալ ամեհի
Արօտակից խայտայ ընդ որթս 'ի դաշտի.
Մի եւս ումեք մեղեցէ իժ մահաթոյն
Մանուկ մատաղ ձեռն 'ի նորին արկցէ բոյն։
Քոյոյ, մանկիկ վերհաղն, որ կաս ատտ խոնարհ
Քոյոյ բազկիդ է նորակերտ այս աշխարհ.

Դու սրբեցեր զերկիր 'ի պիղծ խոհերաց
Հուր ցոլացեալ յեթերաշէն խորանաց :
Քեզ մահաշունչ վիշապն 'ի յոյժ խրոխտապանծ
Սուզեալ անհետ խաւարարգել կայ 'ի սանձ .
Քեզ լուսերամ խայտան որդիք նորածնունդ
Սաւառնացեալ խառնին յանմահ յերկնից գունդ :
Որ զտիեզերս 'ի բոլն ունիս ըզհանուրս ,
Նոյն ինքն կաս 'ի դուզնաբեայ խանձարուրս .
Քեզ որ յերկինս օրհնաբանիս Հայրըդ քով
Երկրպագեմ 'ի մրարիս սերտ հաւատով :

Ե Ր Գ Բ

Զարթիք զարթիք ըզքնով անկեալ ազգ մարդկան ,
Գիշերն էանց լուծան ըստուերք տրխարկան .
Նոր ծագեաց տիւ , նոր ձեզ արեւ լուսաբեր
Ըզթախծութիւնս դէմս աշխարհի 'ի պրծնել :
Զուարթուն ոգւոց ոչ իսկ լքսէք յեթերաց
Ըզքաղցրանուագ ձայն կենսաբեր աւետեաց .
Զարթիք 'ի լոյս աչք ձեր տեսցեն փրկութիւն
Ակնկալուք բազմաանչիկ ձեր յուսոյն :
Ահա մանուկ եղեալ յանարգ 'ի մրսուր
Յեթերական լուսոյն թափեալ մեզ Նըշոյլ,
Ըզփառս եւ զգանձ բարձեալ 'ի մէնջ կողոպուտ ,
Դարձուցանէ 'ի մեզ պարգեւս անկապուտ :
Ողորմ լալիք նորա եւ ճիչ մանկական
Ըզմեր դիմաց սրբրեն զարտասք եւ կական .
Անպատրաստաբար փափկիկ մարմնոյն սոսափիւն
Զտարտարոսին մերժեն 'ի մէնջ ըզկափիւն :
Անպարտական որդի եւ գառն անարատ
Մերովս ըզմերն յանձին բարձեալ մեղաց դատ ,
Զայրացելոյ հօրն 'ի դիմաց առարկու
Եւ թուլացոյց զաղերն եւ զաջ վերիժառու :
Յառնէ ահա դար ճշմարիտ ոսկեղէն ,
Ոչ սատուրնեան առասպելեացն զօրէն .
Խաղաղութիւն արդ 'ի յերկիր ծաւալի ,
Եւ բարութեան ծագեն աւուրք ցանկալի :

ԵՐԳ

Ով Աստուած իմ մանուկ մատաղ դեռածին,
Սիրտ իմ 'ի քեզ գեղու 'ի սեր կաթոգին.
Էր հաճեցար ծնանել 'ի հիւղս այս անշուք,
Այս էր 'ի դէպ աստուածութեան քում գահոյք.
Զայս արարածք ապաշնորհ եւ անգութ
Քեզ Արարչիդ փոխանակեն ընդ սիրոյդ:
Ո՜հ թէ յանկարծ 'ի լալ զեղեռոյն նոցին
Կրկնավրտակ աչք իմ յաղբիւր դառնային:
Դու զտիեզերս յարարչագործ 'ի բարբառ
Յոսկեձեղուն զբրուագեցեր 'ի տաճար.
Եւ արդ քարայր անպատրաստպար եւ ցածուն,
Անբան հօտիցն ասպնջական, է քեզ տուն:
Բրնաւորաց պալատ շքեղ եւ անդոյր,
Քեզ արքայիդ յարդ անպիտան եւ մնսուր:
Ընդփակասուն մարմնովդ ահա բբքաբեր
Ցբրտասառոյց շընչէ Եւրոս անընբեր.
Եւ դու լռես, որ ըշհողմոց սանձ ունիս,
Մերկ եւ ողորմ կողմանեալ դոյզն 'ի խարիս:
Ո՞չ քեւ պրճնին մարգագետինք 'ի կանաչ,
Ծաղկունք չբքնաղ գունագեղին 'ի պաղպաղ.
Ո՞չ տարմք հաւուց քեւ ըզգենուն 'ի փետուր,
Երամք գառին քեւ 'ի գըզաթ ձիւնաթոյր.
Իակ դու աստ Էր 'ի խանձարուրքս գրծուած
Ի ցուրտ քարայր զոփսա կարօտ ըզգեսաուց:
Ես այդոցիկ եմ պարտաւոր վրշտաց, ես.
Ո՜վ լռութիւն, որով յամօթ զիս առնես.
Յանկարծ ըզսիրտ իմ սրբբեիր քեզ 'ի յարկ,
Ըզմեղսասեր բանս այս տրխեղծ և անարգ:

1824

ԴԱՐՁԵԱԼ Ի ԾՆՈՒՆԴ ՓՐԿԶԻՆ

ԵՐԳ

Ահա ընդ ձեզ, հովիւք սուրբք
Փողք եւ տաւիղք ընդ եղեր
Ըզփրկութեան մահացուացս
Հընչեն բարբառ 'ի լուր մեր։
Բանակ թեթեւ լուսերամ,
Սպասեակ գահուն անմահացոյց,
Սաւառնացեալ ընդ այերս
Վերին յուղարկ վայրիջոյց։
Նըսեմաստուեր գիշերոյ
Մութ տարածեալ ահարկու
Գեր զարփնուոյն ծաղանչից
Նորանըշան փայլ առնու։
Զինչ ճառագայթք լուսասփիւռ
Ծագեն յերկիր աներեկ,
Յաղբերականց ծովատիպ
Առեալ ծորան ատրաշէկ։
Վերհինաճեմ սուրբ յարկաց
Գոհար դըրունքքն բանան,
Զոր նախահարց մեղք նախկին
Փակեաց սուսերք հրաբերան։
Ընդ յիշատակ աղետիցն
Աչք իմ ցօղեն արտասուք։
Անիծապարտ հարց սերունդ
Հաղորդ բաղդին չարաշուք,
Յանմահ լուսոյն տարագիր
Յանլոյծ խաւար դժոխոց,
Ցերկնից ցասման վըիժառու
Նըստեալ լային ըզմեծ խոց։

Երկիր դըրախտ բարեբեր
Տըւեալ Նոցա 'ի կոյան,
Յանդ փըշաբեր անիծից
Դարձաւ մացառ եւ խոպան.
Տարեբք համայն խոժոռեալ,
Վերամարտիկք Անմահին,
Մահահրաւէր պատերազմ
Մեղուցելոյն գոռային։
Վիշապն ահեղ անդընդոց
Ի սպառնալիս մահագոյժ
Ըզսայրասուրըն ժանեաց
Հար թունալից վէր անբոյժ։
Ազգ երկրածին ահաբեկ
Բաղկատարած սըրտառուչ,
Ամենաապարտ կոր դիմաք
Եւ յարտասուաց 'ի մրմունջ,
Ազիողորմ մաղթէին
Ջերկնից խընամ մըշտազեղ,
Փըրկել բազկաւ մեծազօր
Զորդւոցըն զարմ բազմամեղ.
«Գոյինաշունչ եմք պատկեր
Աստուածութեանըդ տիպար,
Դրոշմ անտըխեղծ գերապանծ
Կընքեալ մատամբքըդ ճարտար.
Մի զմեզ 'ի սպառ անտեսես
Գոռ թշնամւոյն տալ յաւար՝
Լինել նըմա անպատիժ
Քում պատկերիդ ոտընհար.
Եւ մի 'ի սպառ յաղթեսցէ
Արդարութիւն գըթոյ քում,
Այլ դարձիր, Տէր, դարձ առ մեզ.
Բեկցի ոսոխն ապառում»։
Բաբէ, զնարդ նա 'ի մէնջ
Զարդար զցասումըն շըրջէր,
Թէ ոչ Որդին Ծոցածին
Յաղերս փոխան մեր մատչէր։
Զայրացելոյ Հօրն Հանդէպ
Մերոմս ելեալ առարկու.
Յանձին բարձեալ բովանդակ
Ըզմեղայ բեռն ըզծանու.

« Ցիս, Հայր, ասէ, ահա ես.
Ո՛վ անպատում՝ սէր եւ գութ.
Հայր զիս բազմաց փոխանակ,
Ինեւ անցցէ քո զայրոյթ »:
Եւ դէմք հրացայտ պարզեցեալ
Հաշտ ակնարկեն եւ զուարճ.
Աստուածամուխ սրբեալ նեռք
Դառնան անել՝ի կապարճ:
Աւետաւորք հաշտութեան
Արձակեն զօրք լուսեղէն,
Թռուցեալ ահա խուռներամ
Փաղդրը ձայնիւ նրբագեն.

Երգէ Փառք՝ի բարձունս:

Աւետաւոր զուարթնոցն
Ի ձայն երգոց քաղցրալուր
Զմայլեն հովիւք Բեթլեմի
Հընչեն հովիւք լեառն եւ բլուր:
Նորափետուր զարդարի
Երկիր ծաղկեալ՝ի կանաչ
Ընդ Արարչին իւր ոտիւք
Սրփռեալ նարդոս և կակաչ.
Յաւերժ մայրիք սրգազգեաց
Պըճնեն՝ի գեղ՝ի դալար.
Ծափեն կողերքք սաղարթուն
Մատաղատունկք զուգապար:
Տարերք ուանբան կենդանիք
Խայտան ընդ վեհ իւրեանց բախտ,
Ժառանգք բարեացն ընդ նոսա
Ընդէ՞ր լինիմք ապերախտ:
Ահա առ սէր մեր եւ գութ
Իջեալ բնութիւնն անկարօտ,
Եթող զերկնից ըզդարպաս
Եւ խոնարհի առ մեզ մօտ:
Որոյ գահդքք արքունեացն
Ոսկի փայլեն եւ գոհար,
Հայեաց աղէ՝ի մրսուր
Կայ յաղքատին տաղաւար.
Եւ որ՝ի խրոխտ դարշապար

Ըզխբստաչունչ խեռ հողմոց
Ընկճեալ ըզթեւբս վայրագ
Սահման կարգէ եւ խնարոց,
Եւ զչառաչող ամպրոպաց
Սանձահարէ սեաւ մթրրիկ.
Լեռնակուտակ խուլ ալեաց
Մընչել խոնարհ տայ հեզիկ,
Նոյն ինքն յանարգ 'ի գոմին
Ճըչէ մանուկ ապիկար.
Ընդ լուսեղէն օթոցին
Խանձարրապատ կայ 'ի խար.
Բիւրուց փոխան սրովբէից
Գոլ ժիրաժիր պաշտօնեայ,
Պաճարը 'ի ջերմ շունչ տաճոդ
Սպասաւորեն առ Նըմայ:
Զի՞ մեզ այսքան ածեալ գութ,
Եւ խոնարհել վասն մեր
Ո՞չ ինչ ամօթ՝ համարեալ
Զանշուքդ ըզկերպ յանձն առեր:
Վայելչականըն Մեծիդ
Ո՞ւր են քո փառք ահաւոր,
Որում սրովբէք չհանդուրժեալ
Թեւասքօղեն գըլխակոր:
Ո՞չ ինքն ես դու, որ 'ի մեայլ
Լերինն 'ի ծուխս շառաչող
Փայլակնացայտ երեւեալ,
Տարածեցեր ահ եւ դող,
Եւ յանպատրաստ անդնդոց
Ցարարչագործ 'ի բարբառ
Աստղահանդերձ ձըգեցեր
Զխորան երկնից լուսավառ.
Եւ զվարսագեղ արփենուոյն
Ճաճանչեցեր ոսկի գունա,
Ի լուր ձայնիդ աղդական
Երկնեաց երկիր նոր ծնունդ:
Եւ 'ի հողոյ փըչեցեր
Ըզգեղեցիկըն կենդան,
Տըպաւորեալ 'ի քոյին
Աստուածատիպ կերպարան,
Եւ զի՞ նորոյս ծանր պաքան

Արարչութեանս եղեւ հարկ,
Մինչ խոնարհել բարձրելոյդ
Եւ զիմս առնուլ ձեւ անարգ։
Ո՛վ մահացուաց պարգեւ մեծ.
Հրեշտակք ընդ ձեզ նախանձին,
Եւ ձեր լեզուք գոհաբան
Ի քիմս անչարժ կրցեսցին։

Օրհնէրգ

Ո՛վ Աստուած իմ եւ փրկիչ
Որ 'ի մրսրիս կաս 'ի նինջ.
Սիրա իմ 'ի քեզ գեղանի
Զէր քեզ հիւղս այս արժանի.
Եւ ընդէ՞ր հաճեցար
Առնուլ քեզ 'ի տաճար
Զայս կայեան աղքատին
Փոխանակ ելթերին։

Պերճ ըբռնաւորք 'ի պալատ.
Բազմին 'ի բարձ ոսկեպատ,
Քեզ արքայիդ յարդ եւ խար
Եւ արքունիք ցուրտ քարայր.
Ուր շընչէ ըբքարեր
Ի քեզ հողմն անընբէր.
Եւ լքաւես ներեալ այնց
Որ զհողմոց ունիս սանձ։

Իցիւ 'ի լաւ ըզվիշտ քոյին
Աչք իմ յաղբիւր դառնային.
Յոսկեձեղուն 'ի տաճար
Դրբուաքեցեր դու զաշխարհ.
Եւ ըզհիւղ զայս ցածուն
Ընարեաս արդ քեզ 'ի տուն,
Եւ ունել առընթեր
Զանրանից հօտ ընկեր։

Մերկ եւ ողբմ կողմանիս
Դու յաղքատին 'ի մըսրիս,
Որ 'ի ծաղիկ եւ 'ի խոտ
Ծածկես ըզդաշտ եւ զարօտ.
Որ զհաւուց պըճնես թեւ,
Եւ զգենուն գառինք քեւ
Ի գըզաթ ձիւնախոյր
Եւ չըբնաղ 'ի փետուր:

Ի խանձարուրս 'ի գրձուձ
Զոտիս կարօտ դու զգեստուց.
Իմ իսկ դոցին պարտաւոր
Մեղըբս՝ ելով բիւրաւոր.
Այլ տենչամ փափաքիմ
Թէ յանկարծ ըզսիրտ իմ
Ըզտրխեղծ եւ զանարգ
Ինարէիր քեզ 'ի յարկ:

ՅՈՐԴՈՐԱԿ

Դու 'ի փըրկել զազգ մարդկան
Խոնարհեցար 'ի յերկիր,
Անպարտականդ յանձն առեալ
Լինել ընդ մեր վըշտակիր:
Եւ զո՞ առ քեզ, ով աղէտք,
Զոյս առ մըսրիդ տեսանեմ.
Բացօթէից աղքատաց
Խաշնարածից զազգ նըսեմ:
Մինչ 'ի մահիճս հանգըստեան
Նիրհէր աշխարհ խոր 'ի քուն,
Հեստ ըբռնաւորն ըզդարան
Կազմէր փըրկչիդ յիւրն 'ի բուն.
Նոքա յաղքատ 'ի գոյից,
Զոր անդ եւ հօտ տայր նոցա,
Դաշխուբանաւ մեղը ածեն
Կաթն եւ կոգի քեզ ընծայ.
Այլք ըզգառանց զոյգ մատաղ
Արծաթատիպ 'ի գեսակ

Եւ կեաք զայծից ուլքս գեր
Խայտախարիւ 'ի պիսակ ։
Մանկունք կողով մշրգալից
Ըզսիրելի բեռն 'ի յուս,
Եւ ծաղկանց բոյլս 'ի զամբիղ
Յոտսըդ բերեն կենսատուս.
Դիմեալք հապճեպ խընդալիցք
Եւ պրսակեալք իբր 'ի պար,
Նըւիրաբերք Աբարչիդ
Յերկնահանդէսն 'ի քարայր.
Եւ բերկրախառն արտասուօք
Մանկտին եւ ծերք զուգաձայն
Մատուցանեն ըզհաւատս,
Ընկալ եւ զիմս ընդ նոցայն ։
Երկրպագեմ 'ի սրբոյ
Մանկացելոյդ յաղագս իմ,
Իսրայելին դու Աստուած
Զոր 'ի մշսուրս յայս հայիմ.
Քում ցանկալի տեսութեան
Լեալ նախահարցն ըղձակերտ,
Իսկ ես արդեանցըն ժառանգ
Ակընկառոյց կամ 'ի Տերդ ։
Զոր գոհութիւն մատուցիցս
Ընդ անկըշիռ հնորհիս այս.
Ընկալ ըզսիրտ իմ բեկեալ.
Որ ոչ ունիմ այլ ընծայս.
Եւ ըզծառայս անպիտան
Լից 'ի բարեացդ անեղաղ,
Եւ քեզ հանից գոհութիւն,
Զքեզ օրհնեցից հանապազ ։

1825.

Ի ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՓՐԿՉԻՆ

ԵՐԳ

Որ առ սեմՔս անմատոյց
Աստուածընկալ սուրբ այրին
Յարտօսր 'ի ջերմ սրտակաթ
Լացի զաղէտըս քոյին,
Ոչ եւս հովուաց դեղջէից
Պարզամըտաց զաղջ նըսեմ
Մարդացելոյդ յաղագս իմ
Երկրպագուս տեսանեմ:
Անպատրաստպար ուանպաճոյճ
Անբան հօտիցըն դադար
Պերճապըսակ արքայից
Այժմիկ փոխեալ 'ի տաճար.
Խոյրք եւ պըսակք արքունի,
Ոսկիաճոյլ գաւազան,
Մարգըրտայեռ վարսակալ
Զանշուք սեմՔս 'ի ցիր կան:
Ի ծիրանի ոսկեհուռ
Պըճնեալ արքայք մեծազօր
Յերկիր մաՔեալ 'ի փոշի
Երկրպագեն գըլխակոր:
Եւ 'ի գանձուցըն նըւէր
Լուսաճաճանչ քեզ ոսկի,
Բուրեան աւիշ 'ի Սաբայ
Յոտսըդ սրփռեն տերունի:
Խանձարբաստատ 'ի մըսուր
Ջեղեալ մանուկդ ապիկար
Դաւանելով ըզնոյն ինքն

Որ զեթերին վարեա լար .
Եւ 'ի խըշտեակ խոտեղէն
Գեղջկին 'ի հիւղ աղբատն
Ցհատիչդ երկնի եւ երկրի
Տեսեալ՝ առ քեզ պաղատին :

« Ա՛ռ քեզ, Աստուածդ հըզօր ,
Տար յաշխարհէ յայս երկիր
Ցերկայնուղի անապատս
Հատեալ՝ եկաք 'ի խընդիր .
Քեզ գոհութիւն անընպառ ,
Որ ըզծառայքս անպիտան
Աստեղը ածեալ ճըգեցեր
Հաղորդ բարեացդ անսահման :
Այլ՞ գայաք 'ի մըսրի
Զքեզ տեսանել ցըրտահար .
Ցայս ժողովուրդ քո եւ աղդ
Քեզ փըրկողիդ տան դադար :
Եթէ յանկարծ հաճէիր
Ծնանել առ մեզ 'ի Սաբա ,
Քեզ արքունիք կային կազմ
Գուն դ գտեալինդ պաշտօնեայ .
Ցիարդ մարթէր ընականալ
Մեզ յապարանս ոսկեզարդ
Եւ զիշխեցողդ համայնից
Լըքեալ թողուլ յանարդ յարդ :
Թէ չեղաք այդմ արժանի ,
Գոնեա զբերեալքս առ զընծայս ,
Եւ յանմահիցըդ շնորհեա
Ընդ մահական գանձուցս այս :
Աւետաւորք ահա գնամք
Պատմել ըզքո սքանչելիսդ ,
Երկրըպագուս առնել քեզ
Ցաղգս աշխարհի ստուերանիստ .
Արաբիա ընդ Սաբա
Խոյս խընկանուէր յայսմհետէ
Կըռոցն իւրոց փոխանակ
Քեզ փըրկողիդ զոհեսցէ » :

Բաբէ, զիարդ մեծագոր
Սոքա հաւատս ընծայեն.
Եւ զոր արդեօք չընկալան
Փարթամ պարգեւս առ 'ի քէն։
Եթէ նոքա՞ի քո շնորհս
Անակընկալ ածան քեզ,
Ես հաւատով յոտքս քո
Ինքնեկ՝ ելցիմ անպարդեւ։
Թէպէտ մեղօք պարտաւոր,
Վըշտացդ եմ քոց կարեկիր.
Թէ անարժան եմ շնորհիդ,
Այլ՞ոչ թէ վարձ է քոյդ ձիր։
Ըմպել ցըյաղ փափաքեմ
Ի կենարար աղբերէդ.
Այլ թէ չիցեմ այդմիկ բաւ,
Ի քէն կայլակդ յորդ է դեռ։

1826.

ԵՂԵՐԵՐԴ Ի ՅՈՒԴԱՍ

Զիարդ սակն Սովիերայ
Շլացաւ 'ի դոյն կապարեայ,
Զահն աշխարհի լուսատու
Դարձաւ 'ի մութ ահարկու։
Արտասուելիդ դու Յուդաս,
Պարան 'ի յուս յո՞ երթաս.
Դու աշակերտ Յիսուսի
Զայդ տանիս խաչ 'ի յուսի։
Քո երկնային վարդապետ
Զայդ եռամեայ դաս քեզ եւ,
Մահ յուսահատ մեռանել
Առաքելոյ անընդել։
Վա՜յ քեզ, եղբա՛ւկ արդանդին
Եւ ստեանցն որ զքեզ դիւեցին։
Բիւր երանի թէ չէիր
Բնաւ իսկ ծընեալ 'ի յերկիր։

Որ անմեղին սուրբ արեան
Եղեր անգութ դաւաճան.
Մահն Յիսուսի թէ հարկ էր,
Նըսին մասնին պակասէր։
Սէր արծաթոյն անիրաւ
Ո՜հ, ի՞նչ 'ի քեզ բըռնացաւ.
Այդպէս յանարդ 'ի կըշիռ
Ըզվարդապետ քո եդիր,
Հատուցեալ չար ընդ բարւոյ
Ատելութիւն ընդ սիրոյ։
Վ ըրէժ ահա սպառնալից
Ճայթեսցէ դքեւ 'ի յերկնից.
Քո յուսահատ ապաշաւ
Դարձցի 'ի մեղս եւ 'ի ցաւ.
Քեզ մեղք քոյին մահաբեր
Կացցեն դահիճք առ ընթեր,
Բառնալ յերկրէ դառնաղէտ
Ըզյիշատակ քո յաւէտ.
Եւ 'ի հրալից յալս յաւէժ
Թափել զոգիդ դահավէժ։
Այսպէս, այո՛, կորիցեն
Որ զՏէր մեղօք վաճառեն։

1837.

ԵՂԵՐԵՐԳ Ի ԶԱՐԶԱՐԱՆՍ ՓՐԿԶԻՆ

Ի Գողգոթա եկայք ելցուք
Աչք 'ի յարտօսր ամ մահացուք,
Ցողըրմ տեսիլ եղերական
Աստուածորդւոյն դառըն մահուան։
Արքայն Երկնց ահա ստեղծող
Նըշաւակեալ յանարդ 'ի ձող,
Ցոտից ցըլլուխ վէրք եւ հարուած
Սպիտակ մարմնոյն նիշք են կիսուած.
Եւ ընդ իրանըն՝ կարմրորակ
Հոսէ արիւն կայլակ կայլակ։

Թաղթք երկնատեղծ ձեռացն ոտից
Պատառոտեալ 'ի հեղուսից ,
Ի սայրասուր փշոց պլսակ
Արիւնաներկ գլխին համակ ։
Ո՛վ ձեռք անգութ , սիրտ վիմարդեան
Որ գքեզ հասոյց յայդ կերպարան .
Վասն ո՞ր մեղաց , Աստուած իմ Տէր ,
Յայդ երաշխէպ կաս վշտամբեր ։
Զա՞յդ Իսրայէլ ազգ ըստամբակ ,
Զոր գզգուեցեր մայրօրինակ ,
Բարձեալ իբր հաւ ըզձագս 'ի թեւս
Աչեր յերկիր բազմապարգեւ ,
Ակամակիտ ջուր 'ի վիմաց
Զամբեալ հացիւ երկնատեղաց ,
Զա՞յդ փոխարէն բարեացդ անլուր
Հատուցանէ քեզ 'ի տրիտուր ։
Ա՜հ , զի՞նչ լսեմ ձայն սոսկալի
Սարսուռ յոսկերս իմ հարկանի .
Ո՛չ Իսրայէլ , ոչ նա եւ թէ
Դահիճ ցաւոցս իմ անհեթեթ .
Հայեաց 'ի խաչ այսր ընթերցիր
Արիւնանիշ եւ դքո ոճիր ։

1858 .

Ի ՔՐԻՍՏՈՍԱՊՍԱԿ ՀԱՅՐԱՊԵՏՆ ՍԻՄԵՈՆԻ

ԵՐԳ

Ո՞ր կախ ըզքնարքս ձեր զուռեաց
Նըսակիք Մուսայք Վայոցն 'ի ձոր,
Զեռն 'ի ծնօտի ըզհայրենեաց
Ողբալ զաղէտս արտասուաթոր.
Արիք յազատն 'ի վեր Մասեաց
Կամ Ծաղկեոյ՝ լերինն 'ի ծայր,
Սըրբեալ զաղի վիժակս յաչաց
Կայթս 'ի թեթեւ տուք գարշապար։
Հաչա են ընդ մեզ երեւաք երկնից,
Արփւոյն նըշոյլք գեղաճիճաղ
Եւ աստեղաց բոլոր ցընծալից
Առատաձիր 'ի շող ու 'ի շաղ։
Հովուապետացըն Թորգոմայ
Գօս կըրկնամեռ բուն անյարիր
Կանաչագեղ պըրկեաց ահա
Մեզ յանյուսից բողբոջ ընտիր։
Ահա Սիմեոնն 'ի զահ թափուր
Նոր Դիտապետ երկնապարգեւ.
Զայն Մուսային ազգի 'ի լուր,
Թէ Հայրն 'ի նա բերկրի Պարթեւ։
Եւ զՀայկազանց բազդին սահման
Ճակատագրեալ յաստեղս 'ի ծիր,

* Զի Հայրապետն՝ երգեալ 'ի քերթողէս՝ անուանակիր էր սրբոց Յուրիասանց, որք ծնեցան 'ի Ծաղկեոյ լերին։

Յոսկի քընար յերկնից խորան
Եղանակեն գունդք լուսալիր ։
Դայցեն դարձեալ դարք բարեբախտ ,
Յոր ճիգն անխոնջ նորին երկոց
Ծաղկեցուսցէ անդրէն ի գրախտ
Ըզկորդացեալ երկիր Հայոց ։
Արփի ծագեալ ոսկեհաղոյլ
Այրարատայ բարձր ի կատար .
Եթէ յայգուէ զայս տայ նըշոյլ
Ո՞ր զմիջօրեայն երգեսցէ քնար ։

1826 .

ՅԱՍՏՈՒԱԾԱՀՐԱՒԻՐ
ՑԱԲԲԱՀԱՅՐՆ ՈՒԽՏԻՆ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ԵՐԳ

Ամենակալ Տէր , որ աջովգ ուղղեաս ըզսանձ աշխարհի ,
Եւ ի շարժեալ յօնկոյզ ահիւ ընութիւն համայն սասանի ,
Զկիր ինչ բընաւ դիմադարձ
Ամենազօր քո բազկաց .
Կարող ես դու , եթէ կամիս , և ըզմահուն աւերած
Բազմադիմի քոյին հրաշիւք նորաստեղծուլ ի շիրմաց ,
Որ ի սերմանց տաս պըտուղ
Փուտ յարմատոց նոր ընձիւղ ։
Դու ի նախնումն ընտրեալ հօտիդ սիրեցելոց զաւակին ,
Որ ի Հաւրովթ զուրկ ի հովուէն նըստեր ի կոծ ցաւագին ,
Նոր յարուցեր ըզՄովսէս
Հերձող գետոյն Յորդանէս ։
Դու Տէր եւ արդ շարժեալ ի գութ յաղէտս ընտրեալ քո հօտին ,
Որ զձերունի հօրն ըզչիրմաւ զաճիւնս ի ցող թանսային
Զմեռեալն ի լոյս փոխեցեր ,
Եւ հայր որդւոցն յարուցեր .

Յաղթեցաւ մահ, եւ կոր 'ի գլուխ կայր եւ հայեր 'ի բացուստ,
Զի զոր էառ անդուլթ զինուն աւար շքքեղ եւ հարուստ,
Ետես ընդոյն վերկենցաղ
Յառոյգ 'ի տես 'ի չքնաղ։

1823.

Ի ՀԱՆԴԷՍ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ

ԵՐԿՈՒՑ ՆՈՒԻՐԵԼՈՅ

«Ուրդէ՞ փո՞ ԷԲՐԼ ընորպոանչ յԻՐԼԷՆՈՅ
ՀՈՐՉ ԳԵՂՈՆՈՎ։»

Զահի հարեալ ոչ եւս հընչեն լարք տաւղիս
Եւ յապշութիւն կըրթեցան միտք Մուսայիս.
Զի զոր յանդուգն առնում երգել Ձիթենիս
Զատուած հայիմ անդ ընդ նախնոյն Մուսայից.
Ուչ Ձիթենիք են, զոր սիրեաց Ամենաս,
Եւ կամ թէ վայր գիւցազգեցիկ յայտնութեանց.
Այլ 'ի Քորեբ որ 'ի միջոյ մրրեանց,
Նոյն 'ի սոսա պատգամս տայ մահացուաց։
Նըւիրական զոյգ Ձիթենեացքս տիպար
Մարգարէին նախօրինակ տըպանայր
Յաջ եւ յահեակ 'ի գունսն ոսկի լուսափայլ,
Եօթնաջահեան հնորհօք Հոգւոյն մըշակեալ։
Յանմահական սոքա աջոյն տընկեցան
Գոլ բարգաւաճք յիւր նորակերտ դարաստան՝
Յաստուածաբուղխ արբեալք յուղխոյն 'ի հոսան,
Եւ 'ի զեփիւռ փարեալ 'ի թեւս հոգեկան։
Ընդ հովանեաւ ձեր զովարար ըստուերաց
Հանգչել ցանկայ ազգ տօթակէզ 'ի մեղաց,
Մըշտասաղարթ կողերքդ 'ի ջով բարգաւաճ
Յաւերժասցին յիւրեանց բնութիւն յարաղուարճ։

Աստուածատուր շընորհք մարդկան քաղցելոց,
Հըրճուին նոքա ակընկալուք ձեր պտղոց.
Արդասաւոր ի ընութենէն առեալ ծոց,
Երախտագէտ լիք մըշակին վաստակոց:
Տունկք խոզընձիւզք յերկիր սընեալք արգաւանդ
Որ լուսածնունդ բերէք խայրիս անընդհատ,
Ի խաւարի ներհեալքն յանլոյծ պարաւանդ
Զեօք զարթիցեն յանմահ լուսոյն ճառագայթ:
Զիմենիք սուրբք, զձեզ ազատեին յիւր տապան
Աստուածահաճտ խաղաղութեան բեր նշան,
Բոլորեալիք յաւերժ ի գլուխ մարդկութեան
Անդորրաւէտ կենաց պլսակ անթառամ:

1848.

Ի ՏԻՐԱՆՈՒԷՐ ՆՈՐԸՆԾԱՅՍ ԵՐԻՍ

ՆՈՒԱԳ.

Գարնանաշունչ իրք ի սիւք
Փրթթի մարմանդ վառ ի վառ
Եւ ըլուքք պըճնին ի կատար
Ծաղկապըսակ բոլորիւք,
Հանգոյն եւ մեր բուրաստան
Հըրճուեալ ծաղկամբ գունագոյն,
Բաղբոջք մատաղ սիրասուն
Յերկնառատ ցող ուռճանան.
Ո՞վ դուք ծաղկունք ցանկալի՝
Վարդ, մանիշակ եւ շուշան,
Աչք իմ՝ ի ձեզ հալեցան
Սիրա իմ՝ յեթեր կողկողի.
Մի՛ ձեզ արեւ տօթակէզ
Խեթիւ ցերեկ հայեսցի,
Բոյլք աստեղաց գիշերի
Ակնարկեսցեն քաղցր ի ձեզ.

Զհոս 'ի յերկինս ամբառնամ՝
Ա՛ռ տընկողին ակն անքուն
Ըզձեզ 'ի փշոց անընկուն
Ըզձեզ պահել անթառամ։

1825.

ՅՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅՆ ԹԷՈԴՈՐԻ ԵՒ ՄԻՀԷՐԴԱՏՍՅ ՄԵԾԻՒ ԵՒ Ի ՆԿԱՐԱԳՐՈՂՍ ՆՈՅՒՆ

ԵՐԳ

Ո՛Ս մուսայից սընեալ 'ի գերեզս մանկաւք,
Մատաղերամ համբակք ուշիմք Սոփոկլի,
Զերկնից ուերկրի ըզքաջազանցըն զեղեր
Ճշգրիտատիպ ցուցեալ կըրկին 'ի պատկեր։
Զերկաքանչիւր նոցա մահուն ըզհանդէս
Բարէ, զիարդ այլ ընդ այլոյ տեսի ես։
Հեղի ընդ այս եւ ընդ այն ջերմ արտասուք.
Այլ Թէոդոր, ո՜հ երջանիկ, միւսն եղուկ։
Տեսի 'ի նմա ըզհրաշ սիրոյն երկնաւոր,
Ի սմա զմարդկան տըկարութիւն բնակաւոր։
Զուր, զուր աշխարհ 'ի դիւցազունս իւր պանծայ,
Ի սիրտ արի զուր դիցապաշտն յոխորտայ.
Իբր 'ի դիմակ թատերց է սին երեւոյթ,
Կաց դու վայրիկ մի, եւ լուծցի վաղընդփոյթ։
Զկք յաշխարհի չիք արութիւն ճշմարիտ
Յաստուածապաշտ առաքինւոյն բայց 'ի սիրտ։
Թող ըզհանդէս Միհրդատայ արութեան
Պոնտոս եւ Թրակ հրաչակեսցեն մեծաձայն.
Որ համադրի արեամբ ըզմարգս ոռոգեաց,
Ըզդիակոյտ թուսիզ արկ ուղխից թըշնամեաց։

Հաբ, սոբ, արիւն եւ տարաժամ մրոտայլ մահ
Վատաց ահեղք, ոչ ինչ արկին նըմա ահ.
Զաշխարհազօր սպառազինաց գոռ. ճամբար
Վարկաւ նա հոյլըս մանկրաւոյ ապիկար.
Բզտիեղերս յակըն եղեալ խիզախէր,
Ամլանձնամաղն կայ, աւաղ, 'ի սուսեր.
Ողբմ տեսիլ, մայր առ մանկան դիտապատ՝
Ցաղկանց 'ի տիպ հարեալ 'ի տեղ երկնասատ:
Ո՜հ, ըղբեց՞ ո՞, ո՞ զքաջ դիւցազնըդ պարտեաց
Յայդ ասպարէս վատ եւ անշուք անարեաց:
Բզսէդ Հռոմմայ ոչ դու հարեր վաշտս անհուն
Իբր 'ի ծովու ժայռ ալեսատ անընկնուն:
Ամլ բըռնադոյն բունեալ 'ի սիրոն իւր ոսոխ,
Դըժուարայաղթ կըրից խուժան խառնամէջոխ,
Փառաց անձուկ, սուտ մեծութեանցըն հրապոյր,
Վատ նախանձուն բոց բարկութեան անհամբոյր,
Յայնց կարեվէր դիւցազնըն մեծ պարտեցաւ
Եւ զգերութեան խըզեաց սարիս կենազրաւ:
Զիք յաշխարհի, չիք արութիւն ճըշմարիտ
Յաստուածաշաշ առաքինւոյն բայց 'ի սիրտ:
Դու երկնաձիր կըրօնքըդ սուրբ եւ անախտ,
Դու զճշմարիտ ծնանիս քաջացն եւ անյաղթ.
Քեւ խրախուսեալ վառի հրզօր նահատակ
Լուսաճաճանչ դիտեալ յեմերս ըզպրսակ:
Սէգ առիւծունք ահեղախրոխտք 'ի հանդէս
Իջեալ, հրաւէր տան ոսոխաց յասպարէս:
Արիւնոռոգ մարգաւորունք վըկայեն
Սպիտակափառ սուրբ ոսկերաց նըկարէն:
Ո՜հ, վըկայէ եւ իմ արին Թէոդոր,
Զոր աստ տեսի գունեալ յարեանն 'ի բոսոր.
Յաղնըւազարմ հեղակաց ըոյս եւ քաղցՀ,
Կոխեալ զփառաց առ ոտն ըղխուլթ եւ ըզխոչ,
Եւ զփափկասուն մարմին տըկար նորատի
Սիրոյն 'ի հնոց ձուլեալ 'ի խիտ երկաթի,
Ի հուր 'ի սուր դիմէ անահ 'ի գելոց
Թինդբս տըւեալ որպէս զըւարճ 'ի ծաղկոց:
Ամկաւ եւ նա, յարեան իւրում թաւալի.
Ամլ՝ով արիւն սուրբ, անմահից ցանկալի.
Դիւաց սարսուռ եւ թըշնամեաց ահարկու.
Արեամբն այնուիկ եհար զնոցին մարտ հռաժկու:

Թէոդորէ , հասեր ում իդձ լինէիր
Զծեր եղեալ փրրկողն քեզ խաչակիր ։
Յողբերգական քո հանդիսիդ 'ի պատկեր
Զարտօսր աչաց ոչ անիայեմ առ քո սեր .
Թրուռեար 'ի մէջ յաստեղազարդ յերկնից ծիր ,
Յանկարծ եւ զմեզ մահակից քեզ առնէիր ։
Զայս խանդ ոգւոց , մանկտի մատաղ ելոյց ցիս
Ճշդրիտատիպ նրկար ձերոյ հանդիսիս ։
Կեցցէք յաւէրժ , եւ զոր ցուցէք 'ի թատեր ,
Ըզսիրոյն բոց տարցէք անշէջ 'ի սիրտ ձեր ։

1829 .

ՅՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ԹԵՄԻՍՏՈԿԼԵԱՅ

Ե Ր Գ

Յառաքինւոյն ծոց
Փառացըն պերճ բոց
Եւ աղէն գորով եթէ վառի ,
Ոչ եւս 'ի տիպար
Մարդոյ տրկար
Իջանէ 'ի դաշտ մարտիկն արի ։

Բոցատիպ շողեալ
Սուսերացըն փայլ
Պրսակ ոսկեկապ վառի նրմա .
Մարտին ասպարէզ
Զբաւարճ պարտէզ
Եւ բոսոր արեան ծաղիկ ցոլայ .

Ոչ ամպք բարկաճայթ
Կայծականց 'ի ցայտ ,
Ոչ երկիր ժայթքեալ հուր ըզնովաւ ,
Սասանի երբէք
Սիրտն ահաբեկ .
Ի փառացըն մահ լեալ գիմադրաւ ։

Ո՜վ բաղդ նախանձոտ
Ո՜վ կոյր եւ յողդողդ,
Ընդ առաքինեւոյն 'ի զուր մերցիս.
Քաջութեամբ անխոց
Զգաստից քոց
Իբրեւ ժայռ ընդ ծով վանէ զալիս։

Ոչ բաղդ միայն քեզ,
Ո՞ Թեմիստոկլէս,
Այլ եւ հայրենիդ աշխարհ ընկիկ
Բազկաւ քով փերկեալ
Քեզ դարանեալ,
Ընդերկողդ արար տարաշխարհիկ։

Դու մի վրհատիր,
Հայեաց դու դարձիր.
Ահա կողկողին առ ոտիւք քով
Բաղդ քո եւ աշխարհ
Կոր եւ խոնարհ
Անոխակալիդ ածեալ գորով։

1825.

Ի ԴԱՐՁ ԱՍՊԵՏԻՆ

ՆՈՒԱԳ

Թէ ընդ ոլորտս երկրի պատիս եւ ծովու,
Թէ ընդ այերս հերձուս շաւիղ ամպաչու,
Հոգւոյ 'ի տիպ որ 'ի մարմնոյն կայ բաժան՝
Ատա է քո սիրտ անչուշտ դարձիդ գրաւական։
Զուր յուսացաւ յիւրն 'ի տեսիլ գեղաւոր
Որսալ ըզքեզ համբաւատենչն Վոսփոր.
Եւ յոր Դանուբ պանծայ քաղաք մեծամուր
Զուր ջանացաւ ձրգել ըզքեզ 'ի հրապոյր։

Սիրտ վերհազին հարեալ 'ի սեր միանգամ
Ոչ եւս յեղուն մնաքն 'ի խորհուրդքս տարտամ,
Ե՛կ ապա եկ ցաւուն 'ի հիւղս յայս հանգիր՝
Սիրտ 'ի մարմին դարձցի անդրէն հոգեկիր.
Աստ ոչ խօսունք եւ եթ սիրոյն 'ի բարբառ
Այլ եւ պատուարք ըզքեզ կարդան բարեբար։

1815.

ԵՐԳ Ի ԽՍՏՈՐՆ ԲՌՆԱՅԱՆԳ

Երգիծաբանըդ դու քերթող
Բրոնազբօսեալ յանգիցդ 'ի տող
Ըզխստորոյ առջիր ներբող՝։

Ո՛վ սուրբ երկիր, որ ջերմ 'ի սպասոյ
Տածէ ըզգունեան բոյս ելոյ ջրոյ.
Ի պիղծ ժահիցքն պաղբահոտ
Համեմ անոյշ եւ ջերմայոտ.
Աղգ ազգ համեմք մեղմ ելոյ՝ հոտոյ՝
Այլ առ սու

համայնն է ելոյ։
Ախորժահամըդ դու խրոտոր,
Կարօտ քեզ խահ է պաղրոնոր.
Քեզ խորտկաճաշ եղեալ պնայոտ
Մաղթէ կոկորդ ձայնիւ խրոտոտ,
Մէ 'ի բերանն յոլովմրոնդ
Մատչիր ազգին այն խորոխաղնդ.
Մինչեւ յիւրոց խորտկաց պաղոտոյ
Տացէ նա վրէժ հեղձամղնդոյ։

1825.

* Քանզի 'ի նոյն 'ի բռնայանդս պարսաւ դխստորոյ յօրինեալ էր պալաս ուրուք քերթողի։

Ի ԾՆՈՒՆԴ ՊԵՐՃԱՓԱՅԼ ՏԻՒԶԵԱՆ ՊԱՅԱԶԱՏԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՆՈՒԱԳ

Ցուրախութեան մեզ զայս բաժակ
Ի փրփրադէզ փայլուն վիժակ
Թէ դեռաւէին մանուկ պաշտէ
Ցինչ յաւագոյթն երբ եկեսցէ։
Աբուսեկին փայլմանն ըզհետ
Ծագեալ արփւոյ մանկիկս հանդէս,
Եթէ այսպէս պայծառ յայդուէ
Ցուրախարար ճաճանչ սրփռէ,
Ի՞նչ 'ի փառացն հասեալ'ի ծայր
Նշշղեսցէ ակնապարար։
Կեցցէ ապա կեցցէ Յոննիկ,
Ազգիս Հայոց յոյս դեղեցիկ.
Կեցցեն եւ զնա որք մեզ ետուն
Երկնապարգեւ Տիւզեանցն ընդ տուն.
Եւ որչափ շնթք են յայս բաժակ
Լիցին որդիք իւր եւ թոռնեայք։

1837.

ՏԱՊԱՆԱԳԻՐՔ

Մարեմ՝ Յարութեան դուստրը դեղեցիկ
Ազուտիկ զարմին դեռափթիթ ծաղիկ.
Վաղ բուրեալ ըզհոտն անուշից յերեր,
Ըղձակալթ ձրգեաց զերկնաւորս յիւր սէր։
Միամեայ յերկրէ կլտրեալ տարաժամ,
Ի վերինն Եդեմ փրթիթի անթառամ՝
Անմահ ծաղկոցին ընդ բոյլոս ծաղկանց
Պըճնողին ըզնա 'ի վայելս անանց։
Մի դու մահացուդ ըզսորայն լար բաստ
Այլ զորս արտասուօք աւանդ եղուն ասա.
Սըրտիցն ըզհատոր, զարմին մրխիթար,
Ծածկեալ ընդ վիմով ծնօղքն թրչուառ,

1834.

Ի խորասանՃեան զարմէն դեղաղէշ
Վարդուհի տիկին բողբոջեալ ուղէշ,
Յանողորմ մահուն հարեալ 'ի կլտրոց՝
Մարմնովն 'ի յերկրի, ինքն ընդ զբարթնոց։
Պանդխտեալ ամօք եօթնեկի տասամբ,
ՎերՃեմեալ յերկրէ թաթաւուշ արդեամբ,
Որդիքն իւր հընդեակ որբացեալ 'ի թուխ,
Հողոյ տան ըզմայրն ասա արտօսրաբուխ։
Անցաւորդ, եւ քեզ այս թէ կայ սահման,
Ի շիթս արտասուաց թացցես զայս տապան։

1824.

Ի ծագել խաչին արփիաճճանչ,
Ելեալ 'ի լերմէ փիւնիկ նորաբանչ,
Գէորգեայ որդի Անտոն Սամանճեան
Պատանի ըզգօն տիոցն յաղթական :
Ազգատոհմին փառք , սիրուն Համայնից ,
Վերառեալ կանուխ զուարթնոց խըմբակից :
Համազգիքն ողջոյն յողբ անմըխիթար
Լացին զազգասէր նախանձուն տիպար .
Մայրն եւ հարազատք յարտասուաց ալիս
Ցոգւոցն ըզհատոր տան աւանդ վիմիս :

1851 .

Խոտիկեան
Միքայելի եւ Սրբուհւոյ
Եռամեան հիւր ցանկալի
Մանկիկն Յովհաննէս՝
Ցնոդացն սիրտ գողացեալ
Ծածկի ընդ վիմաւս
Յոյսն ազգատոհմին

1844 .

ՊԵՏ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ՍՍՐ Ա.
Ի Մեծ. Մասնաճյուղ
Ս. ԹԱՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2114

2013